

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ



1. **ԱՆԱՀԻՏ ՄԱՆԱՍՅԱՆ**
Սահմանադրության պաշտոնական մեկնաբանության առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում 2
2. **ԱՐՄԵՆ ԱՍԱՏՐՅԱՆ**
Իրավունքի գերակայությունը որպես իրավունքի էությունից և հատկանիշներից բխող հիմնարար սկզբունք 10
3. **ԱՐԱՄ ԳՅՈԺԳՅԱՆ**
Հարկային գործակալի պարտականությունների չկատարման օբյեկտիվ հատկանիշների հիմնախնդիրները 15
4. **ԱՐՄԵՆ ՍԱՐԴԱՐՅԱՆ**
ԱՊՊԱ պայմանագրի գնի և այն չկնքելու համար նախատեսված վարչական պատասխանատվության իրավական պրոբլեմներ 18
5. **ԴԱՎԻԹ ԴԱՎԻԴՅԱՆ**
Պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության սուբյեկտիվ կողմի հասկացությունը 26
6. **ՎԱՐԴԱՆՈՒՇ ՊՈՂՈՍՅԱՆ**
Մարդու խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունքի իրականացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում 31
7. **ԿԱՐԱՊԵՏ ՀԱԿՈՒՅԱՆ**
Հասարակական միավորումը որպես քաղաքացիական հասարակության ինստիտուտ (հասկացությունը և հատկանիշները) 40
8. **ԿԱՐԼԵՆ ԱՍԼԱՆՅԱՆ**
Հեռուստառադիոլուսային թվայնացման օրենսդրական հիմքերը, զարգացման միտումները 45
9. **ԿՈՐՅՈՒՆ ԱՐԵՎՇԱՏՅԱՆ**
Բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքի ամրագրման կարևորությունը երկրի հիմնական օրենքում 49
10. **ՎԼԱԴԻՄԻՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**
Գործը դատական քննության նախապատրաստելու ինստիտուտը իրավական մտքի հուշարձաններում 62
11. **ԳԵՂԱՄ ԳԵՎՈՐԳՅԱՆ**
Մրցակցային իրավունքի սուբյեկտները Եվրոպական միությունում 65

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ >>

ԱՆԱՀԻՏ ՄԱՆԱՍՅԱՆ

ՀՀ սահմանադրական դատարանի նախագահի օգնական,
ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի ասպիրանտ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հայ իրավական մտքի զարգացման արդի փուլում սահմանադրականության և պետության սահմանադրական կարգի ամրապնդումը մեծապես պայմանավորվում է սահմանադրական դատարանի որոշումների ընդունման ու կատարման արդյունավետ համակարգի առկայությամբ: Վերջիններս բացառիկ կարևորություն ունեն հասարակական կյանքի բոլոր բնագավառներում: Ու, չնայած այն հանգամանքին, որ քննարկվող որոշումների ուսումնասիրության ընթացքում առավելապես շեշտադրվում է դրանց դերը իրավական ակտերի՝ Սահմանադրությանը համապատասխանությունը կամ անհամապատասխանությունը արձանագրելու գործում, ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների նշանակությունը չի սահմանափակվում դրանով: Վերջիններիս կարևորագույն գործառնություններից մեկը Սահմանադրության պաշտոնական մեկնաբանությունն է, որի միջոցով երաշխավորվում է Հիմնական օրենքի կայունությունն ու զարգացումը: Ակնհայտ է, որ հիշյալ խնդիրների իրականացման արդյունավետությունը մեծապես պայմանավորված է սահմանադրական դատարանի կողմից կիրառվող մեկնաբանության մեթոդների ճիշտ ընտրությամբ ու սահմանների հստակեցմամբ, ինչն անհրաժեշտ ենք համարում վերլուծել նշված հոդվածի շրջանակներում:

Հարկ է նկատել, որ, չնայած Սահմանադրության մեկնաբանության նպատակով օգտագործվող մեթոդների բազմազանությամբ, վերջինիս սահմանների առնչությամբ գոյություն ունեցող տեսակետները կարելի է ամփոփ ներկայացնել երկու հիմնական մոտեցումների համատեքստում՝ սուբյեկտիվ (ստատիկ) և օբյեկտիվ (դինամիկ): Առաջինը նպատակաուղղված է Սահմանադրության «տառին» համապատասխան նորմերի մեկնաբանությամբ, որի հիմնական խնդիրը օրիգինալիզմի կողմնակիցների համար դառնում է նորմի այն բովանդակությունն ու նպատակները

բացահայտելը, որոնք ներկայացվում էին դրա ընդունման ընթացքում, այսինքն՝ սահմանադրի անփոփոխ կամքը վերհանելը: Ի տարբերություն հիշյալ տեսակետի՝ օբյեկտիվ տեսությունը հանգում է սահմանադրական նորմերի բովանդակության բացահայտմանը վերջինիս գործողության ընթացքում գոյություն ունեցող իրականության համատեքստում: Ակնհայտ է, որ հասարակական կյանքը փոփոխվում է սահմանադրի կամքից շատ ավելի արագ, ինչի արդյունքում անհամապատասխանություն է առաջանում սահմանադրական նորմի և իրականության միջև: Վերջինս կարող է վերացվել նոր նորմի ընդունմամբ կամ գործող նորմի բովանդակությունն այնպես բացահայտելով, որպեսզի վերացվի հիշատակված անհամապատասխանությունը: Վերջին դեպքում սահմանադրական նորմը որոշակիորեն կտրվում է սահմանադրի կամքից և սկսում է «սեփական կյանքը»:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ նշենք, որ, ըստ էության, տեսության մեջ և պրակտիկայում Սահմանադրության մեկնաբանության սահմանների տեսանկյունից առանձնացվում է երկու հիմնական մոտեցում: Առաջինը, այսպես կոչված, «մեխանիկականն» է, որը Սահմանադրությունը դիտարկում է որպես «հաստատուն փաստաթուղթ» և որպես ելակետ է ընդունում «հիմնադիր-հայրերի» նպատակների բացահայտումը՝ մեկնաբանության հիմնաքար համարելով Սահմանադրության «տառը», իսկ երկրորդ՝ «կառուցակարգային» մոտեցումը Սահմանադրությունը դիտարկում է որպես «կենդանի փաստաթուղթ» և Սահմանադրության «տառը» սուկ որպես ելակետ է դիտարկում հետագա տրամաբանական եզրահանգումների համար²:

Հետևաբար, քննարկվող հիմնախնդրի առնչությամբ Հայաստանի Հանրապետության օրինակը վերլուծելիս հարկ ենք համարում անդրադառնալ այն հիմնախնդրին, թե ինչ շրջանակներ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

րով պետք է սահմանափակված լինի և այդ առումով ինչ չափանիշներ պետք է հաշվի առնի ՀՀ սահմանադրական դատարանը Սահմանադրությունը մեկնաբանելիս: Մասնավորապես, արդյո՞ք մեկնաբանության նպատակը պետք է լինի սոսկ նորմի ընդունման առնչությամբ սահմանադրի նպատակների վերհանումը, թե՞ անհրաժեշտ է հաշվի առնել նաև վերջինիս գործողության պայմանները, կամ կարելի՞ է արդյոք մեկնաբանության արդյունքում նորմի բովանդակությունը բացահայտել դրա տառացի նշանակությունը սահմանափակող կամ ընդլայնող շրջանակներում:

Չենք կարծում, որ սահմանադրական նորմերի բովանդակությունը բացահայտելու հիմնական չափանիշը պետք է լինի լեզվական առումով վերջիններիս տառացի նշանակությունը: Անկասկած, լեզվական մեկնաբանությունից է սկսվում սահմանադրական նորմերի բովանդակության բացահայտումը, և վերջինս, որպես կանոն, մախորդում է մեկնաբանության այլ միջոցներին: Ինչպես նշում էր Կորկունովը. «Յուրաքանչյուր գրված աղբյուր ներառում է խոսքի միջոցով արտահայտված մարդկային միտք»³: Հետևաբար, Սահմանադրությունը հանդես է գալիս որպես խոսքերով արտահայտված մարդկային մտքի արտահայտություն: Այդ միտքը հասկանալու համար առաջին հերթին անհրաժեշտ է ըմբռնել վերջինս արտահայտող բառերի, խոսքերի նշանակությունը, որոնց բացահայտմանը նպատակաուղղված է լեզվական մեկնաբանությունը⁴: Սակայն, զուտ լեզվական տեսանկյունից հիշյալ բառերի իմաստի վերհանումը երբեմն բավարար չի լինում միտքը ճիշտ ընկալելու համար, քանզի, թեև վերջինս արտահայտող բառերից յուրաքանչյուրն ունի ինքնուրույն նշանակություն, այնուամենայնիվ, այլ բառերի հետ գտնվում է տրամաբանական փոխկապվածության մեջ, ինչի արդյունքում ձեռք է բերում որոշակի և կոնկրետ համատեքստի տրամաբանությանը ենթակա իմաստ: Ուստի, տվյալ պարագայում առաջանում է մեկնաբանության այլ եղանակների կիրառման անհրաժեշտություն:

Տեսության մեջ հիշատակվող և պրակտիկայում կիրառվող իրավունքի մեկնաբանության կարևորագույն եղանակներից մեկը պատմական մեկնաբանությունն է, որի էությունը կայանում է նրանում, որ նորմերի իմաստը վերհանելիս հաշվի են առնվում այն կոնկրետ պատմական հանգամանքները, որոնց պայմաններում ընդունվել է համապատասխան նորմը: Իսկ դա կարևոր նշանա-

կություն ունի նորմի ընդունման նպատակներն ու խնդիրները բացահայտելու, հետևաբար նաև վերջինիս իմաստը վերհանելու համար: Սակայն, հարկ է հաշվի առնել այն, որ իրականությունն անընդհատ փոփոխվում ու զարգանում է, և Հիմնական օրենքը պետք է ի վիճակի լինի համարժեքորեն արձագանքելու հասարակական հարաբերությունների հիշյալ առաջընթացին: Սահմանադրության շրջանակներում օգտագործվում են այնպիսի հասկացություններ, որոնք տարիների ընթացքում ապրել են և կշարունակեն ապրել անընդհատ զարգացում⁵: 21-րդ դարում դրանց ընկալումը նույնը չէ, ինչ, օրինակ, 19-րդ կամ 20-րդ դարերում: Մի շարք հասկացությունների ընկալումն էապես փոխվել է նույնիսկ մի քանի տասնամյակների ընթացքում: Հետևաբար, մեր կարծիքով, դրանք պետք է մեկնաբանվեն այն հանգամանքների համատեքստում, որոնց պայմաններում գործում են: Սահմանադրության շրջանակներում օգտագործվում են նաև, այսպես կոչված, «գնահատողական» նորմեր և հասկացություններ, որոնց իմաստի բացահայտման համար նույնպես անհրաժեշտ է հաշվի առնել հիշատակված հանգամանքները: Օրինակ՝ ՀՀ Սահմանադրության 32 հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր աշխատող ունի արդարացի և օրենքով սահմանված նվազագույնից ոչ ցածր աշխատավարձի, ինչպես նաև անվտանգության ու հիգիենայի պահանջները բավարարող աշխատանքային պայմանների իրավունք: Այնուհայտ է, որ անվտանգության ու հիգիենայի պահանջները ժամանակի ընթացքում կարող են էականորեն փոփոխվել, ու քանզի դրանց բավարարող աշխատանքային պայմանների բովանդակության բացահայտումը պայմանավորված է հենց վերը նշված հանգամանքների իմացությամբ, և կարող է իրականացվել սոսկ դրանց համատեքստում, հիշյալ սահմանադրական նորմի մեկնաբանությունը պահանջում է մեր կողմից հիշատակված այն հանգամանքների ուսումնասիրությունը, որոնց շրջանակներում գործում է սահմանադրական նորմը:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ եթե հիշատակված պայմաններում կոնկրետ իրավակարգավորման առնչությամբ որպես ելակետ ընդունվի սոսկ սահմանադրի կամքը, ապա հնարավոր չի լինի ապահովել Սահմանադրության կայունությունն ու զարգացումը⁶: Հետևաբար, Սահմանադրության մեկնաբանության տեսանկյունից բացառիկ կարևորություն ունի այն պայմանների բացահայտումը, որոնց շր-

ջանակներում գործում է մեկնաբանվող նորմը, և նպատակահարմար չէ սահմանադրական նորմերի բովանդակությունը բացահայտելիս որպես հիմք ընդունել սոսկ վերջիններիս ընդունման առնչությամբ սահմանադրի նպատակները, այլ առավել ընդունելի է Սահմանադրության **դիմամիկ մեկնաբանության** տեսակետը⁷: Վերը շարադրվածն իր հերթին հիմք է տալիս եզրակացնելու, որ քննարկվող հիմնախնդրի տեսանկյունից կարևորվում են նաև Սահմանադրության մեկնաբանության մյուս եղանակները:

Անդրադառնալով մեկնաբանության համակարգային եղանակին՝ նշենք, որ կասկածից վեր է այն, որ Սահմանադրությունը հանդիսանում է որոշակի ընդհանուր համակարգի բաղկացուցիչ մաս և գործում է ոչ թե այդ համակարգի այլ տարրերից մեկուսացված կերպով, այլ սերտորեն փոխկապված լինելով վերջիններիս հետ, ինչը ենթադրում է նաև դրանց ընկալումների միջև փոխկապվածության առկայություն⁸: Սահմանադրության՝ որպես ընդհանուր համակարգի բաղկացուցիչ մասի հանդես գալու հանգամանքը դրսևորվում է մի քանի մակարդակներում, հետևաբար, համակարգային եղանակի կիրառման դեպքում վերջինիս մեկնաբանությունը կարելի է իրականացնել մի քանի հարթությունների տեսանկյունից: Առաջին մակարդակը ՀՀ իրավական համակարգն է: Հաշվի առնելով ՀՀ Սահմանադրության 6 հոդվածը, համաձայն որի Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ և նրա նորմերը գործում են անմիջականորեն, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 1 հոդվածը, որին համապատասխան սահմանադրական արդարադատություն իրականացնելիս սահմանադրական դատարանն անկախ է և **ենթարկվում է միայն Սահմանադրությանը**, կարծում ենք, որ Սահմանադրության համակարգային մեկնաբանության տեսանկյունից առաջնային ու կարևորագույն հանգամանքը սահմանադրական նորմերի միջև գոյություն ունեցող կապերն են: Ակնհայտ է, որ սահմանադրական ցանկացած նորմ հանդիսանում է Սահմանադրության միասնական ու ամբողջական համակարգի բաղկացուցիչ մասը՝ սերտորեն փոխկապված լինելով սահմանադրական այլ դրույթների հետ: Հետևաբար, սահմանադրական յուրաքանչյուր նորմի բովանդակության բացահայտումն իրականացվում է ոչ միայն վերջինիս բառացի ընկալման, այլև հիշատակված նորմերի միջև տրամաբանական կապերի վերաբերյալ գի-

տելիքների կիրառման հիման վրա: Այլ կերպ ասած՝ նորմի բովանդակությունը ճիշտ ընկալելու համար վերջինիս, այսպես կոչված, «սեփական» իմաստը համադրվում է այլ նորմերի բովանդակության հետ⁹:

Հիշյալ հիմնախնդիրը ՀՀ իրավական համակարգի հարթությունում վերլուծելիս անհրաժեշտ է հաշվի առնել և այն, որ մի շարք հարաբերությունների կարգավորման առնչությամբ Սահմանադրությունը հղում է կատարում տարատեսակ օրենքների¹⁰: Կարծում ենք, որ մեկնաբանության քննարկվող եղանակը ենթադրում է համապատասխան սահմանադրական նորմերի իմաստի վերհանումը վերջիններիս համատեքստում¹¹: Ասվածը, սակայն, չի նշանակում, որ հիշատակված օրենքները կարող են նախատեսել ցանկացած կարգավորում: Բոլոր դեպքերում ելակետային պետք է լինի այն, որ վերջիններս իրենց հերթին համապատասխան են սահմանադրական պահանջներին ու կոնկրետ իրավակարգավորումն ամրագրեն դրանց շրջանակներում¹²:

Քննարկվող համատեքստում հիշատակման են արժանի նաև ՀՀ իրավական համակարգի բաղկացուցիչ մասը հանդիսացող միջազգային-իրավական փաստաթղթերը, մասնավորապես ՀՀ կողմից վավերացված միջազգային պայմանագրերը՝ հաշվի առնելով վերջիններիս տրված առանձնահատուկ կարգավիճակը, երբ Սահմանադրությանը հակասող միջազգային պայմանագրերը չեն կարող **վավերացվել**, ու եթե **վավերացված միջազգային պայմանագրում** սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը¹³: Նշենք, որ հիշյալ հանգամանքն առնչվում է նաև սահմանադրական նորմերի մեկնաբանության համար նշանակություն ունեցող հաջորդ հարթությանը, այն է՝ միջազգային իրավունքին: Այդ առումով, բացի հիշատակված միջազգային պայմանագրերից, ՀՀ սահմանադրական նորմերի բովանդակության բացահայտմանը կարող են նպաստել նաև միջազգային-իրավական այլ փաստաթղթեր, ինչը, սակայն, ներկայացված հանգամանքների համեմատությամբ ունի օժանդակ նշանակություն:

Անդրադառնալով քննարկվող հիմնախնդրի տեսանկյունից կարևորություն ներկայացնող հաջորդ հարթությանը՝ նշենք, որ քանզի ՀՀ իրավական համակարգն ընդգրկված է աշխարհի իրավական քարտեզի շրջանակներում, ՀՀ Սահմանադրության մեկնաբանությունը կարող է իրակա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

նացվել նաև վերջինիս համատեքստում, և սահմանադրական նորմերի բովանդակությունը բացահայտելիս որպես օժանդակ միջոցներ կարող են օգտագործվել տարբեր իրավական համակարգերում գտնված լուծումները կոնկրետ հիմնախնդիրներին¹⁴ :

Անփոփելով վերը շարադրվածը՝ ընդգծենք, որ Սահմանադրության համակարգային մեկնաբանության տեսանկյունից առաջնահերթ նշանակություն ունի **սահմանադրական նորմերի բովանդակության բացահայտումը դրանց միջև եղած տրամաբանական կապերի համատեքստում**: Հիշատակված այլ հանգամանքները վերջինիս համեմատությամբ ունեն ածանցյալ, օժանդակ նշանակություն և կարող են սոսկ նպաստել քննարկվող նորմերի իմաստը վերհանելուն:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ համակարգային մեկնաբանությունը հանդիսանում է մեկնաբանության կարևորագույն եղանակներից մեկը, որը հնարավորություն է տալիս ոչ միայն սահմանադրական նորմերի բովանդակությունը բացահայտել համակարգի այլ տարրերի հետ փոխկապվածության համատեքստում, այլ մեկնաբանության ընթացքում հաշվի առնել այն պայմանները, որոնց շրջանակներում գործում է կոնկրետ նորմը, և իրականացնել Սահմանադրության **դինամիկ մեկնաբանություն**:

Թեև արդեն ներկայացրինք մեր այն տեսակետը, որ սահմանադրի կամքը և սահմանադրական նորմերի տառացի նշանակությունը չպետք է լինեն վերջիններիս բովանդակության բացահայտման միակ ելակետը, և վերլուծեցինք Սահմանադրության դինամիկ մեկնաբանության շրջանակներում կիրառվող մեկնաբանության եղանակները, սակայն այդ համատեքստում շարունակում է վիճահարույց մնալ այն հարցը, թե ինչ սահմաններում պետք է գործի ՀՀ սահմանադրական դատարանը սահմանադրական նորմերի բովանդակությունը բացահայտելիս, մասնավորապես կարող է արդյոք վերջինս փոփոխություններ մտցնել հիշյալ նորմերի բովանդակության շրջանակներում: Առաջին հերթին նշենք, որ, մեր կարծիքով, ՀՀ սահմանադրական դատարանն իր գործունեությունն իրականացնելիս, մասնավորապես Սահմանադրությունը մեկնաբանելիս ստեղծում է իրավական նորմեր: Այդ մասին են վկայում «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի դրույթները, մասնավորապես, 11-րդ հոդվածի 3-րդ մասը, համաձայն որի ՀՀ սահմանադրական դատարանն ընդունում է միայն **նորմատիվ**, ան-

հատական կամ աշխատակարգային որոշումներ, ինչպես նաև 2-րդ հոդվածի 3-րդ մասը, որին համապատասխան նորմատիվ իրավական ակտը... պաշտոնական գրավոր այն փաստաթուղթն է, որն ուղղված է իրավական նորմի կամ նորմերի սահմանմանը, փոփոխմանը կամ գործողության դադարեցմանը: Իրավական ակտը համարվում է նորմատիվ, եթե պարունակում է թեկուզ մեկ իրավական նորմ: Հետևաբար, ՀՀ սահմանադրական դատարանն այլ բնույթի ակտերի թվում ընդունում է նաև նորմատիվ որոշումներ՝ այդպիսով ստեղծելով իրավունքի նորմեր: Սակայն նոր նորմեր ստեղծելու հանգամանքը պարտադիր չէ, որպեսզի ենթադրի գործող կարգավորումներից չբխող նոր կարգավորում ստեղծելու միջոցով դրանց իմաստի փոփոխություն: Մեր կարծիքով, ՀՀ սահմանադրական դատարանի կողմից Սահմանադրության մեկնաբանության արդյունքում ստեղծվող նորմերի նպատակը պետք է լինի գործող սահմանադրական կարգավորումների համատեքստում վերջինիս բովանդակությունը բացահայտելը, սակայն ոչ հիշատակված շրջանակներից դուրս դրանում փոփոխություններ մտցնելը: Դա բխում է ՀՀ սահմանադրական կարգավորումների տրամաբանությունից: Մասնավորապես, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սահմանադրությունը հանդիսանում է կենսագոյի հիմնական կանոնների շուրջ **հասարակական համաձայնություն** և որպես այդպիսին ամրագրում է իրավական այն հիմնարար արժեքներն ու սկզբունքները, որոնք բնորոշ են սոցիալական հանրության պատմական տվյալ փուլին, սահմանադիրը նախատեսել է այլ իրավական ակտերի համեմատությամբ ՀՀ Սահմանադրության ընդունման ու փոփոխման բավականին բարդեցված կարգ՝ հստակորեն սահմանելով հիշյալ գործընթացի շրջանակներում ընդգրկված սուբյեկտներին¹⁵ : Այդ հանգամանքը կարող է հանգեցնել այնպիսի եզրակացության, որ ՀՀ Սահմանադրության զարգացումն անհնար է վերջինիս տեքստում փոփոխություններ կատարելու ներկայացված եղանակից տարբերվող այլ եղանակով: Սակայն, մեր կարծիքով, վերը նշված կարգավորումն ամրագրելով՝ սահմանադիրը նպատակ է հետապնդել ոչ թե ընդհանրապես արգելելու Սահմանադրության զարգացումն այլընտրանքային եղանակներով, այլ բացառել է **այլ սուբյեկտների կողմից Սահմանադրության փոփոխումը գործող սահմանադրական կարգավորումներից չբխող նոր կարգավորում ստեղծելու** միջոցով: Այլ կերպ ասած՝ Սահմանադրությունը մեկնաբանելիս ՀՀ

սահմանադրական դատարանը չի ստեղծում գործող սահմանադրական կարգավորումներից չբխող նոր կարգավորում, այլ սահմանադրական նորմի բովանդակությունը բացահայտում և առաջացած կոնկրետ սահմանադրական հիմնախնդրի լուծումը վեր է հանում սահմանադրական գործող կարգավորումներից՝ պահպանելով «ողջամիտ ինքնասահմանափակման» պահանջը¹⁶: Այդ առումով հարկ ենք համարում հիշատակել նաև ամերիկյան սահմանադրական դոկտրինի շրջանակներում արտահայտված այն տեսակետը, որ Սահմանադրությունն ինքը պետք է լինի այն սահմանը, որի շրջանակներում մեկնաբանողը կարող է բացահայտել վերջինիս նորմերը¹⁷: Քննարկվող հիմնախնդրի տեսանկյունից հետաքրքիր է նաև Հունգարիայի սահմանադրական դատարանի կողմից Սահմանադրության մեկնաբանության առնչությամբ ձևավորված պրակտիկան, համաձայն որի Սահմանադրական դատարանը գործում է իշխանությունների տարանջատման սկզբունքի հիման վրա. այն իր վրա չի վերցնում օրենսդրական գործունեության գործառնությունները, այլ կոնկրետ սահմանադրական հիմնախնդրի պատասխանը փնտրում է Սահմանադրության շրջանակներում¹⁸:

Հետևաբար, մեկնաբանության սահմանների առնչությամբ քննարկվող հիմնախնդրի վերաբերյալ հիմնական եզրահանգումն այն է, որ ՀՀ սահմանադրական դատարանը Սահմանադրությունը մեկնաբանելիս հիմք է ընդունում ոչ միայն սահմանադրական նորմերի տառացի նշանակությունը կամ սահմանադրի կամքը, այլև վերջիններիս բովանդակությունը բացահայտում է մեկնաբանության հիշատակված բոլոր եղանակները կիրառելու միջոցով՝ մեկնաբանությունն իրականացնելով գործող սահմանադրական կարգավորումների շրջանակներում՝ հաշվի առնելով, այսպես կոչված, «ողջամիտ ինքնասահմանափակման» պահանջը և իր գործունեությունն իրականացնելով դրա շրջանակներում: Այլ կերպ ասած՝ սահմանադրական դատարանը չի ստեղծում գործող սահմանադրական կարգավորումներից չբխող նոր կարգավորում, չի վերացնում դրանք, այլ մեկնաբանության հիշատակված եղանակների միջոցով սահմանադրական նորմի բովանդակությունը բացահայտում և առաջացած կոնկրետ սահմանադրական հիմնախնդրի լուծումը վեր է հանում սահմանադրական գործող կարգավորումներից:

Այդ հանգամանքի և սահմանադրական կար-

գավորումները փոփոխող նոր կարգավորում ստեղծելու տարբերություններն առավել հստակ մատնանշելու համար դրանք հարկ ենք համարում վերլուծել Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական արդարադատությունն իրականացնող մարմնի պրակտիկայի համատեքստում: ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 4 փետրվարի 2011թ. ՍԴՈ-934 որոշմամբ անդրադառնալով ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետում ամրագրված՝ «գլխավոր դատախազի վարույթում գտնվող կոնկրետ գործ» արտահայտության սահմանադրաիրավական բովանդակության բացահայտմանը՝ արձանագրեց, որ քրեադատավարական առումով ՀՀ օրենսդրությունը չի հստակեցրել «ՀՀ գլխավոր դատախազի վարույթում գտնվող կոնկրետ գործ» հասկացությունը: Հետևաբար, վերջինս չի կարող մեկնաբանվել ճյուղային-իրավական մեթոդաբանության կիրառման հիման վրա, և անհրաժեշտ է այն մեկնաբանել դրա սահմանադրական նշանակությանը համապատասխան՝ ՀՀ դատախազության սահմանադրական լիազորությունների շրջանակներում: Դատարանն ընդգծեց, որ կոնկրետ դատական սահմանադրական վերահսկողության ձևի կիրառման շրջանակներում ՀՀ Սահմանադրությունը ՀՀ սահմանադրական դատարան դիմող սուբյեկտ ճանաչելով ՀՀ գլխավոր դատախազին՝ առաջին հերթին հաշվի է առել Սահմանադրության 103-րդ հոդվածի 1-ին մասի այն դրույթը, համաձայն որի «Հայաստանի Հանրապետության դատախազությունը միասնական համակարգ է, որը ղեկավարում է գլխավոր դատախազը»: Ուստի, սահմանադրաիրավական առումով «գլխավոր դատախազի վարույթ» հասկացությունը համարժեք է «ՀՀ դատախազության վարույթ» հասկացությանը:

Ակնհայտ է, որ վերը նշված գործի շրջանակներում ՀՀ սահմանադրական դատարանը, կիրառելով մեկնաբանության հիշատակված եղանակները, կոնկրետ սահմանադրական նորմին տվեց դրա տառացի նշանակությունից տարբերվող մեկնաբանություն: Սակայն դրանով դատարանը ոչ թե ստեղծեց գործող սահմանադրական կարգավորումներից չբխող նոր կարգավորում, այլ նորմի բովանդակությունը բացահայտեց և առաջացած սահմանադրական հիմնախնդրի լուծումը վերահանեց դրանց շրջանակներում: Այլ կլիներ իրավիճակն այն դեպքում, երբ սահմանադրական դատարանն ամրագրեր հիշատակված դիրքորոշումը, սակայն այդ եզրահանգումը չբխեր

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

սահմանադրական այլ նորմերի համադրված վերլուծությունից և հիմնախնդրին առնչվող կարգավորումների տրամաբանությունից: Տվյալ պարագայում խոսք կզգար ոչ թե սահմանադրական նորմի մեկնաբանության, այլ գործող կարգավորումներից չբխող նոր կարգավորում ստեղծելու մասին: Ուստի, հենց վերը նշված հանգամանքն է անհրաժեշտ հաշվի առնել քննարկվող հասկացությունների իմաստն ու դրանց գործողության շրջանակները վերլուծելու ու տարբերակելու ընթացքում:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ ՀՀ սահմանադրական դատարանի կողմից Սահմանադրության մեկնաբանությունն ու վերջինիս շրջանակներում «ողջամիտ ինքնասահմանափակման» սկզբունքի պահպանումը ենթադրում են սահմանադրական նորմի բովանդակության բացահայտումն ու առաջացած սահմանադրական հիմնախնդրի լուծման վերհանումը գոյություն ունեցող սահմանադրական կար-

գավորումներից, և այդ ընթացքում մեկնաբանության եղանակների ոչ թե մեկուսացած, այլ փոխհամաձայնեցված օգտագործում: Ընդ որում պարտադիր չէ, որպեսզի Սահմանադրության մեկնաբանությունը լինի տառացի: Այն կարող է լինել նաև տարածական¹⁹ կամ սահմանափակ²⁰: Սակայն բոլոր դեպքերում այդ մեկնաբանությունը պետք է լինի այնպիսին, որպեսզի վերջինիս շրջանակներում ապահովվի ՀՀ Սահմանադրության կայունությունը, զարգացումը, գերակայությունն ու անմիջական գործողությունը՝ որպես ելակետ ունենալով այն հանգամանքը, որ մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են, և հիմք ընդունելով իշխանությունների բաժանման ու հավասարակշռման սկզբունքի ապահովման անհրաժեշտությունը:

¹ Այդ առումով հիշատակման է արժանի Ավստրալիայի Սահմանադրության մեկնաբանության առնչությամբ իրավաբանական գրականության մեջ արտահայտված տեսակետն այն մասին, որ Հիմնադիր-հայրերից շատերն իրենք էին Սահմանադրությունն ընկալում որպես զարգացող փաստաթուղթ, որն ապագայում կարող է կիրառվել այնպիսի իրավիճակների առնչությամբ, որոնց վերաբերյալ նրանք չէին կարող պատկերացում ունենալ: Հետևաբար, Դատարանը պետք է ապահովի, որպեսզի Սահմանադրությունը «սերնդեսերունդ հարմարեցվի փոփոխվող հանգամանքներին»՝ այլ կերպ ասած՝ «մեկնաբանվի ժամանակի պահանջներին համապատասխան» (տե՛ս Zines L. Dead Hands or Living Tree? Stability and Change in Constitutional Law // [2004] AdelLawRw 2; (2004) 25(1) Adelaide Law Review 3 (<http://www.austlii.edu.au/au/journals/AdelLawRw/2004/2.html>)):

² Տե՛ս Гаджиев X. Толкование норм Конституции и закона конституционными судами. Баку, 2002. էջ 128-129, Wolcher L. E. Constitutional Interpretation in the United States and the United Kingdom (http://ivr-enc.info/index.php?title=Constitutional_Interpretation_in_the_United_States_and_the_United_Kingdom), Pavcnik M. Constitutional Interpretation (in Continental Europe) (http://ivr-enc.info/index.php?title=Constitutional_Interpretation_%28in_Continental_Europe%29):

³ Տե՛ս Коркунов Н. М. Лекции по общей теории права. СПб., 1909, էջ 343:

⁴ Այդ առումով հարկ է հաշվի առնել այն, որ Սահմանադրության շրջանակներում օգտագործվում են նաև տարբեր գիտությունների, մասնավորապես տվյալ պարագայում իրավագիտության կողմից մշակված գիտական կատեգորիաներ, որոնք մեկնաբանելիս անհրաժեշտ է հիմք ընդունել ոչ թե դրանց բառացի, այլ համապատասխան գիտության կողմից տրված նշանակությունը:

⁵ Օրինակ՝ «ժողովրդավարություն», «ինքնիշխանություն», «մարդու հիմնական իրավունքներ և ազատություններ» և այլ հասկացությունները:

⁶ Տվյալ պարագայում չենք էլ խոսում այն մասին, որ սահմանադրի կամքի բացահայտումը կարող է չափազանց դժվար ու նույնիսկ անհնար լինել, քանզի վերջինս հանդիսանում է հավաքական կամքի արտահայտություն: Այդ առումով իրավաբանական գրականության մեջ դիպուկ կարծիք է արտահայտվել այն մասին, որ որքան մեկնաբանող գոյություն ունի, գոյություն ունի այնքան էլ անցյալի մեկնաբանություն: Հետևաբար, հղումներն անցյալին ու պատմությանը կախված են ոչ թե օբյեկտիվ հանգամանքներից, այլ մեկնաբանության սուբյեկտի կամայական հայեցողությունից (տե՛ս Уитч Р. Об отсутствии определенности в толковании Конституции // Конституционное право: Восточноевропейское обозрение, N1(38)2002, էջ 32-33): Հենց այդ է պատճառը, որ նույնիսկ ամերիկյան սահմանադրական դոկտրինի շրջանակներում օրիգինալիզմը հաճախ ներկայացվում է որպես ռոմանտիկ հեքիաթ և դիտարկվում է որպես դատարաններին առավել մեծ հայեցողություն տվող տեսություն, քանզի վերջինիս պարագայում դատարաններն օժտված են սահմանադրի նպատակները բացահայտելիս հնարավոր տարբերակների միջև ընտրություն կատարելու չափազանց մեծ հայեցողությամբ (այդ մասին տե՛ս նաև Burgess S.

The Founding Fathers, Pop Culture, and Constitutional Law. Ohio University, USA, Ashgate, reprinted 2009, էջ 13, 38):

⁷ Այդ առումով հարկ ենք համարում հիշատակել իրավաբանական գրականության մեջ արտահայտված այն տեսակետը, որ օրենքը (այդ թվում՝ Սահմանադրությունը) պետք է հաշվի առնի անցյալը, գործի ներկայում և ուղղված լինի դեպի ապագան (տե՛ս Maruste R. The Role of the Constitutional Court in Democratic Society (<http://www.juridicainternational.eu/the-role-of-the-constitutional-court-in-democratic-society>)):

⁸ Այդ առումով հիշատակման է արժանի Լիտվայի Հանրապետության Սահմանադրության 6-րդ հոդվածը, համաձայն որի Սահմանադրությունն **ամբողջական** և անմիջական գործողություն ունեցող ակտ է: Անդրադառնալով սահմանադրական հիշյալ դրույթին՝ Լիտվայի Հանրապետության Սահմանադրական դատարանն ընդգծել է, որ սահմանադրական նորմերի «ամբողջականությունն» առաջին հերթին արտահայտվում է նրանում, որ այդ նորմերը փոխկապակցված են ոչ միայն ձևական առումով, ամբողջական կառուցվածքի տեսանկյունից, այլ նաև բովանդակությամբ: Այդ ամբողջականությունը կայանում է նրանում, որ ինչպես Սահմանադրության նախաբանը, այնպես էլ վերջինիս բաժիններն ու հոդվածները կազմում են բովանդակային ամբողջություն: Հետևաբար, ակնհայտ է, որ կոնկրետ սահմանադրական նորմի բովանդակությունը բացահայտելիս այն չի կարելի մեկնաբանել սահմանադրական այլ դրույթներից մեկուսացված կերպով (տե՛ս Гаджиев Х. Толкование норм Конституции и закона конституционными судами. Баку, 2002, էջ 117):

⁹ Այդ առումով հիշատակման է արժանի իրավաբանական գրականության մեջ արտահայտված այն տեսակետը, որ մեկնաբանության նպատակը ոչ թե Սահմանադրության առանձին սկզբունքների ընկալումն է, այլ դրանց փոխկապակցվածության կամ, առնվազն, համակեցության բացահայտումը: Սահմանադրությունն ամրագրում է տարրեր, որոնք պետք է համադրվեն ամբողջության մեջ, բայց այն չի ներկայացնում ամբողջի կազմակերպված պատկերը: Պատկերավոր ասած՝ Սահմանադրությունը որպես ամբողջություն նախասահմանված երևույթ չէ, այլ հանդիսանում է սահմանադրական քաղաքականության արդյունք (տե՛ս Загребельский Г. Толкование законов: стабильность или трансформация? // Сравнительное конституционное обозрение. N 3(48)2004, էջ 81):

¹⁰ Օրինակ՝ ՀՀ Սահմանադրության 102-րդ հոդվածի համաձայն սահմանադրական դատարանն ընդունում է որոշումներ և եզրակացություններ՝ Սահմանադրությամբ և **սահմանադրական դատարանի մասին օրենքով** սահմանված ժամկետներում և կարգով:

¹¹ Այսպես, ՀՀ սահմանադրական դատարանը 4 փետրվարի 2011թ. ՄԴՆ-934 որոշմամբ արձանագրեց, որ, հաշվի առնելով ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի պահանջն առ այն, որ համապատասխան սուբյեկտները կարող են ՀՀ սահմանադրական դատարան դիմել «Սահմանադրությամբ և սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով», ինչպես նաև 100-րդ հոդվածի պահանջը, համաձայն որի՝ սահմանադրական դատարանն իրավական ակտերի դրույթների սահմանադրականությունը որոշում է «օրենքով սահմանված կարգով», ներկա իրավակարգավորման շրջանակներում, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 3-րդ մասի և 60-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ տվյալ գործի վարույթը ենթակա է կարճման՝ նույն օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ կետի հիմքով:

¹² Հենց այդ է պատճառը, որ Սահմանադրությամբ ամրագրված հիշյալ իրավական ակտերը նույնպես կարող են դառնալ սահմանադրական արդարադատության օբյեկտ և ճանաչվել Սահմանադրությանը հակասող և անվավեր (տե՛ս, օրինակ, ՀՀ սահմանադրական դատարանի՝ 15 ապրիլի 2008թ. ՄԴՆ-751 որոշումը):

¹³ Օրինակ՝ ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 19 հունվարի 2010թ. ՄԴՆ-852 որոշման շրջանակներում անհրաժեշտ համարեց ՀՀ Սահմանադրության 20-րդ մասում ամրագրված՝ անձի՝ իր նկատմամբ կայացված դատավճռի՝ օրենքով սահմանված կարգով վերադաս դատարանի կողմից վերանայման իրավունքի սահմանադրաիրավական բովանդակությունը բացահայտել «... ինչպես նաև նշված իրավունքի կապակցությամբ Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների համատեքստում»՝ Եվրոպական կոնվենցիայի 7-րդ արձանագրության 2-րդ հոդվածում ամրագրված դրույթների վերլուծության և Եվրոպական դատարանի համապատասխան նախադեպային իրավունքի ուսումնասիրության հիման վրա կատարելով այն եզրահանգումը, որ քրեական գործերով բողոքարկման իրավունքի բովանդակությունը հանգում է նրան, որ քրեական գործով անձի դատապարտման կամ նշանակված պատժի վերանայման հնարավորությունը պետք է ապահովվի առնվազն մեկ վերադաս տոյանում (տե՛ս www.concourt.am):

¹⁴ Օրինակ՝ ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 30 հունիսի 2009թ. ՄԴՆ-810 որոշմամբ անդրադարձավ, այսպես կոչված, «կուսակցությունների դատաքության» կանխման տարբեր կառուցակարգային լուծումների առնչությամբ գոյություն ունեցող միջազգային պրակտիկային, մասնավորապես, Պորտուգալիայում, Իսպանիայում, ՌԳ-ում, Ուկրաինայում, Նորվեգիայում, Հնդկաստանում, Հարավաֆրիկյան Հանրապետությունում գտնված իրավական լուծումներին (տե՛ս www.concourt.am):

¹⁵ Տե՛ս ՀՀ Սահմանադրության 8-րդ գլուխը, որը վերնագրված է «Սահմանադրության ընդունումը, փոփոխումը և հանրաքվեն»:

¹⁶ Այդ առումով իրավաբանական գրականության մեջ կարծիք է արտահայտվել այն մասին, որ եթե սահմանադրական դատարանը կամ որևէ այլ մարմին, որը վերջնականորեն մեկնաբանում է Սահմանադրությունը,

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

պատրաստ չէ ինքնասահմանափակվելու, վտանգվում է իշխանությունների տարանջատման սկզբունքը (տե՛ս [Pavcnik M. Constitutional Interpretation \(in Continental Europe\) \(http://ivrenc.info/index.php?title=Constitutional_Interpretation_%28in_Continental_Europe%29\)](http://ivrenc.info/index.php?title=Constitutional_Interpretation_%28in_Continental_Europe%29)):

¹⁷ Տե՛ս Barber S. A., Fleming J. E. Constitutional Interpretation. Oxford University Press, 2007, էջ 172:

¹⁸ Տե՛ս Հունգարիայի Սահմանադրական դատարանի՝ 45/2005 որոշումը, http://www.mkab.hu/admin/data/file/707_45_2005.pdf:

¹⁹ Օրինակ՝ ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետում ամրագրված՝ «գլխավոր դատախազի վարույթում գտնվող կոնկրետ գործ» արտահայտության հիշատակված մեկնաբանությունը:

²⁰ Օրինակ՝ ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 4 մայիսի 2010թ. ՍԳՈ-881 որոշմամբ ՀՀ Սահմանադրության 14.1 հոդվածով ամրագրված օրենքի առջև բոլորի հավասարության սահմանադրական սկզբունքին տվեց սահմանափակ մեկնաբանություն՝ իրավական դիրքորոշում արտահայտելով այն մասին, որ վերջինս ենթադրում է օրենքի առջև հավասար պատասխանատվության, պատասխանատվության անխուսափելիության և իրավական պաշտպանության հավասար պայմանների ապահովում, և **չի առնչվում իրավական տարբեր կարգավիճակ ունեցող սուբյեկտների համար որևէ իրավաչափ նպատակով պայմանավորված նախադրյալներ՝ տվյալ դեպքում սոցիալական անկախության երաշխիքներ նախատեսելու կամ իրավունքի տվյալ կատեգորիայի սուբյեկտների համար լրացուցիչ պարտականություններ սահմանելուն** (ընդգծումը մերն է-Ա.Մ.) (տե՛ս www.concourt.am):

РЕЗЮМЕ

Особенности официального толкования конституции в Республике Армения

В статье рассматриваются методы и границы (пределы) официального толкования Конституции Республики Армения. Автор обосновывает, что воля конституционного законодателя и буквальное значение конституционных норм не должны быть единственной основой раскрытия содержания последних, и что с точки зрения обеспечения стабильности и развития Конституции целесообразным является ее динамическое толкование. В то же время подчеркивается, что эффективное толкование Конституции Конституционным Судом РА и соблюдение принципа “целесообразного самоограничения” при этом предполагают раскрытие содержания конституционных норм и выявление решений конкретных конституционных проблем в рамках действующих конституционных регулирований, а также согласованное, а не изолированное применение способов толкования в ходе этого.

SUMMARY

Peculiarities of the official interpretation of the Republic of Armenia Constitution

The article considers the methods and boundaries of the official interpretation of the Republic of Armenia Constitution. The author substantiates that the will of constitutional legislator and the literal meaning of constitutional norms mustn't be the only basis for revealing the content of the latter, and that from the perspective of ensuring the stability and development of the Constitution it is expedient to apply dynamic interpretation. At the same time it is emphasized that effective interpretation of the Constitution by the RA Constitutional Court and observance of the principle of “efficient self-restraint” during it presuppose revealing the content of constitutional norms and deducing solutions to concrete constitutional problems in the frames of current constitutional regulations, as well as consistent and not isolated application of the interpretation methods during it.

ԱՐՄԵՆ ԱՍՏԻՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և
իրավունքի ինստիտուտի ասպիրանտ



ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԷՈՒԹՅՈՒՆԻՑ ԵՎ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԻՑ ԲԽՈՂ ՀԻՄՆԱՐԱՐ ՄԿՁԲՈՒՆՔ

Ինչպես և ցանկացած հասկացություն, «իրավունքի գերակայություն» իրավական հասկացությունը նույնպես իրենից ներկայացնում է «ճանաչման աստիճանում լեզվի կիրառմամբ աշխարհի արտացոլման, երևույթների ու առարկաների ընդհանրացման ձև (եղանակ)»¹: Այս աշխատանքում կցանկանալիքս խոսել այն մասին, որ, թեև իրավունքի գերակայությունն իրավունքի սկզբունք է, սակայն, կարծես թե, կարիք ունի լրացուցիչ հիմնավորումների: Իսկ ինչու՞ է իրավունքի գերակայությունը համարվում իրավունքի սկզբունք, չէ՞ որ նույն հաջողությամբ կարելի է կառուցել փաստարկներ այն մասին, որ այն իրավունքի սկզբունք չէ: Որպեսզի հստակ և օբյեկտիվ հիմքերի վրա կառուցված դատողություններով կարողանանք պատասխանել այն հարցին, թե ինչու է իրավունքի գերակայությունն իրավունքի սկզբունք և փարատենք հնարավոր կասկածները, անհրաժեշտ է փիլիսոփայական դիրքերից քննարկել իրավունքի գերակայությունը: Խոսքը գնում է իրավունքի՝ որպես հասարակական կյանքի օբյեկտիվ իրողության, «էություն և երևույթ», «բովանդակություն և ձև» փիլիսոփայական կատեգորիաների դիրքերից վերլուծության մասին:

Իրավունքը սոցիալական կարգավորիչ է, հասարակական կյանքի օբյեկտիվ իրողություն: Ինչպես և իրականության այլ իրողություններն, այն ունի իրենում իր էությունը և այդ էության դրսևորումները՝ երևույթները: Իրականության մեջ գոյություն ունեցող իրավունքի ճանաչման ձևերը հասկացություններ են: Իրավունքի՝ որպես հասարակական օբյեկտիվ իրողության տեսական արտացոլման հիմնարար կատեգորիան իրավունքի հասկացությունն է: Ցանկացած հասկացություն որպես իրականության արտացոլման եղանակ, «իրենից ներկայացնում է միտք, որը համարվում է որոշակի դասի առարկաների վերաբերյալ ընդհանրացում ըստ առարկային բնութագրական, տարբերիչ հատկանիշների»: Հասկացության գիտական նշանակությունը մեծ է այնքանով, որքանով որ էական են առարկան ընդհանրացնող հատկանիշները: Փիլիսոփայական-իմացաբանական դիրքերից ամեն մի առարկա և երևույթ իրականում օժտված է անթիվ

բազմազանությամբ, յուրահատկություններով: Այդ իսկ պատճառով հասկացության մեջ ներառվում են այն հատկանիշները, որոնք արտացոլում են ամենաէական յուրահատկությունները: Իրավունքի էության և իրավական երևույթների փոխհարաբերությունը իրավունքի փիլիսոփայության կարևոր հիմնահարցերից է: Գիտությունը գտնում է, որ «իրավունքի» իրական կեցությունը հայտնաբերվում, արտահայտվում է իրավական երևույթներում: Չկա իրավունքի էություն իրավական երևույթներից դուրս, որոնցում այն ձեռք է բերում իր իրական օբյեկտիվությունը: Իրավական երևույթը իրավունքի էության վերափոխված իրականացումն է, նրա անմիջական իրականությունը, արտահայտման կոնկրետ ձևը: Իրավական երևույթն էությունն է իր գոյության մեջ: Սակայն «երևույթը» իրավունքի էությունից անկախ գոյություն չէ, այլ հենց իրավունքի էության գոյություն: Ցանկացած իրավական երևույթ այսպես կամ այնպես, սակայն վերջնական արդյունքում միշտ իրավունքի էության երևույթ է: Ըստ Գ.Ա. Քերիմովի՝ իրավունքի էությունն իրենում պարունակում է իրավական իրականության կապերի և հարաբերությունների ամբողջ հարստությունը, այդ պատճառով առանձին իրավական երևույթը կարող է չհայտաբերել իրավունքի ողջ էությունը, այլ դրա առանձին պահը, կողմը, մասը: Իրավունքի փիլիսոփայության մասն մեթոդաբանական դիրքերից ելնելով՝ ակնհայտ է, որ իրավունքի՝ որպես հասարակական օբյեկտիվ իրողության տեսական արտացոլման հիմնարար կատեգորիան «իրավունք» հասկացությունն է, որը խարսխված է իրավունքի օրինաչափությունների (հատկանիշների) վրա: Իրավունքի սկզբունքները իրավական երևույթ են, իրավունքի էության արտահայտությունը: Այսպիսով, իրավունքի էությունը դրսևորվում է նրա հատկանիշ-օրինաչափություններում, իսկ սկզբունքներն ընդհանրապես և իրավունքի սկզբունքները՝ որպես իրավական երևույթ, որոնք արտացոլում են իրավունքի օրինաչափությունները: Ստացվում է, որ իրավունքի սկզբունքները համարվում են իրավունքի հատկանիշների (էության օրինաչափությունների) արտահայտությունը, երևույթը, դրսևորումը: Հենց այստեղից է գալիս իրավունքի

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

սկզբունքի օբյեկտիվությունը, ինչպես նաև սուբյեկտիվությունը: Իրավունքի սկզբունքները օբյեկտիվ են այնքանով, որքանով դրանք պայմանավորված են իրավունքի էությանը, դրա արտահայտման օրինակաչափություններով: Սակայն դրանք նաև սուբյեկտիվ են, քանի որ կարիք ունեն ճանաչման, իմաստավորման, ձևակերպման՝ կոնկրետ սուբյեկտի կողմից: Սակայն սուբյեկտիվ պահն իրավունքի սկզբունքներում կամայական չէ, քանի որ իրավունքին բնորոշ սկզբունքների արտաբերումը պետք է բխեցվի իրավունքի հատկանիշներից, որպես նրա էության արտահայտման օրինակաչափություն: Այսինքն, բավարար չէ պնդել, որ իրավունքի գերակայությունն իրավունքի սկզբունք է, և այնուհետև շարադրել դրա բովանդակությունը: Անհրաժեշտ է ցույց տալ, թե իրավունքի էության արտահայտման որ հատկանիշներից է բխում իրավունքի գերակայությունը: Այս խնդրի լուծումը կրթաբանական հետազոտության արդյունքների արժանահավատությունը, իսկ խնդրի լուծման համար անհրաժեշտ է վերհանել իրավունքի՝ որպես իրողության հատկանիշները, իսկ այնուհետև դրանցից բխեցնել իրավունքի սկզբունքների շրջանակը կամ ցույց տալ իրավունքի հատկանիշների և իրավունքի սկզբունքների կապը:

Իրավունքի տեսաբանների մեծ մասը իրավունքի հատկանիշներ են համարում համապարտադիրությունը, նորմատիվականությունը, ձևային որոշակիությունը, կամասահմանվածությունը կամ (գիտակցական-կամային բնույթը), պետական երաշխավորվածությունը, ազատության արդարացի և հավասար չափ լինելը՝ Եթե փորձենք կատարել իրավունքին վերագրվող հատկանիշների շրջանակի վերաբերյալ մոտեցումների դասակարգում, ապա կտեսնենք, որ հեղինակների մի մասը դրանցում ներառում է միայն իրավունքի ձևակազմական հատկանիշները, իսկ մյուս մասը դրանց ավելացնում է նաև էական-բովանդակային հատկանիշները: Օրինակ՝ Օ.Է. Լեյստն իրավունքի հատկանիշներ է համարում նորմատիվականությունը, պետության կողմից պաշտոնապես սահմանվելը և պահպանվելը, համակարգայնությունը, ձևային որոշակիությունը, արդարադատությունը, հեղինակավորությունը: Այս հեղինակի մոտեցումը իրավունքի հատկանիշների բնույթին և շրջանակին կարելի է համարել նորմատիվիստական, ոչ բովանդակային: Սակայն տեսաբանների մյուս մասը իրավունքին վերագրում են նաև մետաֆիզիկական կամ բովանդակային կամ սուբստանցիոնալ հատկանիշներ: Օրինակ՝ Օ.Ֆ. Սկակունն իրավունքին վերագրում է այնպիսի հատկանիշ, ինչպիսին է «ազատության արդարացի և հավասար չափ» լինելը՝ Սակայն այստեղ մենք կանգ չենք առնի իրավունքին վերագրվող հատկանիշների վերաբերյալ այս մոտեցումների տարբերությունների քննարկման վրա:

Այստեղ ուղղակի կթվարկենք իրավունքին վերագրվող բոլոր հնարավոր հատկանիշների շրջանակը, իսկ այնուհետև կփորձենք ցույց տալ դրանց և իրավունքի սկզբունքների ներքին կապն ու պայմանավորվածությունը, ինչը հնարավորություն կտա մեզ պարզելու նաև, թե իրավունքի էության արտահայտման որ հատկանիշներից է բխում իրավունքի գերակայությունը:

Իրավունքի ընդհանուր սկզբունքների շրջանակում առավել հաճախ ներառում են օրենքի գերակայությունը, օրինականությունը, համոզման և հարկադրանքի զուգակցումը, իրավահավասարությունը, մեղքի համար պատասխանատվությունը, ինչպես նաև սոցիալական ազատությունը, մարդասիրությունը (կամ մարդու իրավունքների առաջնությունը), արդարությունը, իրավունքների և պարտականությունների փոխկապվածությունը՝ Օրինակ՝ իրավունքի էական հատկանիշի՝ իրավունքի համապարտադիրության՝ որպես իրավական պահանջների և կարգադրագրերի պահպանման ու կատարման պարտադիրություն իրավունքի բոլոր սուբյեկտների համար, արտահայտման իրավական ձևն օրինականության համաիրավական սկզբունքն է: Սակայն օրինականությունը որպես սկզբունք իրավունքի մեկ այլ հատկանիշի՝ ձևային որոշակիության, արտահայտման իրավական ձևն է: Իրավունքի ձևերի ստորակարգային համակարգի գազաթին կանգնած է գերակայությամբ օժտված օրենքը: Հետևաբար, իրավունքի համապարտադիրությունը և ձևային որոշակիությունը, որպես իրավունքի էությունից բխող որակ, վերածվում են այնպիսի իրավական երևույթի, ինչպիսին է օրինականությունը՝ որպես իրավունքի կազմավորման և գործողության համընդհանուր, համատարած սկզբունք՝ Այսպիսով, իրավական սկզբունքներն իրավունքի որակներով ու հատկանիշներով պատճառավորված ու պայմանավորված իրավական երևույթներ են: Նման հետևողական պատճառահետևանքային կապերով կարելի է ներկայացնել իրավունքի գրեթե բոլոր վերը թվարկված ընդհանուր սկզբունքները: Օրինակ՝ համոզման և հարկադրանքի զուգակցումը՝ որպես իրավունքի սկզբունք բխում է իրավունքի այնպիսի հատկանիշներից, ինչպիսին է պետական երաշխավորվածությունը կամ պետական հարկադրանքով երաշխավորվածությունը: Հետևելով այն տեսաբաններին, ովքեր իրավունքի էական հատկանիշներ են համարում ազատության արդարացի և հավասար չափ լինելը՝ կարող ենք վեր հանել և ներկայացնել նաև իրավունքի ընդհանուր սկզբունքներից սոցիալական ազատության, իրավահավասարության, արդարության (որպես իրավահավասարության յուրահատուկ դրսևորում), ինչ որ տեղ նաև մարդասիրության օբյեկտիվ հիմքերը, որովհետև, իրավունքի հատկանիշ դիտարկելով ազատության արդարացի

և հավասար չափ լինելը, հեղինակները հաշվի են նստում այն փիլիսոփայական մոտեցման հետ, որ «իրավունքի էության մեջ արտահայտվում են ոչ միայն իրավական երևույթների օրինակափոխությունները, այլև հիմնական իրավունքները, որոնք հատկանշական են իրավունքին՝ որպես դրա անհրաժեշտ բնութագրեր: Հիմնական իրավունքները կազմում են իրավունքի ոչ բոլոր, այլ հենց գլխավոր, որոշիչ, անհրաժեշտ հատկանիշները, որոնք իրենց հետքերն են թողնում մնացած իրավական երևույթների վրա»¹³ :

Այսպիսի հետևողական մոտեցման միջոցով կարելի է կապ տեսնել իրավունքի հատկանիշների և իրավունքի բոլոր սկզբունքների միջև, սակայն մեզ հետաքրքրողը իրավունքի գերակայության սկզբունքն է: Եթե իրավունքի հատկանիշների ամենատարածված և հանրաճանաչ շրջանակի մեջ ներառվում են նորմատիվականությունը, համապարտադիրությունը, կամասահմանվածությունը, ձևային որոշակիությունը, պետական երաշխավորվածությունը, ապա դրանցից կարելի է բխեցնել իրավունքի վերը թվարկված գրեթե բոլոր սկզբունքները, բացառությամբ մեզ հետաքրքրող իրավունքի գերակայության սկզբունքի: Այս դեպքում, իհարկե, կարելի է դիմել փիլիսոփայական դատողությունների իրավունքի էության – հատկանիշների - իրավական երևույթների (սկզբունքների) փոխհարաբերության մասին: «Յուրաքանչյուր իրավական երևույթ արտահայտում է իրավունքի էության հստակ կամ առանձին պահը. յուրաքանչյուր հատուկ և առանձին իրավական երևույթ կարող է հայտնաբերել իրավունքի ոչ ամբողջ էությունը, այլ միայն դրա առանձին պահերը, կողմերը, հատկանիշները: Այդ դեպքում իրավական երևույթի համապատասխանությունը իր էությանը կարող է լինել տարբեր: Որոշ իրավական երևույթներում իրավունքի էությունը ներկայացված է առավել լրիվ, ուղղակի և անմիջականորեն, քան այլ իրավական երևույթներում: Դա պայմանավորված է ոչ այնքան նրանով, որ կախված կոնկրետ պատմական պայմաններից իրավունքի միևնույն էությունը դրսևորվում է տարբեր կերպ, այլև նրանով, որ այդ պայմանները անխուսափելիորեն ազդում են իրավական երևույթների վրա, դրանց բովանդակության մեջ մտցնում են ինչ որ պահեր, որոնք անմիջականորեն չեն բխում դրանց էությունից: Արդյունքում իրավական երևույթները հաճախ միավորում են իրենցում ինչպես այն, ինչը դետերմինավորված է իրենց էությամբ, այնպես էլ այն, ինչը հանդիսացել է նրանց վրա սոցիալական իրականության այլ երևույթների ազդեցության արդյունք: Հենց այդ պատճառով իրավունքի էությունը և երևույթը երբեք չեն համընկնում. իրավունքի էությունը ոչ միայն դրսևորվում, բացահայտվում է իրավական երևույթներում, այլև թաքնվում է դրանցում: Գիտական հետազոտու-

թյան խնդիրը հենց նրանում է, որպեսզի իրավական երևույթների արտաքին ձևում բացահայտի, հայտնաբերի, որոշի դրանց էությունը»¹⁴ : Նման փիլիսոփայական մոտեցումից ելնելով՝ կարելի է պնդել, որ իրավունքի գերակայության սկզբունքը՝ որպես իրավական երևույթ, կոնկրետ պատմական պայմաններում ձևավորված դրույթ է, որն անմիջականորեն չի բխում իրավունքի էությունից, այլ առաջ է եկել «սոցիալական իրականության այլ երևույթների ներգործության պատճառով»: Սակայն կարծում ենք, որ նման փիլիսոփայության կարիքը չկա, քանի որ խիստ հետևողականության դեպքում իրավունքի գերակայությունը կարելի է բխեցնել իրավունքի հատկանիշներից:

Վերջին ժամանակներում իրավունքի տեսաբանները, բացի վերը թվարկված իրավունքի հատկանիշներից, առաջ են քաշել իրավունքի ևս մեկ յուրահատկություն, բնութագրական գիծ, հատկանիշ, որը ներառում են իրավունքի՝ իր հատկանիշներից սինթեզված հասկացության մեջ: Այդ հատկանիշը իրավունքի համակարգայնությունն է: Իրավունքը որպես համակարգային կազմավորում են դիտարկում կամ իրավունքին համակարգայնության հատկանիշներ են վերագրում բազմաթիվ հեղինակներ: Նրանցից Գ.Հ. Սաֆարյանը, Ռ.Տ. Մուխաևը, Վ.Ի. Գոյմանը, Մ.Ն. Մարչենկոն, Վ.Վ. Լազարևը, Ս.Վ. Լիպենը, Ս.Ս. Ալեքսեևը, Վ.Վ. Օքսամիտին, Օ.Է. Լեյստը¹⁵ իրավունքի հատկանիշները դիտարկում են պոզիտիվ իրավական տեսանկյունից՝ համակարգայնությունը հասկանալով որպես իրավունքի նորմերի՝ վարքագծի կանոնների փոխկապված և փոխկախված ամբողջական համակարգ: Այդ իսկ պատճառով Մ.Ն. Մարչենկոն հիմնախնդիրը ձևակերպում է «դրական իրավունքի հատկանիշներ» հասկացությամբ: Այս դեպքում իրավունքի համակարգայնությունը դրսևորվում է իրավունքի համակարգում, որպես ճյուղերի, ենթաճյուղերի, ինստիտուտների, իրավունքի նորմերի համակարգային համակցություն: Իրավունքի համակարգայնության տվյալ իմաստը, բացահայտված դրական իրավունքի դիրքերից, անհետաքրքիր է մեր հետազոտության համար : Սակայն պետք է նկատի ունենալ, որ իրավունքի համակարգայնությունը որպես իրավունքի հատկություն այլ տեսաբանների կողմից դիտարկվում է ոչ միայն իրավունքի համակարգ հասկացության իմաստով, այլ նաև համակարգային այլ որակներով: Այսպես, Վ.Ի. Լեյստը իրավունքի համակարգային կապերը տեսնում է մի քանի առումներով¹⁷, որոնցից մեկը բնական իրավունքի, պոզիտիվ իրավունքի, սուբյեկտիվ իրավունքի համակարգն է: Այս հեղինակը իրավունքի համակարգային կառուցվածքում տեսնում է երեք բաղադրատարրեր. Դրանք են՝ բնական իրավունքը, դրական իրավունքը, սուբյեկտիվ իրավունքը: «Բնական իրավունքը» սոցիալական-իրավա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

կան հավակնություններն են, որոնց բովանդակությունը պայմանավորված է մարդու և հասարակության բնույթով: Բնական իրավունքի կարևորագույն մասը մարդու իրավունքներն են: Երկրորդ տարրը՝ դրական իրավունքն է, այսինքն՝ օրենսդրությունը և իրավական նորմերի այլ աղբյուրները, որոնցում պաշտոնական պետական ճանաչում են գտնում քաղաքացիների, կազմակերպությունների և սոցիալական խմբերի սոցիալ-իրավական հավակնությունները: Երրորդ տարրը՝ սուբյեկտիվ իրավունքն է, անհատական հնարավորությունները, որ ծագում են դրական իրավունքի հիման վրա և բավարարում են դրա ունեցողի շահերը և պահանջմունքները¹: Իրավունքի նման համակարգային հատկությունից էլ հենց բխում է իրավունքի գերակայության սկզբունքը՝ որպես համընդհանուր սկզբունք: Դա նշանակում է, որ իրավունքի համակարգի հիմքը բնական իրավունքներն են, որոնց իրականություն դարձնելու համար գոյություն ունի և գործում է իրավունքը: Հետևաբար, իրավունքը որպես էություն, դրսևորվում է բնական իրավունքներում: Այսպիսով, համակարգի հիմքը (էությունը) գերակայում է համակարգի մնացած բաղադրատարրերում և դրանց իրավական երևույթներում: Իսկ այդ գերակայության ապահովման իրավական ձևը, միջոցը, երևույթը՝ «իրավունքի գերակայության» սկզբունքն է: Դա նշանակում է, որ բնական-իրավական հիմնադրույթները հանդես են գալիս իրավունքի սկզբունքներով և մարդու իրավունքներով: Այդ հիմնադրույթների հիման վրա պետությունը ստեղծում է դրական իրավունքը և ստեղծման գործընթացում նա ղեկավարվում է իրավունքով, առաջնորդվում է դրանով: Սակայն իրավունքի գերակայության գործողությունը չի սահմանափակվում դրանով, այլ շարունակում է ներգործել դրական իրավունքի կենսագործման, իրավունքի սուբյեկտների իրավունքների իրականացման ու պարտականությունների կատարման ընթացքում: Եթե իրավունքի գերակայությունը դադարեց գործել իրավունքի կենսագործման ընթացքում, ապա արդի իրավական համակարգե-

րում չէին ճանաչի «թույլատրելի է ամեն ինչ, ինչն արգելված չէ օրենքով» սկզբունքը, որը հենց իրավունքի (բնական կամ այլ կերպ հասկացված) գերակայության գործողության հետևանքն է:

Հետևաբար, իրավունքի գերակայությունը կարելի է համարել իրավունքի գերակայունք, սկզբունքների սկզբունք, որից ազդվում են իրավունքի մնացած սկզբունքները և երևույթները, պայմանավորվում են դրանով, ստորակարգվում են դրան: Եթե պոզիտիվ իրավունքի կենսագործման ընթացքում չգործի այդ սկզբունքը, ապա կստացվի, որ «կանոնից է բխում» իրավունքը, այլ ոչ թե «իրավունքից՝ կանոնը» և չի կայանա այն չափանիշը, որի միջոցով արժեքավորման պիտի ենթարկվի դրական օրենսդրության իրավականությունը:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ իրավունքի էությունը դրսևորվում է նրա հատկանիշօրինաչափություններում, իսկ իրավունքի սկզբունքները՝ որպես իրավական երևույթ արտացոլում են իրավունքի օրինաչափությունները: Հետևաբար, իրավունքի սկզբունքները համարվում են իրավունքի հատկանիշների (էության օրինաչափությունների) արտահայտությունը, երևույթը, դրսևորումը: Իրավունքի՝ որպես համակարգային կազմավորման իրավունք (էություն) - դրական իրավունք (երևույթ) – սուբյեկտիվ իրավունքներ և պարտականություններ (իրավունքի կենսագործում) շղթայով, էությունը դրսևորող երևույթներից են իրավունքի հատկություններից, որակներից, էությունից բխող իրավունքի ընդհանուր սկզբունքները: Այդ սկզբունքների հիմքը ինքն՝ իրավունքն է իր էությամբ (որպես բնական իրավունք, իդեա, իրավահավասարություն), որն աղբյուրի նման սնուցում է դրանք և այլ իրավական երևույթներ: Հետևաբար, ինքը՝ իրավունքը, իր էությամբ գերակայում է իր համակարգում և դրա յուրաքանչյուր բաղադրատարրում: Արդյունքում այդ գերակայությունը վերածվում է իրավունքի ընդհանուր և հիմնարար սկզբունքի:

¹ Տե՛ս Философский словарь / Под ред. И.Т. Фролова, изд. 5-ое, М., изд. Политической литературы, 1987. С. 371.
² Տե՛ս Философский словарь / Под ред. И.Т. Фролова, изд. 5-ое, М., изд. Политической литературы, 1987. С. 371.
³ Տե՛ս Էական համարվող յուրահատկությունների, այն է հատկանիշների շրջանակի որոշումը պայմանավորված է նաև տեսաբանի հետազոտական, անձնական և այլ դիրքորոշումներով և մեթոդաբանական մոտեցումներով (տե՛ս Леушин В.И., Перевалов В.Д. Понятие, сущность и социальная ценность права. В кн. Теория государства и права. Под ред. В.М. Корельского и В.Д. Перевалова, М., издательская группа ИНФРА. М-Норма, 1997. С. 225):
⁴ Տե՛ս Гегель Г.В.Ф. соч., т. 5. С. 596.
⁵ Տե՛ս Керимов Д.А. Методология права (Предмет, функции, проблемы философии права). М., Аванта+, 2000. С. 162.
⁶ Տե՛ս Չպետը է շփոթել իրավունքի էությունը դրա օրինաչափությունների հետ: Իրավունքի էությունը արտահայտվում է ոչ թե մեկ, այլ մի շարք օրինաչափություններում՝ հատկանիշներում (օրինակ ձևային-որոշակիությունը, իրավական նորմերի պարտադիրությունը և այլն): Իրավունքի յուրաքանչյուր օրինաչափություն համարվում է դրա էության շարժման ձևերից մեկը (Տե՛ս Керимов Д.А. Методология права (Предмет, функции, проблемы философии права). М., Аванта+, 2000. С. 162):
⁷ Տե՛ս Սկզբունքները փիլիսոփայության մեջ դիտարկվում են որպես երևույթի անհրաժեշտության կամ օրենքի դրսևորում (տե՛ս Философский словарь. Под ред. Флорова И.Т. Изд. 5-ое, М., изд. Политической литературы, 1987. С. 382):
⁸ Տե՛ս Общая теория государства и права. Академический курс в 2-х томах. Под ред. Марченко М.Н. Том 2. Теория права. М., Издательство “Зерцало“, 1998. С. 16; Леушин В.И., Перевалов В.Д. Понятие, сущность и социальная ценность права.- В кн. Теория

государства и права. Под ред. Корельского В.М. и Перевалова В.Д. М. Издательская группа ИНФРА . М-НОРМА, 1997. С. 217-232; Скакун О.Ф. Теория государства и права (энциклопедический курс): Учебник. Харьков, Эспада, 2005. С. 276-278; Гойман В.И. Право в системе нормативного регулирования.- В кн. Общая теория права и государства. Под ред. Лазарева В.В. М., Юристь, 2005. С. 133-134.

⁹ Տե՛ս Լայետ Օ.Յ. Սուսնոյի իրաւունքի հասկացումը և փիլիսոփայութեան մէջ դերը: Մ. ՈԿԸ «Զերցալո Մ», 2002. Ս. 51-102.

¹⁰ Տե՛ս Սկաքուն Օ.Ֆ. Թեորիա գոսուդարստա և քաւա (էնցիկլոպեդիցիէսկի կուրս): Խարկոք: Էսպադա, 2005. Ս. 276.

¹¹ Տե՛ս Կարտաշո՞ւ Վ.Ն. Քրինցիքի քաւա.- քն. Օբադա տեորիա գոսուդարստա և քաւա. Աքադեմիցիէսկի կուրս քն 3-ք տոքաք), օտ՞ւ. ռեդ. Մարչենքո Մ. Ն. 3-օէ իզդ., Մ., Նօրմա, 2007. Ս. 104-107; Դօլօւիստքո՞ւ Ա.Ն., Դմիտրիէ՞ւ Ը.Ա. Քրօբլեմա տեորիա գոսուդարստա և քաւա. Մ., իզդ-ո՞ւ ԷՔՏՄՕ, 2005. Ս. 374-378; Թեորիա գոսուդարստա և քաւա. Կուրս կեկցիա / քո՞ւ ռեդ. Մադո՞ւո՞ւ Ն.Ի. և Մալքօ Ա.Վ. Մ., Յուրիստ, 1999. Ս. 149-152; Դօյմա՞ն Ի.Վ. Քրինցիքի քաւա / քն. Օբադա տեորիա քաւա և գոսուդարստա. / քո՞ւ ռեդ. Լազառե՞ւ Վ.Վ. 4-օէ իզդ., Մ., Յուրիստ, 2005. Ս. 134-137; Լեւա՞ւին Վ. Ի., Քօնադա, սոսնոյի և օբադա թրինքաքա քաւա.- քն. Թեորիա գոսուդարստա և քաւա / օտ՞ւ. ռեդ. Քերե՞ւալօ՞ւ Վ.Ը. Մ., Նօրմա, 2006. Ս. 120-122; Րօմաշօ՞ւ Ք.Ա., Տիւքա՞ւինա Է.Դ., Քրինցիքի քաւա. - քն. Թեորիա գոսուդարստա և քաւա / քո՞ւ ռեդ. ժօքտ. յուրիդ. նաւք, քո՞ւփ. Րօմաշօ՞ւ Ք.Ա. Տիք., իզդ-ո՞ւ Ք. Ասլա՞նօ՞ւ «Յուրիդիցիէսկի կենտրն քրէսս», 2005. Ս. 189-190.

¹² Տե՛ս Օրինակաւորութեան իրաւունքի հասկացումը և փիլիսոփայութեան մէջ դերը: Մ. ՈԿԸ «Զերցալո Մ», 2002. Ս. 51-102; Մուխաէ՞ւ Ք.Տ. Թեորիա գոսուդարստա և քաւա. Մ., Իզդատեալստ՞ւ ՔՐԻՕՐ, 2001, էջ 439); Ս.Ս. Տաքուրքո՞ւ (տե՛ս Տաքուրքօ՞ւ Ա.Տ. Զաքօնօստա և քաւաթրօքօք.- քն. Թեորիա գոսուդարստա և քաւա. Քո՞ւ ռեդ. Կօրէլսկի Վ.Մ. և Քերե՞ւալօ՞ւ Վ.Ը. Մ., Իզդատեալստա գրուքա իՆՖՐԱ . Մ-ՆՕՐՄԱ, 1997. Ս. 438):

¹³ Տե՛ս Կերիմօ՞ւ Ը.Ա. Մեթօ՞ւլօգիա քաւա (Քրեդեդ, քոնցիքի, քրօբլեմա փիլիսոփայութեան քաւա). Մ., ԱՎա՞նտա+, 2000. Ս. 160:

¹⁴ Տե՛ս Կերիմօ՞ւ Ը.Ա. Մեթօ՞ւլօգիա քաւա (Քրեդեդ, քոնցիքի, քրօբլեմա փիլիսոփայութեան քաւա). Մ., ԱՎա՞նտա+, 2000. Ս. 162-163.

¹⁵ Տե՛ս Սաֆարյան Գ.Հ., Իրաւունքի սոսնոյի և տեւութեան իրաւունքի քաւա, Եր., Լիւնտ, 2010, էջ 432; Դօյմա՞ն Վ.Ի. Քաւա քն սիստեմա ռեգուլադօնա. - քն. Օբադա տեորիա քաւա և գոսուդարստա. / քո՞ւ ռեդ. Վ.Վ. Լազառե՞ւ, 4-օէ իզդ, քերաք. և ժօք. Մ., Յուրիստ, 2005. Ս. 133; Մուխաէ՞ւ Ք.Տ. Թեորիա գոսուդարստա և քաւա. Մ., «Իզդ-ո՞ւ ՔՐԻՕՐ», 2001. Ս. 108; Մարչենքօ՞ Մ.Ն. Քրօբլեմա օբադա տեորիա գոսուդարստա և քաւա, քն 2-ք տոքաք, Խ. 2, Քաւա,- 2-օէ իզդ., քերաք. և ժօք. Մ., 2007. Ս. 21; Լազառե՞ւ Վ. Վ., Լիքնի Տ.Վ. Թեորիա գոսուդարստա և քաւա. Մ., Տրաք, 2004. Ս. 190; Ալեքսէ՞ւ Տ.Տ. Քաւա: ա՞ւքա - տեորիա - փիլիսոփայութեան օքսպերիէնցիէսկի իզդատեալ. Մ.: «Տադր», 1999. Ս. 37; Օբադա տեորիա գոսուդարստա և քաւա. Աքադեմիցիէսկի կուրս քն քրեք տոքաք / օտ՞ւ. ռեդ. Մ.Ն. Մարչենքօ, - 3-է իզդ., քերաք. և ժօք. Մ., Նօրմա, 2007. Ս. 29; Ալեքսէ՞ւ Տ.Տ. Օբադա տեորիա քաւա: Մ., Քրօսքեքտ, 2009. Ս. 167-168; Օքսալթնի Վ.Վ. Օբադա տեորիա գոսուդարստա և քաւա, Մ., 2011. Ս. 269; Օ.Յ. Լայետ Սուսնոյի իրաւունքի հասկացումը և փիլիսոփայութեան մէջ դերը: Մ. ՈԿԸ «Զերցալո - Մ», 2002. Ս. 66-70.

¹⁶ Չնայք յա՞ւք և ճիւղաքի ռեգուլադօնա, քն իրաւունքի հասկացումը և իրաւունքի կազմա՞ւ քն սահմանադրութեան ճիւղաք, քն յա՞ւք և հալաքն իրաւունքի ալլ ճիւղաք: Այս սահմանադրութեան կազմա՞ւ և իրաւունքի գերակայութեան սկզբունքի հետ, սահմանադրութեան գերակայութեան ճիւղաք և իրաւունքի գերակայութեան, քն յա՞ւք վերջինի առաջին սահմանադրութեան իրաւունքի հասկացումը, ճիւղաք, ալլ:

¹⁷ Այդ առումնէք քն սահմանադր. և հանրային իրաւունքի, իրաւունքի ճիւղաքի, ինստիտուտնէքի և ճիւղաքի, օրէնսդրութեան հասկացումը կազմա՞ւ (տե՛ս Լեւա՞ւին Վ.Ի. Քօնադա, սոսնոյի և օբադա թրինքաքա քաւա. - քն. Թեորիա գոսուդարստա և քաւա / օտ՞ւ. ռեդ. Վ.Ը. Քերե՞ւալօ՞ւ, Մ., Նօրմա, 2006. Ս. 117):

¹⁸ Տե՛ս Լեւա՞ւին Վ.Ի. Քօնադա, սոսնոյի և օբադա թրինքաքա քաւա. - քն. Թեորիա գոսուդարստա և քաւա / օտ՞ւ. ռեդ. Վ.Ը. Քերե՞ւալօ՞ւ, Մ., Նօրմա, 2006. Ս. 117.

РЕЗЮМЕ

Принципиальная важность верховенства права в правовой системе

В этой статье мы попытались определить и проанализировать, что несмотря на то, что «верховенство права» это принцип права, но он, кажется, нуждается в дальнейшем обосновании. И считается ли верховенство права принципом права, говорилось в этой статье. Чтобы суждениями основанными на четких и объективных оснований быть в состоянии ответить на тот вопрос, почему верховенства права является принципом права и рассеять возможные сомнения мы обсудили верховенства права с философской точки зрения. Речь идет о праве как объективная реальность социальной жизни, «явление и сущность», «содержание и форма» с точки зрения философских категорий об анализе.

Изучение сделанное в статье дает полное представление о концепции верховенства права так же как и о связи об сущности права и о свойствах.

SUMMARY

The fundamental importance of rule of law in the legal system

In this article we have tried to identify and analyze that the rule of law is the principle of law is though it seems it needs further justification. Why the rule of law is considered to be a principle of law was discussed in this article. In order to be able to answer the question by judgments based on clear and objective basis why the rule of law is the principle of law we have discussed the rule of law from the philosophical point of view. We speak of the law as the objective reality of social life "phenomenon and nature", "content and form" from the point of view of philosophical categories about analysis.

The study done in the article gives an opportunity to have a full idea about the concept of the rule of law principle as well as about the relation of the latter with the nature of the law and features.

ԱՐԱՄ ԳՅՈՒԺԳՅԱՆ

ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության ավագ դատախազ, Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի իրավագիտության ֆակուլտետի քրեական և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի հայցորդ



**ՀԱՐԿԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՉԿԱՏԱՐՄԱՆ ՕԲՅԵԿՏԻՎ
ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

Հարկ է նշել, որ ՀՀ համանուն նորմը բացակայում է: Ըստ Ռուսաստանի Դաշնության հարկային օրենսգրքի 58-րդ հոդվածի՝ հարկերը պետք է վճարվեն անձամբ հարկատուի կամ հարկային գործակալի կողմից: Փաստացի, խոսքը գնում է բյուջե հարկային վճարումներ հասցնելու երկու հավասարազոր ձևերի մասին: Հարկային գործակալի վրա փոխանցման պարտականությունը դրվում է այնպիսի հարկերի վրա, ինչպիսիք են՝ ավելացված արժեքի հարկը, եկամտահարկը և շահութահարկը ֆիզիկական անձանց կողմից: Ինչպես հարկատուները, այնպես էլ հարկային գործակալները օժտված են նույն իրավունքներով, բայց մի տարբերությամբ, որ նախկինում նրանց համար նախատեսված չէր քրեական պատասխանատվություն:

Նման պարտականություններ կարող են դրվել միայն այնպիսի կազմակերպությունների և ֆիզիկական անձանց վրա, որոնք հանդիսանում են հարկադրման ենթակա եկամուտների վճարման աղբյուր (օրինակ՝ ավելացված արժեքի հարկ (ՌԴ հարկային օրենսգրքի 161-րդ հոդված), ֆիզիկական անձանց եկամտահարկ (ՌԴ հարկային օրենսգրքի 226-րդ հոդված), շահութահարկ (ՌԴ հարկային օրենսգրքի 286-րդ հոդված)¹:

Ըստ Որոշման 17-րդ կետի, ինչպես նշում է ՌԴ գերագույն դատարանի Պլենումը, ՌԴ քրեական օրենսգրքի 199.1 հոդվածով նախատեսված հանցագործության սուբյեկտ կարող է լինել անհատ ձեռներեցի կարգավիճակ ունեցող ֆիզիկական անձ, ինչպես նաև անձ, որի վրա իր պաշտոնական կամ ծառայողական դիրքին համապատասխան դրված է հարկեր հաշվարկելու, պահելու և փոխանցելու պարտականությունը (կազմակերպության ղեկավար կամ գլխավոր (ավագ) հաշվապահ, կազմակերպության այլ աշխատակից, որը լիազորված է կատարել ղեկավարի կամ գլխավոր (ավագ) հաշվապահի պարտականությունները)²:

Հարկային գործակալի պարտականությունները կարող են դրվել միայն այն կազմակերպությունների և ֆիզիկական անձանց վրա, որոնք հարկատուին վճարման եկամուտների աղբյուր են:

Անձը ստանում է հարկային գործակալի կարգավիճակ միայն հարկեր հաշվարկելու և վճարելու կոնկրետ պարտականություններ կատարելու համար:

Հարկային գործակալի մյուս առանձնահատկությունը այն է, որ նա հարկային հարաբերություններում, ի տարբերություն հարկատուի օրինական ներկայացուցչի, ներկայացնում է ոչ թե այդ մարդու, այլ իր անձնական շահերը: Իր վրա դրված պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար հարկային գործակալը ՌԴ հարկային օրենսգրքի 24-րդ հոդվածի 5-րդ կետի հիման վրա պատասխանատվության է ենթարկվում՝ համաձայն ՌԴ օրենսդրության:

Մինչև վերջին ժամանակները, ըստ ՌԴ քրեական օրենսգրքի 199-րդ հոդվածի (Ֆեդերալ օրենքի խմբագրություն 25.06.98 < 92-ՓՅ), հարկային հանցագործությունների իրավակիրառական պրակտիկայում միանշանակ չէր մեկնաբանվում հարկային գործակալին քրեական պատասխանատվության ենթարկելու հնարավորության հարցը:

Մինչ ՌԴ հարկային օրենսգրքի առաջին մասի գործողության մեջ մտնելը, ֆիզիկական անձանց եկամուտների մասին սահմանված ժամկետում հարկային մարմիններին տեղեկություններ չներկայացնելու համար նախատեսված չէր հարկային գործակալի պատասխանատվություն, որովհետև հարկային գործակալները ներգրավված չէին հարկային օրենսդրությամբ կանոնակարգվող հարաբերությունների մասնակիցների թվում:

Ըստ ՌԴ հարկային օրենսգրքի՝ հարկային գործակալները ոչ միայն կապված են հարկադրման հետ, այլև հանդիսանում են հարկային իրավահարաբերությունների անմիջական մասնակից (այսինքն՝ ունեն հատուկ հատկանիշներ):

Հանցագործությունը կատարվում է ուղղակի դիտավորությամբ: Անձը գիտակցում է՝ ըստ ՌԴ հարկերի և տուրքերի մասին օրենսդրության հաշվարկման, հարկատուից պահման և համապատասխան բյուջե (արտաբյուջետային հիմնադրամ) փոխանցման ենթակա հարկեր և/կամ տուրքեր

www.lawinstitute.am

հաշվարկելու, պահելու և փոխանցելու հարկային գործակալի պարտականությունները անձնական շահերից ելնելով չկատարելու իր գործողությունների հանրային վտանգը: Դրանից բացի՝ անձը՝ որպես այդ ամենի հետևանք, ցանկանում է չփոխանցել հարկեր և/կամ տուրքեր համապատասխան բյուջե (արտաբյուջետային հիմնադրամ):

Անհրաժեշտ է հաշվի առնել, որ հանցավոր գործողությունների նպատակն է խուսափել հարկային գործակալի պարտականությունները պետության հանդեպ կատարելուց՝ ելնելով անձնական շահերից:

«Անձնական շահ» տերմինը ընդգծում է արարքի դիտավորյալ բնույթը՝ հանդիսանալով նրա սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ: «Անձնական շահը»՝ որպես գնահատման հասկացություն, չի պարզաբանվում օրենսդրի կողմից, չնայած օգտագործվում է ՌԴ քրեական օրենսգրքի մի շարք հոդվածներում (145-րդ, 170-րդ, 181-րդ, 196-րդ, 285-րդ, 292-րդ, 325-րդ հոդվածներում):

Ինչպես արդարացի նշում է Պ.Ս.Յանին, «անձնական շահ» հասկացությունը բավական անորոշ է: Հավանաբար խոսքը գնում է նախ և առաջ ապօրինի հարստանալու ձգտման մասին: Սակայն, եթե օրենսդիրը միայն դա ի նկատի ունենար, կսահմանափակվեր «շահադիտական նպատակ» ձևակերպումով:

ՄՍՀՄ գերագույն դատարանի պլենումի 1990թ. մարտի 30-ի N4 «Իշխանության կամ պաշտոնական դիրքի չարաշահման, ծառայողական լիազորությունների վերազանցման կամ իշխանազանցման, անփութության և պաշտոնետական կեղծիքի մասին» որոշման մեջ ասված է, որ անձնական շահը կարող է արտահայտվել ունեցվածքային և ոչ ունեցվածքային բնույթի շահ ստանալու նպատակով՝ պայմանավորված այնպիսի շարժառիթներով, ինչպիսիք են՝ կարիերամոլությունը, հովանավորչությունը, ընտանեկանությունը (ընտանեհրությունը), ներկա իրավիճակը չափազանցելու, փոխադարձ ծառայություն կամ որևիցե հարցի լուծման համար օգնություն ստանալու, ինչպես նաև սեփական անիրավասությունը թաքցնելու ցանկությունը և այլն:

Հետևաբար, տվյալ դեպքում շահադիտական և անձնական շահագրգռվածությունը տարբերվում են. անձնական շահագրգռվածությունը ենթադրում է ոչ նյութական բնույթի շահեր:

Միևնույն ժամանակ ՌԴ գերագույն դատարանի պլենումի 2006թ. դեկտեմբերի 28-ի N64 «Հարկային հանցագործությունների համար պատասխանատվության մասին քրեական օրենսդրության դատարանների կիրառման պրակտիկայի վերաբերյալ» որոշումը տալիս է հետևյալ պարզաբանումները. «Անձնական շահագրգռվածությունը՝ որպես հանցագործության դրդապատճառ, կարող է արտահայտվել գույքային և ոչ գույքային բնույթի

շահ ստանալու ձգտումով՝ պայմանավորված այնպիսի շարժառիթներով, ինչպիսիք են կարիերամոլությունը, հովանավորչությունը, ընտանեկանությունը, ներկա իրավիճակը չափազանցելու, փոխադարձ ծառայություն կամ որևիցե հարցի լուծման համար օգնություն ստանալու ցանկությունը: Ելնելով նշվածից՝ ՌԴ հարկերի և տուրքերի վերաբերյալ օրենսդրությամբ նախատեսված հարկային գործակալի ճիշտ և ժամանակին համապատասխան հարկեր հաշվարկելու, պահելու և բյուջեներ (արտաբյուջետային հիմնադրամներ) փոխանցելու պարտականություններ չկատարելը ոչ անձնական շահագրգռվածության հետևանքով չի ներկայացնում ՌԴ քրեական օրենսգրքի 199.1 հոդվածով նախատեսված հանցակազմ և այն դեպքերում, երբ նման գործողությունները կատարվել են խոշոր կամ առավել խոշոր չափերով: Կարծում ենք, որ գերագույն դատարանի պլենումի տվյալ պարզաբանումը ավելի անորոշ է դարձնում անձնական շահագրգռվածություն հասկացությունը, քանզի տեղի է ունենում «շահադիտական» և «անձնական» շահագրգռվածության հասկացությունների շփոթ:

Գտնում ենք, որ ցանկացած շահագրգռվածություն անձնական է կամ շահադիտական, քանի որ հանդիսանում է մարդու վարքագծի շարժառիթ:

Մեր կարծիքով՝ ՌԴ քրեական օրենսգրքի 199.1 հոդվածում նկարագրված հանցակազմի պարտադիր հատկանիշ հանդիսացող «անձնական շահագրգռվածություն» հասկացության անորոշությունը էապես բարդացնում է տվյալ քրեական նորմի կիրառումը պրակտիկայում և իրավակիրառողին հնարավորություն է տալիս իր հայեցողությամբ որակել տվյալ արարքը, ինչը իրավապահ մարմիններին կարող է մղել չարաշահման:

Բացի դրանից, տվյալ տերմինի օգտագործումը բավականին անհաջող է, քանի որ անհիմն կերպով նեղացնում է այս նորմի կիրառման շրջանակները: Կարծում ենք, որ պրակտիկայի պահանջներին ավելի շատ կհամապատասխաներ հանցակազմի ձևակերպումը՝ առանց սահմանելու հանցագործության կատարման շարժառիթները, հետևաբար՝ անհրաժեշտ ենք համարում հանել 199.1 հոդվածի 1-ի մասի դիսպոզիցիայից «անձնական շահագրգռվածություն» բառերը:

Ելնելով վերոգրյալից և կատարված դիտողություններից՝ առաջարկում ենք ՌԴ քրեական օրենսգրքի 199.1 հոդվածի 1-ի մասի դիսպոզիցիան ձևակերպել հետևյալ խմբագրությամբ. «Ըստ ՌԴ հարկերի և տուրքերի վերաբերյալ օրենսդրության՝ հաշվարկման, հարկատուից պահման և ՌԴ բյուջետային համակարգ փոխանցման ենթակա հարկեր հաշվարկելու, պահելու և փոխանցելու հարկային գործակալի պարտականություններ խոշոր չափով չկատարելը պատժվում է...»

1. П. 16 Постановления Пленума Верховного Суда от 28 декабря 2006 года N 64 «О практике применения судами уголовного законодательства об ответственности за налоговые преступления» // Бюллетень Верховного Суда Российской Федерации. – 2007. - N 3.
2. Бюллетень Верховного Суда Российской Федерации. – 2007. - N 3.
3. Клепицкий И.А. Эволюция норм об ответственности за уклонение от уплаты налогов // Законодательство. – 2004.
4. Масленников М. Налоговым агентом может стать каждый // Экономика и жизнь. – 2003. - N 11.
5. По мнению И.А. Клепицкого, наличие в данной норме «личных интересов» представляется излишним, поскольку природа человека и мотивация его поведения таковы, что все действия, совершенные не в общественных и государственных интересах, совершаются им из личной заинтересованности (иначе он их просто не совершит). Эволюция норм об ответственности за уклонение от уплаты налогов // Законодательство. – 2004. - N 5, 6.
6. Яни П.С. Криминальное банкротство. Статья вторая. Банкротство преднамеренное и фиктивное// Законодательство. – 200. N 3.
7. П. 17 Постановления Пленума ВС СССР от 30 марта 1990 г. N 4 «О судебной практике по делам о злоупотреблении властью или служебным положением, превышении власти или служебных полномочий, халатности и должностным подлоге» // Сборник постановлений Пленума Верховного Суда Российской Федерации (СССР, РСФСР) по уголовным делам. – М., 2001.
8. Бюллетень Верховного Суда Российской Федерации. – 2007. - N 3.

РЕЗЮМЕ

Проблемы объективных признаков неисполнения обязанностей налогового агента

Данная статья посвящена исследованию сравнительно новой уголовно-правовой нормы, обеспечивающей выполнение налоговыми агентами своих обязанностей. Автор акцентировал внимание на анализе субъекта данного преступления, в частности определению понятия «личная заинтересованность», неопределенность которой дает правоприменителю по своему усмотрению квалифицировать данное деяние.

SUMMARY

Objective features of the main issues on non fulfilment of tax agent responsibilities

The present article is about the investigation of comparatively new criminal legislative norm providing the fulfillment of tax agents' responsibilities.

The author pays great attention to the analysis of the subject of the crime under consideration, particularly, to the definition of the notion "personal interest," the ambiguity of which enables the user to qualify the mentioned deed on his own discretion.

ԱՐՄԵՆ ՍԱՐԴԱՐՅԱՆ

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի
իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական և
քաղաքացիական դատավարության իրավունքի
ամբիոնի ասպիրանտ

ԱՊՊԱ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ԵՎ ԱՅՆ ՉԿՆՔԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՊՐՈԲԼԵՄՆԵՐ

Ապահովագրավճարը ապահովադրի կողմից ապահովագրական ընկերությանը միանվագ կամ տարաժամկետ վճարման միջոցով փոխանցվող գումարն է, այսպես ասած՝ ապահովագրության պայմանագրի արժեքը, զինը, որի դիմաց ապահովագրական ընկերությունը պարտականություն է ստանձնում պայմանագրում մատնանշված իրադարձության վրա հասնելու դեպքում վճարել ապահովագրական հատուցում:

ԱՊՊԱ ինստիտուտի շրջանակներում ապահովագրավճարի դերը էականորեն տարբերվում է կամավոր ապահովագրության տեսակներից, քանի որ, եթե կամավոր ապահովագրության դեպքում ազատ տնտեսական հարաբերությունները՝ ապահովագրական ընկերությունների մրցակցությունը, առաջարկի և պահանջարկի փոխադրման անավորվածությունը, բավարար պայման են «ապահովագրական տարբեր պրոդուկտների» գների-ապահովագրավճարների գոյացման համար, ապա պարտադիր ապահովագրության դեպքում ապահովագրության պայմանագրի կնքումը ապահովված է պետական հարկադրանքով, և պետությունը պարտավոր է սահմանել այս «պրոդուկտների» համար արդարացված գներ:

ԱՊՊԱ վկայականի դիմաց վճարվող ապահովագրավճարների իրավական նշանակությանը և բնույթին 2005թ մայիսի 31-ին կայացրած թիվ-6Պ՝ որոշման մեջ անդրադարձել է Ռուսաստանի Դաշնության սահմանադրական դատարանը: ՌԴ Դաշնային ժողովի մի խումբ պատգամավորներ վիճարկում էին ԱՊՊԱ օրենքի համապատասխանությունը ՌԴ Սահմանադրությանը՝ նշելով, որ ԱՊՊԱ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ ապահովագրավճարների հաշվարկումը, և դրա հաշվարկման ժամանակ օգտագործվող սակագները որոշվում են ՌԴ կառավարության կողմից: Այնինչ, ՌԴ Սահմանադրության համաձայն՝ հարկերը և այլ պարտադիր վճարները պետք է սահմանվեն միայն օրենքով: Պատգամավորները նշել են նաև, որ ապահովագրավճարների սահմանման

լիազորությունը Կառավարությանը փոխանցելը բերել է տնտեսապես չիմնավորված ապահովագրավճարների ընդունման, ինչի հետևանքով տրանսպորտային միջոցների վարորդների դրությունը վատթարացվել է:

Սակայն, Սահմանադրական դատարանը որոշել է, որ Ռուսաստանի Դաշնության ԱՊՊԱ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ ապահովագրավճարների հաշվարկումը և դրա հաշվարկման ժամանակ օգտագործվող սակագների որոշումը ՌԴ կառավարության կողմից չի հակասում Սահմանադրությանը հետևյալ պատճառաբանությամբ. «...Ելնելով նրանից, որ քաղաքացիական պատասխանատվության պարտադիր ապահովագրության պայմանագիրը մասնավոր իրավունքի ինստիտուտ է, իսկ ապահովագրական իրավահարաբերության մասնակիցները անկախ, գույքային առումով ինքնուրույն, իրավահավասար սուբյեկտներ են՝ ապահովագրավճարը, որը իրենից ներկայացնում է վճար ապահովագրական ընկերության (ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող սուբյեկտի) ծառայության դիմաց, այսինքն՝ համաչափ, հատուցելի-անհատական պայմանագրի զին, ունի անկախ դիմումատուների կարծիքի քաղաքացիաիրավական, այլ ոչ թե հարկային բնույթ: Այն փաստը, որ տրանսպորտային միջոցի տիրապետողի կողմից իր քաղաքացիական պատասխանատվության ապահովագրության պարտականության խախտումը բերում է Վարչական իրավախախտումների մասին ՌԴ օրենսգրքի 12.37 հոդվածով նախատեսված պատասխանատվության, հիմք չի հանդիսանում ապահովագրավճարը հարկային կամ այլ ֆիսկալ վճարում համարելու համար, այլ միայն ընդգծում է պարտադիր ապահովագրության ինստիտուտի ինքնատիպությունը, որը ունի համընդհանուր(հանրային) նպատակներ և հիմնվում է տուժողների կյանքի, առողջության և գույքի պահպանության առաջնայնության վրա»:

Համաձայնվելով ՌԴ Սահմանադրական դատարանի եզրակացությանը այն առումով, որ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ԱՊՊԱ պայմանագրով ապահովագրավճարը չի կարելի նույնացնել հարկերի և այլ ֆիսկալ պարտավորությունների հետ, քանի որ այն հատուցելի բնույթ է կրում և, չնայած այն հանագամանքին, որ ԱՊՊԱ պայմանագրի կնքումը ապահովված է պետական հարկադրանքով, այնուամենայնիվ դա նախ և առաջ, քաղաքացիաիրավական մասնավոր բնույթի պայմանագիր է, որտեղ պայմանագրի երկու կողմերն էլ շահագրգռված են պայմանագրի կնքման մեջ, քանի որ ապահովագրության պայմանագիրը քաղաքացիական օրենսգրքի համաձայն՝ հատուցելի պայմանագիր է և ապահովադիրը ունի իր մասնավոր շահը այն կնքելու մեջ: Այնուամենայնիվ գտնում ենք, որ այս ինստիտուտի հասարակության մի խմբի համար համապարտադիր լինելու հանգամանքից ելնելով՝ պետությունը արդեն իսկ հանրային բնույթ է հաղորդում ԱՊՊԱ իրավահարաբերություններին և, հավասարության սկզբունքից ելնելով, արդարացի կլինի, որ, ավտոմեքենաների սեփականատերերի վրա դնելով քաղաքացիական պատասխանատվությունը ապահովագրելու պարտականությունը, և դրանով իսկ ԱՊՊԱ ոլորտում ապահովագրություն իրականացնող ընկերությունների համար օրենքի մակարդակով ստեղծելով ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու նպաստավոր պայմաններ, միաժամանակ սահմանափակվել ասյ ոլորտում գործունեություն ծավալելիս նրանց հնարավոր շահույթների չափը՝ բացառելով նրանց կողմից գերշահույթներ ստանալու հնարավորությունը: Հակառակը, մեր կարծիքով, կնշանակի պետական հարկադրանքի ուժով գումարների «կորզում» հասարակության այն մասից, որի վրա դրված է ԱՊՊԱ պայմանագրի կնքման պարտականությունը՝ հոգուտ որոշ ապահովագրական ընկերությունների: Առարկայագուրկ չէ ՌԴ սահմանադրական դատարանի անդամներից մեկի՝ Ա.Լ.Կոնոնովի՝ այս գործով հատուկ կարծիք արտահայտելը, որտեղ ԱՊՊԱ ինստիտուտի լուրջ քննադատությանն ենթարկում Կոնոնովը գրում է. «...Ակնհայտ է, որ անհիմն չէ մի շարք մասնագետների կողմից արտահայտված խելամիտ կարծիքը, որ ԱՊՊԱ օրենքի բազմաթիվ հակասականությունները պայմանավորված են առանձին ապահովագրական ընկերությունների շահերի լոբբինգով...»²:

Օրենքի մակարդակով ապահովագրավճարների արդարացի չափերի ապահովման խնդիրը բավարար չափով ապահովված չէ ո՛չ Ռուսաստանի Դաշնության, ո՛չ էլ ՀՀ օրենսդրություններում: Ռուսաստանի Դաշնության ԱՊՊԱ օրենքի 8-րդ հոդվածը ասում է, որ ապահովագրավճարի հիմքում ընկած սակագները պետք է լինեն տնտեսապես հիմնավորված: Սակայն, մեր կարծիքով,

տնտեսապես հիմնավորված արտահայտությունը լայն մեկնաբանության հնարավորություն է թողնում, օրինակ՝ ապահովագրության շուկայի զարգացման և ապահովագրական ընկերությունների տնտեսության զարգացմանը նպաստող ուժ դառնալու նկատառումով տնտեսապես հիմնավորված է ԱՊՊԱ պայմանագրի բարձր գների սահմանումը: Դիշտ է, ՌԴ կառավարության կողմից ընդունված ԱՊՊԱ սակագների սահմանման մասին որոշման համաձայն՝ Ռուսաստանի Դաշնությունում ապահովագրավճարների հաշվարկման բավակահին արդարացված և հիմնավորված կարգ է սահմանված: Սակայն, կարծում ենք, որ ՌԴ ԱՊՊԱ օրենքը պետք է սահմաներ այս սակագների հաշվարկման սկզբունքները դաշնային օրենքի մակարդակով՝ լրացուցիչ երաշխիքներ ստեղծելով ԱՊՊԱ սակագների արդարացված լինելու գործում:

ՌԴ կառավարության վերոնշյալ որոշման համաձայն՝ ապահովագրական սակագնի հետևյալ կառուցվածքն է տված՝ Բրուտտո դրույքաչափ, որը կազմում է ապահովագրական սակագնի հիմքում դրված հաշվարկային միավորի 100%-ը, Նետտո դրույքաչափ, որը Բրուտտո դրույքաչափի մասն է կազմում՝ նրա 77%-ը, և նախատեսված է բացառապես ապահովագրական հատուցումների կատարման համար, պահուստային ֆոնդի ձևավորմանն ուղղված է բրուտտո դ-ի 3%-ը, ապահովագրության իրականացման համար անհրաժեշտ այլ ծախսերին՝ 20%: Ապահովագրավճարի հիմքում ընկած սակագնի մասն կառուցվածք սահմանելը միջազգային պրակտիկայում ընդունված երևույթ է, որը ՌԴ-ում կարևոր դեր է խաղում ապահովադիրների շահերի պաշտպանության գործում, քանի որ այս կառուցվածքի շնորհիվ պաշտպանվում է ապահովադիրների շահերը ապահովագրավճարի անհիմն թանկացումից: Եթե ՌԴ-ում այս հարցը ըստ էության լուծված է կառավարության մակարդակով, ապա Հայաստանի Հանրապետությունում պատկերը լիովին այլ է:

Համաձայն ՀՀ ԱՊՊԱ օրենքի 7-րդ հոդվածի՝ «ԱՊՊԱ ոլորտում կիրառվող ապահովագրավճարները պետք է լինեն հիմնավորված, ոչ խտրական և իրենց հաշվարկման հիմքում ներառեն ապահովագրական ընկերության կողմից ԱՊՊԱ պայմանագրում նշված ապահովագրական գումարի ապահովման համար անհրաժեշտ իրատեսական ծախսերի և ողջամիտ շահույթի հաշվարկը...»: Սակայն, ՀՀ ԱՊՊԱ օրենքը չի տալիս որևէ սահմանաչափ իրատեսական ծախսերի և ողջամիտ շահույթի համար, ինչը, մեր կարծիքով, թերություն է և կարող է չարաշահումների տեղիք տալ ապահովագրական ընկերությունների կողմից

ԱՊՊԱ ոլորտում գեր շահույթ ստանալու առումով:

Այս առումով կարևոր ենք համարում անդրադառնալ Ավտոապահովագրողների բյուրոյի կողմից ներկայացված 2011թ ԱՊՊԱ ոլորտում իրականացված գործունեության ամփոփիչ տվյալներին: Համաձայն այդ տվյալների՝ 2011թ. ԱՊՊԱ ոլորտում հավաքված ապահովագրավճարների ընդհանուր թիվը կազմել է 14,8 միլիարդ (տասնչորս միլիարդ ութ հարյուր միլիոն) ՀՀ դրամ: Որպես հատուցում՝ ապահովագրական ընկերությունները 2011 թ. վճարել են 5.56 մլրդ (հինգ միլիարդ հինգ հարյուր վաթսուս միլիոն) ՀՀ դրամ, կամ՝ հավաքագրված գումարների մոտ 37.5 %-ը՝:

2011թ ամփոփիչ տվյալներից ակնհայտորեն երևում է, որ ՀՀ-ում ապահովագրական սակագները այս ինստիտուտի արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ նվազագույն սահմանից մոտ երկու անգամ բարձր է սահմանված, ինչը, մեր կարծիքով, չի կարող արդարացված համարվել:

Այս հաշվետվությունից հետո ապահովագրական ընկերությունները շտապեցին հանրությանը բացատրել, որ ԱՊՊԱ ոլորտում գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ ծախսերը չեն սպառվում ապահովագրական հատուցումով: Ապահովագրության հավաքագրված գումարներից 15%-ը վճարվում է գործակալներին՝ որպես ԱՊՊԱ պայմանագրերի վաճառքից միջնորդավճար, 2%-ը վճարվում է երաշխավորման ֆոնդին, 1%-ը Ավտոապահովագրողների բյուրոյին, դրան գումարվում է ադմինիստրատիվ ծախսերը, և արդյունքում ապահովագրական ընկերության շահույթը ստացվում է, ապահովագրողների կարծիքով, շատ ցածր գումար:

Սակայն, մեր կարծիքով, չի կարելի համաձայնել ավտոապահովագրողների հետ հետևյալ պատճառներով:

Նախ առաջինը՝ ապահովագրավճարների ընդհանուր գումարից չի կարելի հանել 15%, որպես գործակալներին վճարվող միջնորդավճար, քանի որ ապահովագրական վկայականների միայն մի մասն է վաճառվում գործակալական ցանցի միջոցով, մյուս մասը վաճառվում է անմիջապես ապահովագրական ընկերությունների կողմից, որի դեպքում միջնորդավճարի խնդիր չի առաջանում: Երկրորդը՝ մեր կարծիքով այս ոլորտում գործակալներին 15% միջնորդավճար վճարելը չի կարող արդարացված համարվել: Պետության կողմից ավտոապահովագրողների քաղաքացիական պատասխանատվության պարտադիր ապահովագրության կարգ սահմանելը արդարացվում է բացառապես պետության սոցիալական ֆունկցիայով, որից բխում է վթարներից տուժած անձանց կյանքի, առողջության և գույ-

քի համարժեք պաշտպանության անհրաժեշտություն: Այն հանգամանքը, որ ԱՊՊԱ-ի ներքումը, որպես կանոն, ունենում է մաս տնտեսության վրա դրական ազդեցություն, խթան հանդիսանալով ապահովագրության ինստիտուտի զարգացման համար, կրում է ածանցյալ բնույթ: ԱՊՊԱ պայմանագիր կնքելու պարտականությունը կրող քաղաքացիներից «գանձվող» ապահովագրավճարը 15%-ով ծանրաբեռնելը հարուստ գործակալական ցանցեր ստեղծելու նպատակով չի կարելի արդարացված համարել: Կարևոր ենք համարում նշել նաև, որ այսօր ապահովագրական ընկերությունները կամավոր ձևի ապահովագրության պայմանագրերի կնքման համար ավելի ցածր միջնորդավճարներ են սահմանել՝ 5%-ից մինչև 10%: Այսինքն՝ ազատ շուկայական հարաբերություններում ապահովագրական ընկերությունների մրցակցության պայմաններում գործակալների միջնորդավճարը ձևավորվել է շատ ավելի փոքր գումար, քան պարտադիր ապահովագրության դիմաց:

Երրորդ. ապահովագրական ընկերությունները կարող են տարվա ընթացքում իրենց կատարած ամբողջ ադմինիստրատիվ ծախսերը հաշվարկել պարտադիր ապահովագրության վրա՝ ծանրաբեռնելով ԱՊՊԱ սակագինը: Այնինչ ապահովագրական ընկերությունները իրականացնում են նաև այլ տեսակի ապահովագրություններ, որոնցից ստանում են եկամուտներ: Օրինակ՝ ապահովագրական ընկերության աշխատողների աշխատավարձը հաշվարկվի որպես ԱՊՊԱ իրականացնելու համար անհրաժեշտ ծախս, սակայն նույն աշխատողները կատարել են նաև կամավոր ապահովագրության գծով աշխատանք:

Չորրորդ. ապահովագրության իրականացման տնտեսական շահավետության համար կարևոր առանձնահատկություն է այն, որ ապահովագրավճարների գերակշիռ մասը՝ 80%-ից ավելին, մուտք է լինում ապահովագրական ընկերություն հաշվետու տարվա սկզբում և դրան նախորդ տարվա վերջում: Սակայն ապահովագրական հատուցումները վճարվում են ամբողջ տարվա ընթացքում, ինչի հետևանքով ապահովագրական ընկերությունը հնարավորություն է ունենում այս գումարները դնել շրջանառության մեջ և լրացուցիչ եկամուտներ ունենալ:

Հինգերորդ, վճարված ապահովագրական հատուցումների մի մասը հետագայում վերադարձվում է՝ հատադարձ պահանջի միջոցով այն ստանալով ապահովադրից կամ ավտոմեքենայի վարորդից:

Վերջապես, 2011թ-ին ապահովագրական ընկերությունների կողմից գեր շահույթներ ստանալու հանգամանքը երևում է ապահովագրական ըն-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

կերությունների ընդհանուր կապիտալի աճից, որը նախորդ տարվա համեմատ աճել է 30%-ով:

Մեր կարծիքով, ՀՀ-ում ԱՊՊԱ համակարգի շրջանակներում պետք է արդյունավետ մեխանիզմներ ստեղծել ապահովագրական ֆոնդի միջոցների նպատակային օգտագործման համար: Դա հնարավոր է անել, եթե օրենքի մակարդակով կարգավորվի ապահովագրական սակագնի կառուցվածքը, որով կսահմանափակվի ապահովագրական ընկերությունների կողմից ապահովագրական ֆոնդի միջոցներից կատարվող ադմինիստրատիվ ծախսերի և շահույթի շեմը: Առաջարկվում է ԱՊՊԱ օրենքով ուղղակիորեն նախատեսել, որ ապահովագրական ընկերության ադմինիստրատիվ ծախսերը և շահույթը միասին չեն կարող գերազանցել ընկերության կողմից հավաքագրված ապահովագրավճարների ընդհանուր թվի 1/4-ը կամ 25%-ը: Մնացած 75%-ը նախատեսվի բացառապես ապահովագրական հատուցումների և պահուստային ֆոնդերի ձևավորման համար: Առաջարկվում է բյուրոյին վճարվող անդամավճարը հաշվարկել որպես ապահովագրական ընկերության ադմինիստրատիվ ծախսեր, իսկ երաշխավորման ֆոնդին վճարվող գումարները՝ պահուստային ֆոնդերի ստեղծմանն ուղղված:

Բացի դրանից՝ անհրաժեշտ ենք համարում, որ օրենքում ուղղակիորեն նախատեսվի, որ ԱՊՊԱ ոլորտում ռեգրեսի կիրառման հետևանքով ստացված գումարները պետք է մտցվեն ապահովագրական ֆոնդի մեջ և ներառվեն տարեկան հաշվետվության մեջ: Նշվի նաև, որ ապահովագրական հատուցման համար նախատեսված գումարների ավելացման դեպքում, այսինքն, երբ հավաքագրված գումարների 75%-ից պակաս է ծախսվել հատուցումների վրա, մնացած գումարը պետք է ամբողջությամբ ուղղվի պահուստային ֆոնդի ձևավորմանը: Միայն նման կարգավորման դեպքում կարելի է արդարացված համարել ապահովագրավճարների չափերը: Քանի որ, մեր կարծիքով, հավաքագրված գումարների 25%-ը ինստիտուտի գործունեության վրա ծախսելու խելամիտ առավելագույն սահմանն է:

Վերոնշյալ արդարացի քննադատությունների հետ մեկտեղ հարկ ենք համարում նշել, որ ԱՊՊԱ գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնող լիազոր մարմինները՝ Ավտո-ապահովագրողների բյուրոն և Կենտրոնական բանկը, ելնելով նրանից, որ 2011թ-ին ապահովագրական հատուցումները նախատեսվածից քիչ են եղել, որոշել են բարձրացնել ապահովագրական հատուցումների շեմը: Այսպես, ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի կողմից 21.12.2011թ գրանցվել են «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»

ԻԱՄ խորհրդի կողմից 2011 թվականի դեկտեմբերի 1-ի թիվ 74-Լ որոշմամբ հաստատված՝

1. 2012 թվականի համար ԱՊՊԱ ոլորտում հիմնական և բազային ապահովագրավճարների նվազագույն և առավելագույն սահմանաչափերի և ռիսկային գործակիցների թույլատրելի արժեքների չափը սահմանող կանոնները,

2. ԱՊՊԱ պայմանագրերով ապահովագրական գումարի միասնական չափը սահմանող կանոնները:

Համաձայն այդ որոշումների՝ 2012 թվականին ապահովագրական հատուցում տրամադրելու մասին կայացվող որոշումների (եզրակացությունների) համար՝

1) անձնական վնասների համար ապահովագրական գումարը (հատուցման ենթակա առավելագույն չափ) ավելացվել է 300,000 ՀՀ դրամի չափով՝ ըստ յուրաքանչյուր տուժողի՝ կազմելով 3.300.000 ՀՀ դրամ, և 1,000,000 ՀՀ դրամի չափով՝ ըստ յուրաքանչյուր ապահովագրական պատահարի՝ կազմելով 10.000.000 ՀՀ դրամ,

2) գույքին պատճառված վնասների համար ապահովագրական գումարը (հատուցման ենթակա առավելագույն չափ) ավելացվել է 300.000 ՀՀ դրամի չափով՝ ըստ յուրաքանչյուր ապահովագրական պատահարի՝ կազմելով 1.800.000 ՀՀ դրամ:

3) ԱՊՊԱ սակագների և ռիսկային գործակիցների չափերը մնացել են անփոփոխ:

Միևնույն ժամանակ Բյուրոյի խորհուրդը վերանայել է տուժողի հուղարկավորության հետ կապված ծախսերի գծով հատուցվող միանվագ 650.000 ՀՀ դրամ սահմանաչափը՝ այն դարձնելով 1.000.000 ՀՀ դրամ⁸:

Այս եղանակով Կենտրոնական Բանկը և Բյուրոն փորձել են լուծել ապահովագրական սակագների հիմնավորված լինելու օրենքի պահանջը: Այն, որ ապահովագրական գումարը, այսինքն՝ հատուցման ենթակա առավելագույն գումարը կամ, ինչպես ընդունված է անվանել միջազգային պրակտիկայում, ապահովագրական լիմիտը, ուղղակիորեն կախված է ապահովագրավճարից, անվիճելի է: Պետք է ընդունել նաև, որ այս լիմիտը բարձրացնելը բխում է ԱՊՊԱ ինստիտուտի նպատակից: Մակայն չենք կարծում, որ այս միջոցով լուծվեց ապահովագրական ընկերությունների կամ նրանց գործակալների ԱՊՊԱ ոլորտում գերշահույթներ ստանալը բացառելու խնդիրը: Ակնհայտ է, որ ապահովագրական լիմիտները բարձրացնելը չի խանգարում ԱՊՊԱ սակագնի կառուցվածքի վերոշարադրված մոդելի ներդրմանը:

Համաձայն ՀՀ ԱՊՊԱ օրենքի 7-րդ հոդվածի՝ «...Սույն մասով սահմանված՝ խտրականու-

թյան արգելքին վերաբերող դրույթը չի կարող սահմանափակել ապահովագրական ընկերության իրավունքը սահմանելու համար տարբերակված ապահովագրավճարներ՝ հիմնվելով ապահովադիրների, ապահովագրված անձանց և (կամ) ապահովագրվող ավտոտրանսպորտային միջոցների ռիսկայնության վրա»։ Հոդվածում նշվում է նաև բռնու-մալուս համակարգի ներդրման մասին։ Ի կատար ամենով օրենքի այս պահանջը՝ Ապահովագրողների բյուրոն ընդունել է ապահովագրավճարների հաշվարկման հետևյալ բանաձևը. ապահովագրավճարը հավասար է բազային ապահովագրավճարը բազմապատկած բռնու-մալուս գործակից։ Որտեղ բազային ապահովագրավճարը իր հերթին հավասար է հիմնական ապահովագրավճարը բազմապատկած ռիսկային գործակիցներին։

Ռիսկային գործակիցներն են՝ SU տեսակը՝ մարդատար, բեռնատար և այլն։ SU-ի օգտագործման նպատակը՝ անձնական, տաքսի և այլն, SU վարորդի (ապահովադիր, ապահովագրված անձ) տարիքն ու վարորդական ստաժը, SU-ի շարժիչի հզորությունը։ Նշենք, որ բազային ապահովագրավճարի վրա ազդող ռիսկայնության հաշվարկման համար տարբեր երկրներում օգտագործվում են այլ գործակիցներ։ Տարածված կիրառություն ունի տրանսպորտային միջոցի շահագործման հիմնական վայրի գործակիցը, ըստ որի ռիսկայնության հաշվարկման հիմքում դրվում է տրանսպորտային միջոցի շահագործման հիմնական վայրում վթարների և մեքենաների քանակային հարաբերակցությունը ըստ վիճակագրության։ Պարզվում է՝ ծանրաբեռնված քաղաքներում SU-ով վնաս պատճառելու ռիսկը շատ ավելի բարձր է, քան օրինակ՝ գյուղերում։ Կարծում ենք, որ, չնայած ՀՀ-ն փոքր աշխարհագրական տարածքի, այս գործակիցները ունենում են հիմնավոր է, քանի որ Երևանում վթարի ենթարկվելու հավանականությունը զգալիորեն ավելի բարձր է, քան գյուղերում։

Մեր կարծիքով, ՀՀ-ում բազային ապահովագրավճարների վրա ազդող վերոշարադրված ռիսկայնության գործակիցները ընդհանուր առմամբ դրական երևույթ են, և նրանց միջոցով տարբերակվում է յուրաքանչյուր ԱՊՊԱ պայմանագրի արժեքը՝ կախված ապահովագրական դեպքի վրա հասնելու հավանականությունից և հնարավոր հետևանքների մեծությունից։ Տարբերակված ապահովագրավճարների շնորհիվ կատարվում է ապահովագրական ֆոնդի ձևավորման արդյունավետ բաշխում ապահովադիրների վրա, որը որևէ դեպքում չպետք է ընկալվի որպես խտրականություն։ Անվիճելի է, որ որպես տաքսի օգտագործվող մեքենայով, որը, օրինակ, 24 ժամ շահագործվում է տարբեր վարորդների կողմից, վնաս պատճառելու

ռիսկը զգալիորեն ավելի բարձր է, քան նույն տվյալներով անձնական օգտագործման մեքենայով վնաս պատճառելու ռիսկը, և այս երկու մեքենաների շահագործումից բխող պատասխանատվության ապահովագրությունը միևնույն գնով հաշվելը արդարացված չի լինի։

Ռիսկայնության գործակիցների չափերի համապատասխանության հարցը, վիճակագրական տվյալները թողնելով տնտեսագետներին և ապահովագրական ակտուարներին՝ կարևոր ենք համարում նշել, որ անսահմանափակ թվով վարորդների՝ վարելու իրավունքով կնքվող պայմանագրերի ռիսկայնության գործակիցի հաշվարկման մեթոդաբանության մեջ իրավական պրոբլեմ է նկատվում։

Ապահովագրական սակագները կախված են ԱՊՊԱ պայմանագրով տրանսպորտային միջոցը վարելու լիազորված անձանց անձնական տվյալներից՝ տարիք և վարորդական ստաժ։ Ընդ որում, եթե SU-ի վարորդ լիազորված է մեկից ավելի անձ, ռիսկայնությունը հաշվարկվում է ըստ վարորդների ամենառիսկային տվյալներ ունեցող անձի։ Սակայն, կախված լիազորված վարորդների թվաքանակից, ապահովագրական սակագինը չի փոխվում. այսպես օրենքը չի արգելում պայմանագրի մեջ նշել 10, 20 կամ ավելի վարորդի անվանում։ Այսինքն անկախ պայմանագրում նշված վարորդների քանակից՝ ապահովագրական սակագինը չի կարող գերազանցել 1.47 գործակիցը (բյուրոյի կողմից սահմանված ամենառիսկային տվյալներով վարորդի լիազորման գործակից՝ ըստ ստաժի և տարիքի)։ Այնինչ անսահմանափակ թվով վարորդների կողմից շահագործելու պայմանով ԱՊՊԱ պայմանագրի սակագինը կազմում է 1,6 գործակից։ **Կարծում ենք, որ այս պայմաններում ռիսկայնության վրա չի կարող ազդել ԱՊՊԱ վկայագրում անձանց անունները նշելու գուտ ձևական բնույթի հանգամանքը, և անսահմանափակ թվով վարորդների լիազորմամբ պայմագիր կնքելու սակագինը պետք է համընկնի ԱՊՊԱ օրենքով ամենաբարձր ռիսկայնության վարորդի լիազորմամբ ԱՊՊԱ պայմանագրի սակագնի հետ։** Ընդ որում, 2013թ-ից Բռնու-Մալուս համակարգի ներդրման հետ ԱՊՊԱ պայմանագրի գնի վրա լիազորված վարորդների տարիքի և ստաժի հետ մեկտեղ կազդի նաև վարորդական պատմությունը։ Նշենք, որ ԱՊՊԱ պայմանագրի կնքման ժամանակ ապահովագրական ընկերությանը կամ նրա գործակալին լիազորված վարորդների վերաբերյալ ոչ ճիշտ տվյալների հաղորդելը ԱՊՊԱ օրենքի 27 հոդվածի համաձայն՝ ռեգրեսի կիրառման հիմք է հանդիսանում ինչը ոչ միշտ է արդարացված¹⁰։

ՀՀ Ավտոապահովագրողների բյուրոյի

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

որոշմամբ Բոնոս-Մալուս համակարգը սկսելու է հաշվարկվել 2013թ-ի հունվար ամսից: Այս համակարգի շնորհիվ ապահովագրական պայմանագիր կնքելու ժամանակ, ապա սակագնի վրա, բացի ընդհանուր ռիսկայնության վերաբերյալ կնքված գործոններից, ազդելու է նաև պայմանագրի մեջ նշված վարորդների ԱՊՊԱ պայմանագրի կնքմանը նախորդած ժամանակահատվածում ապահովագրական պատահարների քվաքանակը և երթևեկության կանոնների խախտումները: Այս համակարգի առկայությունը ստիպում է վարորդներին լինել ավելի ուշադիր և կարգապահ ճանապարհային անվտանգության կանոնների նկատմամբ: Նրա ներդրմամբ ոչ միայն կանխվում է որոշ անբարեխիղճ վարորդների անտարբերության ձևավորումը ՃՏՊ-ների նկատմամբ (ի դեպ դա ԱՊՊԱ ինստիտուտի բացասական կողմերից մեկն է), այլ միաժամանակ ապահովագրական ֆոնդի ձևավորման արդարացված մեխանիզմ է ձևավորվում: Նշենք, որ ՀՀ ԱՊՊԱ օրենքի 7-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված ճանապարհային անվտանգության կանոնների խախտումների հաշվարկումը բոնոս-մալուս համակարգում, թողնված է Բյուրոյի հայեցողությանը:

Սահմանելով ԱՊՊԱ պայմանագիր կնքելու պարտականությունը՝ օրենսդիրը ձեռնամուխ է եղել ստեղծել, այս պարտականությունը չկատարած անձանց պատասխանատվության ենթարկելու գործուն մեխանիզմներ, որի միջոցով վարչական սանկցիաների կիրառման սպառնալիքով, համապատասխան քաղաքացիներին կհարկադրի կատարել այս պարտականությունը: Հայաստանի Հանրապետությունում ԱՊՊԱ օրենքը ուժի մեջ է մտել 2011թ. հունվարի մեկից, և, չնայած նրա, որ հասարակությունը ընդհանուր առմամբ ի սկզբանե բացասական էր տրամադրված այս երևույթի նկատմամբ, 2011թ ապրիլի 30-ի դրությամբ ՀՀ-ում հաշվառված տրանսպորտային միջոցների 85%-ը¹¹ արդեն ապահովագրված էր ԱՊՊԱ պայմանագրով: Այս բարձր ցուցանիշը ակնհայտորեն պայմանավորված է վարչական իրավախախտումների մասին օրենքում չափազանց բարձր տուգանքներ նախատեսելով: Այսպես օրինակ ՀՀ-ում «...առանց տվյալ տրանսպորտային միջոցի համար կնքված ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության գործող պայմանագիր ունենալու՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներով տրանսպորտային միջոցը վարելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով ...¹²»: Համեմատության հա-

մար նշենք, որ Ռուսաստանի Դաշնությունում նմանատիպ իրավախախտում թույլ տված անձը տուգանվում է 500-ից մինչև 800 ռուսական ռուբլի¹³, այսինքն՝ մոտավորապես 15 անգամ պակաս: Մեր կարծիքով տուգանքի նման բարձր չափ նախատեսելը, չի կարելի արդարացված համարել: ՀՀ-ում ԱՊՊԱ պայմանագրի միջին արժեքը կազմում է մոտավորապես 30000-35000 ՀՀ դրամ, և ակնհայտ է, որ այն չկնքելու համար 40000 ՀՀ դրամ տուգանք նախատեսելը, ավելի քան բավական կլիներ, որ այն անձինք, ում վրա օրենքով դրված է ԱՊՊԱ պայմանագիր կնքելու պարտականությունը, պարտադիր կատարեին այն, քանի որ չկատարելու դեպքում սպասվող սանկցիան կզերազանցեր կամ մոտ կլիներ ԱՊՊԱ պայմանագրի գնին: **Առաջարկություն է արվում իջեցնել վերոնշված տուգանքի չափը սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից և տուգանքի չափ սահմանել նվազագույն աշխատավարձի քառասունապատիկը:**

«Վարչական իրավախախտումների մասին» ՀՀ օրենսգրքի 129²-րդ հոդվածի համաձայն. «Հայաստանի Հանրապետության տարածքում հաշվառված տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ (վարձակալի) կողմից սեփականության իրավունքով իրեն պատկանող (ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագրով իրեն տրամադրված) յուրաքանչյուր տրանսպորտային միջոցի համար կնքված ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության գործող պայմանագիր չունենալը, որը տևել է ավելի քան տասը օր, առաջացնում է տուգանքի նշանակում յուրաքանչյուր տասն օրվա համար՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով, սակայն յուրաքանչյուր տարվա համար՝ ոչ ավելի, քան սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով...»: Ինչպես երևում է օրենքի այս դրույթից, ՀՀ-ում տրանսպորտային միջոցի սեփականատերերը ԱՊՊԱ պայմանագիր չկնքելու համար ենթարկվում են վարչական պատասխանատվության նույնիսկ այն դեպքերում, երբ իրենք ընդհանրապես չեն շահագործում իրենց մեքենան: ԱՊՊԱ պայմանագիր չկնքելու միակ ձևը ավտոմեքենան հաշվառումից հանելն է: Այս պատճառով 2011թ հունվարին ՀՀ-ում հաշվառված տրանսպորտային միջոցների 4%-ը դուրս եկավ հաշվառումից¹⁴: Մեր կարծիքով, օրենքի նման կարգավորումը չի բխում ապահովագրության ինստիտուտի սկզբունքներից, քանի որ ԱՊՊԱ պայմանագրով ապահովագրվում է քաղաքացիական պատասխանատվություն, որը կարող է վրա հասնել միայն տրանսպորտային միջոցի օգ-

www.lawinstitute.am

տագործման հետևանքով: Օրենքի նման կարգավորումը հակասում է նույնիսկ ՀՀ ԱՊՊԱ օրենքի ամբողջական անվանմանը. «Ավտոտրանսպորտային միջոցների **օգտագործումից բխող** պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենք: Ակնհայտ է, որ եթե ավտոմեքենան չի օգտագործվում, նրանով այլ անձանց վնաս պատճառելու ռիսկը օբյեկտիվորեն գոյություն չունի: Մեր կարծիքով, ավտոմեքենան հաշվառումից հանելու պահանջը՝ որպես վարչական պատասխանատվությունից ազատվելու միակ միջոց, արդարացված չէ, ինչը ակնհայտ է դառնում այն բոլոր դեպքերում, երբ ավտոմեքենան օգտագործվում է միայն տարվա մի քանի ամիսներին (սեզոնային օգտագործում): Օրինակ՝ ամռան ամիսներին գյուղացին այդ մեքենայով շուկա է տանում իր աճեցրած գյուղմթերքը, կամ ձյուն մաքրող մեքենաները ձմեռվա ամիսներին են միայն շահագործվում, կամ մեծ քանակությամբ վարորդներ ունեն երկու մեքենա՝ ամենազանց տիպի մեքենա, որը քշում են ձմեռվա ամիսներին, և սեղան տիպի մեքենա՝ տարվա մնացած ամիսներին և այլն: Փաստորեն այս բոլոր դեպքերում սեփականատերը ստիպված է ավտոմեքենան ամեն տարի հանել և նորից կանգնեցնել հաշվառման, ինչը բավականին ժամանակատար և բարդ գործընթաց է, ինչից խուսափելու համար, ՏՄ-ի սեփականատերը պրակտիկայում ստիպված է ԱՊՊԱ պայմանագիր կնքել ամբողջ տարվա համար: Նշենք, որ ՌԴ-ում նախատեսված է ԱՊՊԱ պայմանագրի կնքումը սեզոնային օգտագործման իրավունքով: Առաջարկում ենք որպես այս պրոբլեմի արդյունավետ լուծում, «Վարչական իրավախախտումների մասին» ՀՀ օրենքի 129²-րդ հոդվածի վերոնշյալ մասով ուժը կորցրած համարել: Նույն հոդվածի երկրորդ պարբերությունը, որը նախատեսում է առանց ԱՊՊԱ պայմանագրի **ավտոմեքենան վարելու** համար վարչական պատասխանատվություն և «Վարչական իրավախախտումների մասին» ՀՀ օրենքի 129¹-ին հոդվածի առաջին պարբերությունը, համաձայն որի. «Առանց ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության կտրոնը (այսուհետ՝ ԱՊՊԱ կտրոն) սահմանված տեղում փակցնելու՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներով տրանսպորտային միջոց վարելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով» լիովին բավարար են, որ ՀՀ-ում շահագործվող ավտոմեքենաների վարորդները կնքեն ԱՊՊԱ պայմանագիր տրանսպորտային միջոցը շահագործելու ամբողջ ժամանակամիջոցի հա-

մար: Հակառակ դեպքում ճանապարհային ոստիկանության աշխատակիցները կտուգանեն մեքենայի վարորդին ՏՄ-ի առաջին իսկ շահագործման ժամանակ: Այս առումով կարևորում ենք նաև, որ ՀՀ Ավտոապահովագրողների բյուրոն գործունե խանդավանդ ստեղծի, որպեսզի բոլոր ապահովագրական ընկերությունները ԱՊՊԱ պայմանագրի կնքումից անմիջապես հետո, բայց ոչ ուշ, քան հինգ աշխատանքային օրվա ընթացքում այդ պայմանագրերի մասին էական տեղեկությունները գրանցեն Բյուրոյին կից գործող ԱՊՊԱ **Տեղեկատվական համակարգում: Բյուրոն էլ**, համագործակցելով ճանապարհային ոստիկանության մարմինների հետ, հնարավորություն տա վերջիններիս մուտք գործել այդ տվյալների բազա: Այս բավականին պարզ մեխանիզմի գործադրման դեպքում ճանապարհային ոստիկանության աշխատակիցները հնարավորություն կունենան առանց ավտոմեքենաների վարորդներին կանգնեցնելու, ստուգել ԱՊՊԱ պայմանագիր կնքած լինելու հանգամանքը:

Չնայած վերոնշյալ չափազանց բարձր տուգանքների՝ ՀՀ ԱՊՊԱ օրենքի պահանջների կատարումն ապահովելու առումով վարչական իրավախախտումների մասին օրենքում թույլ է տրված նաև լուրջ բացթողում: **Օրենքը չի նախատեսում վարչական տուգանք սահմանափակ թվով վարորդների վարելու իրավունքով կնքված ԱՊՊԱ պայմանագրի մեջ, որպես լիազորված վարորդ չներառված անձի կողմից տրանսպորտային միջոցը վարելու համար:** Նշենք, որ համաձայն այսօր գործող՝ սահմանափակ թվով վարորդների վարելու իրավունքով կնքված ԱՊՊԱ պայմանագրի սակագների՝ ապահովագրական վճարը կարող է էականորեն տարբերվել մինչև 50%՝ կախված տրանսպորտային միջոցը վարելուն լիազորված անձանց տվյալներից (տարիք, վարորդական ստաժ): Ընդ որում, 2013թ-ից Բյուրոյի կողմից Բոնուս-Մալուս համակարգի ներդրմամբ, որով հաշվի է առնվելու լիազորված վարորդների վարորդական պատմությունը, սակագների տարբերությունը ավելի է մեծանալու: Օրենքի նման կարգավորումը ՀՀ-ում իրական վտանգ է ստեղծում, որ ապահովադիրները կանխամտածված չեն նշի սահմանափակ թվով վարորդների վարելու իրավունքով կնքված ԱՊՊԱ պայմանագրում այն վարորդներին, որոնց տվյալները բարձրացնում է ապահովագրավճարը: Գիշտ է, նման դեպքերում ԱՊՊԱ պայմանագրի մեջ չնշված վարորդի կողմից ՏՄ-ն վարելու ժամանակ ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում ապահովագրական ընկերությունը իրավունք ունի ռեգրես կիրառել: Սակայն մեր իրականության մեջ բնակչության իրավագիտակցության մակարդակը և սոցիալական ծանր վիճակը կարող

է բերել նրան, որ մասայականորեն ԱՊՊԱ պայմանագրերում չնշվեն այն վարորդները, որոնց տվյալները բարձրացնում է ապահովագրավճարը: Նշենք նաև, որ ՌԳ-ում Վարչական իրավախախտումների մասին օրենքով նմանատիպ դեպքերի համար նախատեսված է տուգանք 300 ռուսական ռուբլի:

Մեր կարծիքով, անհրաժեշտ է «Վարչական իրավախախտումների մասին» ՀՀ օրենքում կատարել համապատասխան փոփոխություն և նա-

խատեսել վարչական տուգանք տրանսպորտային միջոցի վարորդի համար այն դեպքերում, երբ ԱՊՊԱ պայմանագիրը կնքված է սահմանափակ թվով վարորդների լիազորմամբ և ինքը լիազորված չէ պայմանագրով տվյալ ՏՄ-ն վարելու համար: Առաջարկվում է տուգանքի չափը սահմանել նվազագույն աշխատավարձի քսանապատիկը:

¹ Постановление Конституционного суда РФ от 31 мая 2005 г. N 6-П//элек. ресурс <http://www.consultant.ru/online/base/?req=doc;base=LAW;n=53775>.

² Տե՛ս նույն տեղում:

³ Постановление Правительства РФ от 01.10.2011 N 808 "Об утверждении страховых тарифов по обязательному страхованию гражданской ответственности владельца опасного объекта за причинение вреда в результате аварии на опасном объекте, их структуры и порядка применения страховщиками при расчете страховой премии".

⁴ Տե՛ս էլեկտրոն. քետրու//<http://www.armtown.com/news/am/168/20120202/30918>:

⁵ ԱՊՊԱ-ի ներդրման նպատակի մասին ավելի մանրամասն տես. Սարգսյան Ա.Հ., գիտական հոդված՝ «Ապահովադրի՝ որպես ՀՀ ԱՊՊԱ օրենքով կարգավորվող իրավահարաբերությունների կողմի, պրոբլեմը», Երևան, «Օրենք և Իրականություն» պարբերական, 2012թ. Փետրվար:

⁶ Ռեգրեսի ինստիտուտի մասին ավելի մանրամասն տես. Ա.Հ. Սարգսյանի գիտական հոդված. «Ռեգրեսի կիրառման իրավական հիմքերը և առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության ԱՊՊԱ օրենքի համաձայն» (համեմատական - իրավական վերլուծություն): «Օրինականություն» պարբերական: Երևան 2012թ. Ապրիլ:

⁷ <http://insurance.am/others/89-articles/1671-capital>

⁸ <http://paap.am/index.php?al=news&pid=1&id=140&act=more>

⁹ http://paap.am/index.php?al=tariff_calculation_methodology

¹⁰ Այդ մասին ավելի մանրամասն տես. Ա.Հ. Սարգսյանի գիտական հոդված. «Ռեգրեսի կիրառման իրավական հիմքերը և առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության ԱՊՊԱ օրենքի համաձայն» (համեմատական - իրավական վերլուծություն): «Օրինականություն» պարբերական: Երևան 2012թ. Ապրիլ:

¹¹ <http://armenpress.am/arm/print/651052/>

¹² Տե՛ս «Վարչական իրավախախտումների մասին» ՀՀ օրենք, Հոդված 1292.

¹³ "Кодекс Российской Федерации об административных правонарушениях" от 30.12.2001 N 195-ФЗ (ред. от 01.03.2012), статья 12.37.

¹⁴ <http://www.armbanks.am/hy/2011/01/19/18859/>

РЕЗЮМЕ

«Правовые проблемы цены договора «Осаго» и административной ответственности за незаключение договора»

В статье произведен подробный правовой анализ законодательства РА и РФ в области регулирования обязательного страхования гражданской ответственности владельцев транспортных средств, в частности раскрыта правовая природа и сущность страховой премии и образующих ее страховых тарифов в данной области страхования. В статье также рассмотрены проблемы административной ответственности за незаключение договора «Осаго» со стороны лиц, на которых законом возложена эта обязанность. На основании анализа выявлены ряд существенных проблем в законодательствах обеих государств и предложены пути по их решению и дальнейшему совершенствованию законодательства:

SUMMARY

"Legal Problems of the contract price "CTP" and administrative liability for failure to sign the contract"

The article made a detailed legal analysis of the legislation of the RA and RF in the field of compulsory insurance of civil liability of vehicle owners, in particular disclosed legal nature and essence of the insurance premium and its constituent insurance rates in the field of insurance. The article also discussed issues of administrative responsibility for non-contract on the part of persons who lawfully charged with this duty. Based on the analysis revealed a number of significant problems in the legislation of both countries and propose ways to address them, and further improvement of the legislation:

ԴԱՎԻԹ ԴԱՎԻԴՅԱՆ

Երևանի ֆինանսաբանկային և բորսային
համալսարանի դասախոս



ՊԵՏԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՍ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾՉԻ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ԿՈՂՄԻ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Ի տարբերություն օբյեկտիվ կողմի՝ սուբյեկտիվ կողմը արտացոլում է հանցանք կատարողի գիտակցական և կամային ոլորտնորում ընթացող ներքին գործընթացները: Հանցագործության սուբյեկտիվ կողմը բնութագրվում է այնպիսի հատկանիշներով, ինչպիսիք են՝ մեղքը, շարժառիթը, նպատակը, հույզերը:

Պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության հանցակազմի սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշը մեղքն է, որը դրսևորվում է ուղղակի դիտավորությամբ: Առանց մեղքի չկա ո՛չ հանցագործություն, ո՛չ քրեական պատասխանատվություն: Արարքում մեղքի բացակայությունը վկայում է հանցագործության բացակայության մասին:

Նշենք նաև, որ ՀՀ քրեական օրենսգրքի 305-րդ հոդվածի դիսպոզիցիան սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է համարում նաև նպատակը, որը այլ հանցակազմերում համարվում է ֆակուլտատիվ հատկանիշ: Եվ այսպես, հանցակազմի սուբյեկտիվ կողմի ֆակուլտատիվ հատկանիշներն են շարժառիթը, նպատակը, հույզերը: Սուբյեկտիվ կողմի այս հատկանիշները ոչ բոլոր հանցակազմերում են առկա:

Սակայն դա չի նշանակում, որ հանցագործությունը կարող է կատարվել առանց շարժառիթի, նպատակի կամ հույզերի: Մարդկային յուրաքանչյուր արարք, այդ թվում հանցագործությունը, կատարվում է որոշակի շարժառիթներով, որոշակի նպատակի հասնելու համար և անպայման ուղեկցվում է հույզերով: Պարզապես ոչ բոլոր հանցագործությունների դեպքում է, որ այս հատկանիշները իրավաբանական նշանակություն ունեն: Իսկ պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության պարագայում, համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 305-րդ հոդվածի, նպատակը ունի կարևորագույն իրավաբանական նշանակու-

թյուն, չնայած նրան, որ այն համարվում է հանցակազմի ֆակուլտատիվ հատկանիշ:

Այնուամենայնիվ, հանցագործությունների որոշակի տեսակների դեպքում այս հատկանիշներն այդպիսի նշանակություն են ստանում, որովհետև դրանց բովանդակությունը, սոցիալական և իրավական առումով որակապես փոխում է արարքի էությունը: Նման դեպքերում նշված ֆակուլտատիվ հատկանիշներն օրենսդրի կողմից ընդգրկվում են տվյալ հանցակազմի մեջ և դառնում են պարտադիր՝

Հիմնվելով հանցագործություն կատարելու բոլոր հանգամանքների վրա, որոնք մասնավորապես ներառում են հանգամանքներ, որոնք բնութագրում են հանցագործություն գործելու կոնկրետ արարք, միջոց կամ հանգամանք, մեղադրյալի անձը և այլ հանգամանքներ «սուբյեկտիվ կողմի բովանդակության վրա,- գրում էր Բ.Ս. Վոլկովը, - մեծ ազդեցություն են գործում անձնական առանձնահատկությունները, անհատի ինտելեկտուալ և կամային հատկանիշները, պահանջմունքների, շահերի, հակումների բնույթը»²:

Նշենք նաև, որ հանցագործությունը արտաքինի և ներքինի, օբյեկտիվի և սուբյեկտիվի միասնությունն է: Մարդկային արարքի արտաքին, օբյեկտիվ դրսևորումը, որքան էլ որ այն վտանգավոր լինի, չի կարող հանցագործություն համարվել, եթե դրանում բացակայում են համապատասխան սուբյեկտիվ հատկանիշները: Հանցակազմի սուբյեկտիվ կողմը արարքի որակման և պատժի նշանակման համար ունի կարևոր իրավաբանական նշանակություն: Համաձայն ՀՀ քրեական օրենսդրության՝ հանցակազմի սուբյեկտիվ կողմի իրավաբանական նշանակությունը կայանում է հետևյալում՝

1. սուբյեկտիվ կողմն էական դեր է կատարում քրեական պատասխանատվության հիմնա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

վորման և ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքի ապահովման համար,

2. թույլ է տալիս իրարից տարբերել օբյեկտիվ կողմով միմյանց նման հանցակազմերը,

3. ապահովում է հանցագործությունների ճիշտ որակումը,

4. սուբյեկտիվ կողմի հատկանիշները կարող են հանդես գալ որպես հիմնական հանցակազմը ծանրացնող կամ մեղմացնող հանգամանքներով հանցակազմի վերածող հատկանիշներ,

5. սուբյեկտիվ կողմի հատկանիշները հանդես են գալիս որպես ընդհանուր առմամբ քրեական պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներ և հաշվի են առնվում պատասխանատվության և պատժի անհատականացման ընթացքում:

ՀՀ քրեական օրենսգրքի 9-րդ հոդվածում ամրագրված է ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքը, որի համաձայն՝

1. անձը ենթակա է քրեական պատասխանատվության միայն հանրության համար վտանգավոր այնպիսի գործողության կամ անգործության և հանրության համար վտանգավոր հետևանքների համար, որոնց վերաբերյալ նրա մեղքը հաստատված է իրավասու դատարանի կողմից,

2. օբյեկտիվ մեղսայնացումը՝ առանց մեղքի վնաս պատճառելու, քրեական պատասխանատվությունը, արգելվում է՝

Քրեական իրավունքի գիտության մեջ մեղքի վերաբերյալ ձևավորվել են երեք հիմնական տեսություններ՝ 1) վտանգավոր վիճակի տեսություն, 2) նորմատիվիստական (արժեքաբանական) տեսություն, 3) հոգեբանական տեսություն: Մեր օրենսդրությունը հիմնված է մեղքի հոգեբանական տեսության վրա:

Պ.Ս. Դագելը և Դ.Պ. Կոտովը գրում էին. «Մեղավորությունը, համարվելով անհատի հանրավտանգավորության հատկանիշ, չի կարող գոյություն ունենալ անկախ այն հանցագործությունից, որում արտահայտվում է հենց այդ հանրավտանգավորությունը: Անձը կարող է հանրավտանգ լինել, բայց եթե հանրային վտանգը չի արտահայտվում այդ հանցագործության մեջ, մեղավորությունը բացակայում է և, հետևաբար, անտեղի է նաև քրեական պատասխանատվությունը»⁴:

Նշենք նաև, որ խորհրդային քրեական իրավունքի տեսության մեջ մեղքի նորմատիվիստական

տեսությունը ձևակերպվեց Ուտսևու, Տրայնինի, Վիշինսկու աշխատություններում, որոնք առանձնացնում էին մեղքը՝ որպես հանցակազմի սուբյեկտիվ կողմի հատկանիշ և որպես քրեական պատասխանատվության հիմք: Վերջինս դիտվում էր իբրև անձի և նրա արարքի այն բոլոր հանգամանքների համակցություն, որոնք դատարանի կողմից արժանի են բարոյական առումով բացասական գնահատականի՝ պարսավանքի:

Մարդը չի կարող պատասխանատու լինել մի գործողության համար, որը կատարվել է իր կողմից ֆիզիկական հարկադրանքի, բռնության և այլ հանգամանքների ներքո, որոնք բացառում են կամքի ազատության դրսևորումը՝

Մեղքը անձի հոգեբանական վերաբերմունքն է, իր կողմից կատարվող արարքի և դրա վտանգավոր հետևանքների նկատմամբ, որը դրսևորվում է դիտավորության կամ անզգուշության ձևով: Բացի դիտավորությունից և անզգուշությունից՝ մեղքը այլ ձևով չի դրսևորվում: Ուստի մեղքը հանդես է գալիս միայն որպես հանցակազմի սուբյեկտիվ կողմի հատկանիշ: Որպես այդպիսին՝ մեղքը քրեական պատասխանատվության հիմնավորման մեջ թեև էական դեր է կատարում (քանի որ առանց մեղքի չկա հանցագործություն, ոչ էլ քրեական պատասխանատվություն), բայց ոչ ավելի, քան հանցակազմի մյուս տարրերը: Չնայած մեղքի երկու ձևերի՝ պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանությունը կատարվում է ուղղակի դիտավորությամբ:

Բավական հակասական եզրակացության է հանգել Վ.Վ. Տրոխցկին պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության դիտավորության վերաբերյալ, որն ըստ նրա՝ սպանության փորձ է, սպանություն, ինչպես նաև առողջությանը ծանր վնասի պատճառում, ինչն անզգուշորեն հանգեցրել է տուժողի մահվան: «Դրանից ելնելով,- գրում է Վ.Վ. Տրոխցկին,- տվյալ արարքները կարող են իրականացվել ոչ միայն ուղղակի և անուղղակի դիտավորությամբ, այլև մեղավորության երկու ձևով: Ընդհանուր առմամբ, կյանքի նկատմամբ ոտնձգությունը միշտ համարվում է կանխամտածված հանցագործություն»⁶:

Նշենք նաև, որ ՀՀ քրեական օրենսգրքի 305-րդ հոդվածի դիսպոզիցիայում հանցագործության հետևանքները օրենսդրի կողմից նշված չեն որպես պետական, քաղաքական կամ հասարակական

www.lawinstitute.am

գործչի կյանքի նկատմամբ մահափորձի պարտադիր հատկանիշ: Ֆորմալ հանցակազմով հանցագործություն գործելիս դիտավորությունը միշտ պայմանավորված է իրականացվող գործողության հանրավտանգավորության բնույթի գիտակցությամբ և այդ գործողությունն իրականացնելու ցանկությամբ: «Նման դիտավորությունը,- գրում են Պ.Ս. Դագելն ու Ռ.Ի. Միխենը,- համարվում է ուղղակի դիտավորություն, և միայն դա է բնորոշ կանխամտածված հանցագործություններին, որոնց բնորոշ է ֆորմալ հանցակազմը»: Նման հանցագործությունները չեն կարող կատարվել անուղղակի դիտավորությամբ, որի կամային բովանդակությունը բացառապես կապված է հանրավտանգ հետևանքների հետ, որոնք ընդգրկվում են նյութական կազմի օբյեկտիվ կողմի մեջ⁷:

Մեղքը պետք է դիտարկել մի քանի ասպեկտներով՝ հոգեբանական, քրեաիրավական, առարկայական, սոցիալական:

Հոգեբանական ասպեկտը ենթադրում է, որ մեղքի՝ որպես անձի հոգեբանական վերաբերմունքի մասին խոսելիս, օգտագործվում են այնպիսի հոգեբանական հասկացություններ, ինչպիսիք են գիտակցությունը և կամքը (գիտակցում է, նախատեսում է, ցանկանում է, գիտակցաբար թույլ է տալիս և այլն):

Քրեաիրավական ասպեկտը ընդգծում է այն հանգամանքը, որ «դիտավորություն» և «անզգուշություն» հասկացությունները կիրառվում են միայն հանցագործության կապակցությամբ: Սկզբունքորեն դիտավորությունը և անզգուշությունը կապված են մարդկային յուրաքանչյուր արարքի հետ, բայց դրանք քրեաիրավական նշանակություն են ձեռք բերում միայն այն դեպքում, երբ կատարվում է հանցանք: Ուստի, դիտավորությունը և անզգուշությունը քրեաիրավական իմաստով տարբերվում են մեղքի, դիտավորության և անզգուշության կենցաղային պատկերացումներից:

Առարկայական ասպեկտը կապված է քրեաիրավականի հետ: Սա նշանակում է, որ մեղքը վերացական հասկացություն չէ, ընդհանրապես մեղք չկա: Մեղքն առկա է այն դեպքում, երբ անձը հանցանք է կատարում: Անձն ընդհանրապես մեղավոր չի կարող ճանաչվել: Նա մեղավոր է ճանաչվում կոնկրետ հանցանքը կատարելու մեջ:

Սոցիալական ասպեկտը նշանակում է, որ հանցագործությամբ անձը ոտնձգում է կարևորա-

գույն սոցիալական արժեքների բարիքների դեմ:

Եվ այսպես, կարող ենք ասել, որ մեղքը անձի հոգեբանական վերաբերմունքն է իր կողմից կատարվող հանրորեն վտանգավոր կոնկրետ արարքի և դրա հանրորեն վտանգավոր հետևանքների նկատմամբ, որը դրսևորում է դիտավորության կամ անզգուշության ձևով և որում դրսևորվում է անձի արարքի հակասոցիալական բնույթը:

Պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանությունը կարող է կատարվել միայն ուղղակի դիտավորությամբ, անուղղակի դիտավորությամբ այս հանցագործության կատարումը բացառվում է, ինչպես նաև բացառվում է անուղղակի դիտավորությամբ սպանության փորձի կատարումը:

Մահափորձն իրենից ներկայացնում է հանցագործության իրականացման մտադրության, դիտավորության, ծագած որոշման և իրականացման գծով վերջնական գործողություն: «Այն գիտակցվում է որպես գործողություն,- գրում է Բ.Ս. Վոլկովը,- որն իրականացվում է բացառապես դիտավորությամբ, հանրավտանգ արդյունքին հասնելու նպատակով: Հանրավտանգ արդյունքին հասնելու նպատակը նախնական հանցավոր գործունեության, այդ թվում՝ մահափորձի կառուցվածքային հատկանիշն է: Չի կարող պատահել այնպես, որ չմտածված հարձակում լինի, կամ էլ չմտածված պատրաստվել հանցագործության իրականացմանը»⁸:

Իսկ սպանությունների վերաբերյալ ՌԴ գերագույն դատարանի 1999 թվականի հունվարի 27-ի «Սպանությունների գծով դատական պրակտիկայի մասին» որոշման երկրորդ կետում տրված է հետևյալ պարզաբանումը. «Եթե սպանությունը կարող է իրականացվել ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի դիտավորությամբ (որը քաղաքական սպանություններին չի վերաբերում), ապա մահափորձը հնարավոր է միայն ուղղակի դիտավորությամբ, այսինքն՝ երբ իրագործվածը վկայում է այն մասին, որ մեղավորը գիտակցել է իր գործողությունների (անգործության) հանրավտանգ լինելը, կանխատեսել է այլ մարդու մահվան վրա հասնելու հնարավորությունն և անխուսափելիությունը, սակայն մահը վրա չի հասնում իրենից անկախ առկայությունների հետևանքով»⁹:

Պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանությունը, եթե չի կատարվել ան-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

մեղսունակ անձի կողմից, ապա այն կատարվել է որոշակի պահանջումքների կատարման նպատակով:

Ս.Վ. Սկյարովը նշում է, որ «պահանջումքը հանդես է գալիս որպես մարդկային գործունեության նախապայման միայն այն դեպքում, երբ մարդ գիտակցում է դա: Միայն հասկանալով, թե ինչի կարիք նա ունի, ինչ է նրան անհրաժեշտ, որոշելով իր պահանջումքների օբյեկտը, անհատն ակտիվություն է դրսևորում: Որոշելով պահանջումքների օբյեկտը՝ սուբյեկտը դրանով իսկ ձևավորում է իր գործողությունների օբյեկտիվությունը, որը կկոնկրետացվի շարժունակության գործընթացում, կորոշվեն կոնկրետ նպատակին հասնելու միջոցները»¹⁰ :

Չնայած նրան, որ շարժառիթն ու նպատակը համարվում են սուբյեկտիվ կողմի ֆակտուալ հատկանիշներ, նրանք հանցագործության կատարման ժամանակ ունեն կարևորագույն նշանակություն: Հանցագործությունների ճնշող մեծամասնությունը կատարվում է որոշակի շարժառիթներով և հանցավոր նպատակի հասնելու համար:

«Կարելի է առանց չափազանցելու ասել, գրում էր Բ.Ս. Վոլկովը, - որ իր կողմից պայմանավորված նպատակն ու շարժառիթը հիմնական դեր ունի մարդկային վարքագծի հոգեբանական բովանդակության մեջ: Շարժառիթի ուժից և ձգտումից է կախված գործողության ուժն ու ձգտումը»¹¹ :

Շարժառիթն իրենից ներկայացնում է հարաբերականորեն կայուն դիսպոզիցիաներ: Այն ձևավորվում է անձի անհատական զարգացման ընթացքում:

Ի.Շ. Ժորդանիան գրում էր. «Ցանկացած կամային վարքագծում, անկախ դրա տևողությունից, կարելի է առանձնացնել մի քանի փուլ՝ կապված ամենից առաջ նրա հետ, որ մինչ գործելը մարդ մտածում է ինչ ուղղությամբ գործել, ինչ նպատակով նա կարող է հասնել ցանկալի վիճակի: Այդ նախապատրաստական փուլը, որը ներառում է որոշակի նպատակներ, շարժառիթների բախում, միջոցների ընտրություն, գործողությունների պլանավորում, ավարտվում է որոշումների ընդունմամբ: Այնուհետև հաջորդում է ընդունած որոշման իրականացումը»¹² :

Հանցագործության շարժառիթի հիմքում ընկած է մարդկային պահանջումքների բավարարման նպատակով հակաիրավական արարքի գի-

տակցական իրագործումը: Ա.Ի. Ռառոզն իր աշխատությունում արտահայտել է այն միտքը, որ քրեաիրավական նորմերի մեծամասնությունը, որոնք պատասխանատվություն են սահմանում որոշակի շարժառիթներով իրականացված հանցագործության համար ունեն ֆորմալ հանցակազմերի կառուցվածք: Այդ նորմերում նկարագրված հանրավտանգ գործողությունները իրենք իրենցով համարվում են «շարժառիթների բավարարման» միջոց¹³ :

Իսկ Ս.Վ. Սկյարովը նշում է, որ «հանցագործության քաղաքական շարժառիթը համարվում է հակասոցիալական միայն այն պատճառով, որ հանգեցնում է պետական, քաղաքական կամ հասարակական գործչի կյանքի նկատմամբ ոտնձգության, որը հասարակության կողմից ճանաչվում է հատկապես ծանր»¹⁴ :

Շարժառիթի և նպատակի հարաբերակցությունը չի հանգում նույնականացման: Շարժառիթը ցանկացած գործունեության պարտադիր աղբյուր է, իսկ նպատակը սուբյեկտի գիտակցական պատկերացումն է արարքի կամ գործունեության ցանկալի արդյունքի վերաբերյալ: Ա.Ֆ. Ջելինսկին արդարացիորեն նշում է, որ «նպատակը հանդես է գալիս գործողության շարժառիթ, քանի որ առաջացնում է այդ նպատակը, բայց ցանկացած շարժառիթ չի կարելի նպատակ անվանել»¹⁵ :

Իսկ նպատակաուղղվածությունը Բ.Ս. Վոլկովի կողմից որոշված է որպես ցանկացած մարդկային գործունեության տարբերակիչ հատկանիշ: «Մարդը, մինչ որևէ գործողություն իրականացնելը, որոշում է նպատակը, որին անձը ցանկանում է հասնել այդ գործողության օգնությամբ: Նպատակաուղղված է համարվում նաև վտանգավոր արարքը, բայց այդ դեպքում նպատակը ունի ավելի առանձնահատուկ նշանակություն»¹⁶ :

Պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության սուբյեկտիվ կողմը արարքի որակման ժամանակ ունի կարևորագույն նշանակություն, սակայն գոյություն ունեն նաև այլ հանգամանքներ, որոնք չի կարելի անտեսել արարքը համապատասխան հողվածով որակելիս:

- ¹ Տե՛ս ՀՀ քրեական իրավունք, դասագիրք բուհերի համար, էջ 192:
- ² Տե՛ս Уголовное право России. Общая часть: учебник для вузов/под ред. Сундурова Ф.Р. – Казань. Изд-во Казан-го ун-та 2003. С. 229.
- ³ Տե՛ս ՀՀ քրեական օրենսգիրք, ՀՀ ՊՏ N 25 (260) 02.05.03:
- ⁴ Տե՛ս Дагель П.С., Котов Д.П. Субъективная сторона преступления и ее установление – Воронеж, Воронежск. Ун-т 1974. С. 53.
- ⁵ Տե՛ս Волков Б.С. Նշված աշխատություն՝ էջ 23:
- ⁶ Տե՛ս Троицкий В.В. Նշված աշխատություն՝ էջ 123:
- ⁷ Տե՛ս Дагель П.С., Михеев Р.И. Теоритические основы установления вины: учебн. пособие. Владивосток: Дальневосток. Гос. Ун-т 1975. С. 39.
- ⁸ Տե՛ս Волков Б.С. Мотивы преступлений: (Уголовно правовое и социально-психологическое исследование) – Казань. Казанск. Ун-т 1982. С. 23.
- ⁹ Տե՛ս Бюллетень Верховного Суда РФ. 1999. N 3. С. 23.
- ¹⁰ Տե՛ս Складов С.В. Вина и мотивы преступного поведения. СПб: Юрич. Центр пресс 2004. С.72.
- ¹¹ Տե՛ս Волков Б.С. Детерминистическая природа прест.поведения. Казань, Казанск.ун-т 1975. С.13.
- ¹² Տե՛ս Жордания И.Ш. Структура и правовое значение способа совершения преступления – Тбилиси, Сабочота Сакартвело. 1977. С. 11.
- ¹³ Տե՛ս Рагог А.И. Вина и квалификация преступлений. М.ВЮЗИ 1982. С. 34.
- ¹⁴ Տե՛ս Складов С.В. Указ. соч. С. 112, также Анашкин Г.З. О формах умысла при посягательствах на внешнюю безопасность СССР//Советское государство и право. 1964. N5. С. 79-87.
- ¹⁵ Տե՛ս Зелинский А.Ф. Осознаваемое и неосознаваемое в преступном поведении – Харьков, высшая школа, изд-во Харьковск. Ун-та 1986. С. 63.
- ¹⁶ Տե՛ս Волков Б.С. Նշված աշխատություն՝ էջ 6:

РЕЗЮМЕ

Понятие субъективной стороны убийства государственного, политического или общественного деятеля

В данном труде приведено понятие диспозиции субъективной стороны 305-ой статьи уголовного кодекса РА. Произведено глубокое и многостороннее исследование. Используются мнения и итоговые оценки ряда авторов. Обработаны основательные положения в направлении усовершенствования диспозиции и практического применения. Выполнены сравнения и сопоставления, приведена особая уголовная характеристика, что может стать основой должного урегулирования уголовных взаимоотношений и для устранения несоответствий, возникших в правоприкладной практике, которые имеют важнейшее значение для правильной оценки действия (проступка) и исполнения правосудия.

SUMMARY

Concept of the subject parties the murder of the state, political or public figure

The concept of a disposition of subject parties of the 305th article of the criminal code of RA is given in this work. In-depth and multilateral study is made. Opinions and total estimates of a number of authors are used. Thorough positions in the direction of improvement of a disposition and practical application are processed. Comparisons and comparisons are executed, the special criminal characteristic that can become a basis of due settlement of criminal relationship and for elimination of the discrepancies which have arisen in right applied practice which are essential for the correct assessment of action (offense) and justice execution is provided.

ՎԱՐԴԱՆՈՒՇ ՊՈՂՈՍՅԱՆ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի
սահմանադրական իրավունքի ամբիոնի հայցորդ

ՄԱՐԴՈՒ ԽԱՂԱԳ, ԱՌԱՆՑ ՁԵՆՔԻ ՀԱՎԱՔՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ժողովրդավար պետության կայացման ճանապարհին կարևորվում է մարդու խաղաղ, առանց զենքի հավաքների իրավունքի իրականացումը որպես ժողովրդախիշխանության տարր և պետության կառավարմանը ժողովրդի մասնակցության հնարավորությունների ստեղծման գործոն:

Հավաքների ազատության իրավունքը հանդիսանում է խոսքի և ազատ տեղաշարժի իրավունքի դրսևորում. այն խոսքի ազատության իրավունքի բնական շարունակությունն է, նրա կարևոր միջոցներից մեկը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, իր մի շարք որոշումներում անդրադառնալով վերոնշյալ իրավունքին, նշել է, որ այդ իրավունքը «ժողովրդավար պետության կարևորագույն հիմքերից է, առաջընթացի և մարդկային կատարելագործման հիմնական պայման»:

Իսկ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը իր թիվ 1609 բանաձևի 8.4 հոդվածում նշել է. «Հավաքների ազատությունը պետք է երաշխավորել թե՛ օրենքով և թե՛ գործնականում»²:

Մարդու խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունքի իրականացումը երաշխավորվում և պաշտպանվում է ՀՀ Սահմանադրության 29-րդ հոդվածով, որի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունք: Հավաքների ազատության իրավունքը երաշխավորվում է նաև Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 20-րդ, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 21-րդ և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 11-րդ հոդվածներով: Այս իրավունքը մտքի, խոսքի, կարծիքների և համոզմունքների արտահայտման ազատության երաշխիքներից է³:

Սահմանադրության 29-րդ հոդվածը տվյալ իրավունքի իրականացման սահմանափակում է նախատեսում զինված ուժերում, ոստիկանությունում, ազգային անվտանգության, դատախազու-

թյան մարմիններում ծառայողների, ինչպես նաև դատավորների և սահմանադրական դատարանի անդամների համար, սակայն նշում է, որ այդ իրավունքների իրականացման սահմանափակումներ կարող են նախատեսվել միայն օրենքով: Վերոնշյալ նորմը սահմանափակում է նախատեսում սովորական պայմաններում, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության և բարքերի, այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար (հոդ. 43) և ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ (հոդ. 44):

ՀՀ Սահմանադրությամբ և միջազգային իրավական ակտերով խաղաղ հավաքների իրավունքը վերապահված է յուրաքանչյուր ոք, դա նշանակում է, որ այս իրավունքի իրականացումը վերապահված է նաև օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց՝ որպես ժողովրդավարության արտահայտման ձև: Ի տարբերություն ՀՀ Սահմանադրության՝ որոշ պետություններում այս իրավունքը վերապահված է միայն իրենց պետության քաղաքացիներին (Գ-Հ Սահմանադրություն, հոդ. 8, Ռ-Գ Սահմանադրություն հոդ. 31): Մասնավորապես Ռ-Գ Սահմանադրության 31-րդ հոդվածով խաղաղ առանց զենքի հավաքների, երթերի, ցույցերի իրավունքի վերապահումը միայն Ռ-Գ քաղաքացիներին հիմնվում է այն սահմանադրական դոկտրինայի վրա, որ հավաքների իրավունքը հանդիսանում է քաղաքական իրավունք, իսկ քաղաքական իրավունքներից օգտվելու իրավունք ունեն բացառապես Ռ-Գ քաղաքացիները: Սակայն գիտնականներից շատերը համաձայն չեն այդպիսի մոտեցմանը⁴: Նրանց մի մասն էլ նշում են, որ այս իրավունքը ունի երկակի բնույթ՝ այն կարելի է դիտարկել և՛ որպես անձնական իրավունք, քանի որ հանդիսանում է խոսքի և ազատ տեղաշարժի իրավունքի դրսևորում, և՛ որպես քա-

ղաքական, քանի որ հանդիսանում է ժողովրդախախտական տարր՝ ժողովրդի մասնակցությունը պետության կառավարմանը ձևաչափով⁵։ Մինչև 2005 թվականի սահմանադրական բարեփոխումները Հայաստանի Հանրապետությունը նույնպես այս իրավունքը վերապահում էր միայն ՀՀ քաղաքացիներին, սակայն բարեփոխումներից հետո այն համապատասխանեցրեց միջազգային իրավական չափանիշներին և վերագրվեց յուրաքանչյուր ոքու։

Մեր կարծիքով, այս իրավունքը միայն տվյալ պետության քաղաքացիներին վերագրելը այնքան էլ ճիշտ մոտեցում չէ, քանի որ, ինչպես քիչ հետո կանդիդատանք, հավաքների ազատության իրավունքից օգտվում են ոչ միայն քաղաքական նկատառումներով, ուստի այն դասել քաղաքական իրավունքների շարքին, կարծում ենք, ճիշտ չէ։ Բացի այդ՝ և՛ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, և՛ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը, և՛ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին եվրոպական կոնվենցիան հավաքների ազատության իրավունքը վերագրում են յուրաքանչյուր անձի։

Տեսության մեջ «Հավաք» հասկացությունը մեկնաբանվում է որպես առնվազն երկու անձի համատեղ մասնակցություն հրապարակային միջոցառմանը, սակայն բոլոր այն դեպքերում, երբ մեկ անձ է հանդես գալիս կարծիք հնչեցնելու կամ բողոք հայտնելու հրապարակային եղանակով, պետությունը պարտավոր է վերջինիս ընձեռել անհրաժեշտ պայմաններ։ Պարզապես այս դեպքում հավաքի անցկացման իրավունքին առնչվող կանոններն ամբողջությամբ չեն գործում⁶։

Ինչպես նշել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, հավաքների ազատությունը, որը երաշխավորվում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 11-րդ հոդվածով, տարածվում է ինչպես հասարակական վայրերում հավաքների, այնպես էլ մասնավոր հավաքների վրա, և պետական իշխանության մարմինների կողմից այս իրավունքի իրականացման ցանկացած անօրինական միջամտություն ենթակա է դատական պաշտպանության⁷։ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է նաև, որ խաղաղ հավաքների ազատության իրավունքը հանդիսանում է խոսքի ազատության իրավունքի բնական շարունակությունը, նրա կարևոր միջոցներից մեկը, և պետությունները ոչ միայն պետք է ամրագրեն և երաշխավորեն այս իրավունքները, այլ պիտի ցանկացած ձևով նպաստեն այս երաշխավորված իրավունքների իրագործմանը։

«Հավաք» հասկացության որոշակի մեկնաբանություն է տրված ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի 1994 թվականի մարտի 31-ի թիվ 412/1990 զեկույցում, համաձայն որի՝ «հավաքների ազատության պաշտպանություն տրամադրվում է միայն որոշակի նպատակի համար անձանց միտումնավոր ժամանակավոր հավաքներին»⁸։

«Հավաք» հասկացության սահմանման մեջ վճռորոշ տարրը միևնույն վայրում հավաքված անձանց միավորող ընդհանուր մտադրությունը և նպատակն է⁹։ Այդ իրավունքը նաև ժողովրդավարության կարևոր տարր է, պետության գործերի կառավարմանը քաղաքացիների մասնակցության ձև¹⁰։

Խաղաղ, առանց զենքի հավաքների իրավունքը հնարավորություն է տալիս անձանց հավաքվել կամավոր, առանց զենքի, ցանկացած սահմանադրական արժեք ունեցող նպատակի համար, օր.՝ հասարակական կարծիք արտահայտելու և ցանկացած տիպի իրադարձություն քննարկելու համար կամ հասարակական նշանակության հիմնախնդիր լուծելու համար։ Եվ այդ հիմնախնդիրը կարող են լուծել որևէ վայրում կամ շարժվելով մի վայրից մյուսը։ Այս իրավունքը հնարավորություն է տալիս հավաքվել ոչ միայն հասարակական-քաղաքական խնդիրներ լուծելու, այլ հասարակական միջոցառումներ անցկացնելու համար, որոնց թվին են պատկանում օր.՝ ցուցահանդեսները, գիտաժողովները և այլն¹¹։

Մասնագիտական գրականության մեջ գիտնականների մեծ մասը հավաքների ազատությունը վերլուծելիս մեծ ուշադրություն է դարձնում հավաքների անցկացման կարգին։ Տեսության մեջ հրապարակային միջոցառումների անցկացման կարգը, կախված հավաքների ազատության սահմանափակման աստիճանից, դասակարգում են 2 տիպի՝ թույլատրական և ծանուցողական։ Բացի դրանից՝ երբեմն առանձնացվում է հայտային կարգ։ Թույլատրական կարգի ժամանակ մինչև խաղաղ, առանց զենքի հավաքների անցկացումը պետք է մասնակիցները ունենան պետական լիազորված մարմնի թույլտվությունը, իսկ ծանուցողական կարգի ժամանակ այդպիսի թույլտվության կարիք չկա, բայց պետական լիազոր մարմինը կարող է արգելել հավաքների անցկացումը¹²։

Հեղինակներից մեծ մասի կարծիքով թույլատրելի կարգը հիմնականում կիրառվում է ավտորիտար պետություններում, իսկ ծանուցողականը՝ ժողովրդավար¹³։

Գիտնականները, վերլուծելով խաղաղ հավաքների անցկացման իրավունքի վերաբերյալ մի-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքները և ՄԻԵԳ-ի նախադեպային իրավունքը, եկել են հետևյալ եզրահանգման. «Խաղաղ հավաքներ անցկացնելու իրավունքի օրենսդրական կարգավորումը չպետք է սահմանափակի այդ իրավունքը, իսկ կանոնակարգումը չպետք է ներառի այդ իրավունքից օգտվելու թույլտվության համակարգ»¹⁴ :

Հայաստանի Հանրապետությունում կիրառվում է ծանուցողական կարգը: Դա բխում է «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 2-րդ գլխից, որի համաձայն՝ հանրային հավաքները անցկացվում են կազմակերպչի գրավոր իրազեկումից հետո՝ բացառությամբ մինչև 100 մասնակից ունեցող, շտապ և ինքնաբերուի հավաքների:

Հայաստանի Հանրապետության անկախացումից ի վեր ՀՀ-ում հավաքների ազատության իրավունքը կարգավորվում էր 1988 թվականի հուլիսի 29-ի «Ժողովների, միտինգների, փողոցային երթերի ու ցույցերի կազմակերպման և անցկացման սահմանված կարգի խախտման համար պատասխանատվության մասին» N 1289-XI հրամանագրով, ինչպես նաև ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1988 թվականի հուլիսի 28-ի «ՍՍՀՄ-ում ժողովների, միտինգների, փողոցային երթերի ու ցույցերի կազմակերպման և անցկացման կարգի մասին» 9306- XI հրամանագրով: 1995 թվականից Սահմանադրության ընդունմամբ դրա 26-րդ հոդվածում ամրագրվեց քաղաքացիների խաղաղ, առանց զենքի ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու իրավունքը:

2004 թվականին ընդունվեց «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» ՀՀ օրենքը, որի 16-րդ հոդվածով վերը նշված ակտերը ճանաչվեցին ուժը կորցրած: Հիշյալ օրենքը հետագայում արժանացավ Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ/ ԺՀՄԻԳ-ի քննադատությանը:

Մասնավորապես Վենետիկի հանձնաժողովն իր 60-րդ նստաշրջանում կարծիք հայտնեց, որ «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» ՀՀ օրենքը չի համապատասխանում այն պահանջին, որ հատկապես հավաքների իրավունքին նվիրված օրենքները պետք է սահմանափակվեն պետական մարմինների կողմից թույլատրելի միջամտության օրենսդրական հիմքերի սահմանումով: Բացի այդ՝ օրենքը սահմանում է միջոցառումների սահմանափակումների ոչ պատշաճ հիմքեր¹⁵ :

Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը 2004 թվականի հոկտեմբերին ընդունած թիվ 1405 (2004) բանաձևում կոչ արեց Հայաս-

տանի իշխանություններին. «2005 թվականի մարտից ոչ ուշ փոփոխություններ կատարել օրենքում, որպեսզի այն համապատասխանի Եվրոպայի խորհրդի չափանիշներին և գործնականում ապահովի ժողովների ազատությունը»¹⁶ :

Վերոգրյալի արդյունքում շրջանառության մեջ դրվեց «Հայաստանի Հանրապետության «ժողովներ, հավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի՝ 11 հոդվածից բաղկացած նախագիծ: Այն փորձաքննության ենթարկվեց ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի և Վենետիկի հանձնաժողովի կողմից, որոնց կարծիքները համընկնում էին: Այս երկու մարմիններն էլ կարծում էին, որ «ժողովներ, հավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով նախատեսվում են որոշակի տեղաշարժեր, այնուհանդերձ մնում էին խիստ սահմանափակումներ և խորհուրդ էին տալիս այս ուղղությամբ լրացուցիչ քայլեր ձեռնարկել: Օրենքի նախագծով առաջարկվող փոփոխությունների գերակշիռ մասը Վենետիկի հանձնաժողովը զնահատել էր փոփոխություններ չառաջացնող, խմբագրական բնույթի և հրապարակային միջոցառումների մասնակիցների իրավունքների կամ պարտականությունների վրա ազդեցություն չունեցող¹⁷ : Վենետիկի հանձնաժողովը կրկին հաստատել էր օրենքը Մարդու իրավունքների եվրոպական կոմիտեի պահանջներին համապատասխանացնելու վերաբերյալ 60-րդ լիազումար նիստում ընդունած իր կարծիքը¹⁸ :

2004 թ. հունվարի 12-ի «Եվրոպայի որհրդի անդամ պետությունների կողմից ստանձնած պարտավորությունների կատարման ԵԽԽՎ Հանձնաժողովի թիվ 10027 զեկույց փաստաթուղթը անդրադառնալով ՀՀ-ում երթերի և ցույցերի իրականացման սահմանափակման խնդրին, նշեց. «Մենք ակնկալում ենք, որ իշխանությունները ապագայում կանեն ամեն հնարավորը հանրահավաքների իրավունքի, և՛ օրենքի, և՛ հասարակական կարգի պահպանման, այդ իրավունքներն իրականացնելու միջև համապատասխանեցումը ապահովելու համար: Այս իրավունքը պետք է պաշտպանվի բոլորի համար և առանձին-առանձին, հատկապես ընտրական ժամանակահատվածում: Օրենքի և հասարակական կարգի պաշտպանությունը չի կարող արդարացնել հանրահավաքների և միավորումներ ստեղծելու ազատության սահմանափակումները»¹⁹ :

2005 թվականի մարտին ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրա-

վունքների գրասենյակի և Եվրոպայի խորհրդի Վենետիկի հանձնաժողովի փորձագետները հանդիպում ունեցան Հայաստանի իշխանությունների հետ՝ ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին ՀՀ օրենքի մեջ փոփոխությունների շուրջ խորհրդակցելու նպատակով: Հայաստանի իշխանությունների հետ քննարկումները ծավալվել են առանցքային խնդիրների՝ ինքնաբուխ ցույցերի և պատասխան ցույցերի կազմակերպման ազատության շուրջ: Նաև քննարկվել են իրազեկման ընթացակարգերը, հրապարակային միջոցառման սահմանափակման և դադարեցման հիմքերը, ինչպես նաև հրապարակային միջոցառման մասնակիցների վարքի համար պատասխանատվությունը: Հայաստանի Հանրապետությունը պարտավորվել էր փոխել վերոնշյալ օրենքը՝ համապատասխանեցնելով միջազգային չափանիշների²⁰:

2005 թվականի հոկտեմբերի 4-ին ՀՀ Ազգային ժողովը, հաշվի առնելով Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի արած առաջարկությունները, «ժողովներ, հավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» ՀՀ օրենքում որոշակի փոփոխություններ կատարեց: Այնուամենայնիվ, մի շարք նկատառումներ հաշվի չառնվեցին, մասնավորապես պահպանվեցին 9-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումը, որի համաձայն՝ զանգվածային միջոցառումների անցկացումն արգելվում է պետական, հատուկ, կարևորագույն օբյեկտների տարածքներից այնքան հեռավորության վրա, որը ոստիկանությունը անհրաժեշտ կհամարի անվտանգության նկատառումներով:

2008 թվականի մարտի 1-2-ին Երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների հետ կապված նույն թվականի մարտի 17-ին ՀՀ ԱԺ-ն փոփոխություններ կատարեց օրենքում, որոնք փաստորեն հակառակ առավել բարելավման սպասելիքների՝ հավաքների անցկացումը ընդհանրապես դրեցին հարցականի տակ:

Համաձայն «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին 2008 թվականի մարտի 18-ի ՀՕ-1 ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի՝ 3-րդ կետը շարադրված էր հետևյալ խմբագրությամբ. «Հրապարակային միջոցառումների անցկացումը լիազոր մարմնի կողմից կարող է արգելվել, «Եթե, ըստ հավաստի տվյալների, դրանք ուղղված են սահմանադրական կարգը բռնի տապալելուն, ազգային, ռասայական, կրոնական աստվություն բորբոքելուն, բռնություն կամ պատերազմ քարոզելուն կամ կարող է հան-

գեցնել զանգվածային անկարգությունների և հանցագործությունների, պետական անվտանգության, հասարակական կարգի, հանրության առողջության ու բարոյականության խաթարմանը, այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների ոտնահարմանը»:

Այս տվյալները կարող են համարվել հավաստի, եթե դրանց առնչությամբ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ոստիկանությունը կամ ազգային անվտանգության ծառայությունը ներկայացրել է պաշտոնական եզրակացություն...»:

Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովն իր թիվ 1374 բանաձևում հայտնել է մտահոգություն՝ նշելով, որ «Նորմը առաջին հայացքից համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը և ժողովրդավար պետության չափանիշներին, բայց վերոնշյալ օրենքով կարգավորված չէ այն հարցը, թե այդ իրավունքի սահմանափակման համար պայման հանդիսացող «հավաստի տվյալները» որտեղից, ինչ ծավալով և ծանրակշռվածությամբ պետք է լինեն²¹: Այս հոդվածը 2008 թվականի հունիսի 16-ին ՀՕ-74-Ն-ով ենթարկվեց փոփոխության: Հոդվածի երկրորդ մասում ավելացվել է «հիմնավորված» բառը, այսինքն՝ վերոնշյալ միջոցառումների անցկացումը կարող է սահմանափակվել միայն, եթե ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանությունը կամ ազգային անվտանգության ծառայությունը ներկայացնեն պաշտոնական *հիմնավորված* եզրակացություն:

Նույն բանաձևում Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը նշել է նաև. «Ավելին, օրենքը չի պարզաբանում, թե արդյո՞ք այդ հավաստի տեղեկությունները հասանելի են հայտ ներկայացնողներին և հանրությանը, ենթակա՞ են բողոքարկման, և, վերջապես, մտավախություն կա, որ ցանկացած ժամանակ ՀՀ իշխանությունների կողմից անընդունելի համարվող հանրահավաքի հայտի դեպքում լիազոր մարմինը կարող է ստանալ ցանկալի հավաստի տեղեկությունը»:

Այս խնդրին են անդրադարձել նաև Վենետիկյան հանձնաժողովը և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը՝ նշելով. «...հիմնավորում չի կարող համարվել ոստիկանության կամ ազգային անվտանգության ծառայության եզրակացության տրամադրումը՝ առանց դրա դեմ բողոքարկելու որևէ հնարավորության: ...սա կարող է պետական իշխանության մարմիններին թույլատրել, որ նրանք հավաքները սահմանափակեն այնպիսի պատճառներով, որոնք Կոնվենցիայով թույլատրված չեն»²²: «Պետք է լինի ամբողջովին նոր վերանայում, որն իրականացնող մարմինն

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

իրավունք կունենա բեկանել վիճարկվող որոշումը և գործը վերադարձնել նոր որոշում կայացնելու համար»²³ :

Ըստ նույն հոդվածի 6-րդ կետի փոփոխությունների, երբ միջոցառումները վերածվում են զանգվածային անկարգությունների, որոնք հանգեցնում են մարդկային զոհերի, լիազոր մարմինը կարող է արգելել զանգվածային հրապարակային միջոցառումների անցկացումը մինչև հանցագործության հանգամանքների և հանցանք կատարած անձանց բացահայտումը: Սա նշանակում է, որ առանձին անձանց պատճառով, մարդիկ կարող են զրկվել իրենց խաղաղ, առանց զենքի հավաքների իրավունքի իրականացումից, իսկ դա հակասում է ինչպես Եվրոպայի խորհրդի չափանիշներին, այնպես էլ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին:

Այս հարցի առնչությամբ ՄԻԵԴ-ն ունի իրավական դիրքորոշումներ, մասնավորապես ՄԻԵԴ-ն իր «Զիլիներգն ընդդեմ Մոլդովայի» գործով նշել է. «Անհատը չի դադարում օգտվել խաղաղ հավաքի իրավունքից ցույցի ընթացքում այլ անձանց կողմից գործած հատուկեմտ բռնության կամ այլ պատժելի արարքների հետևանքով, եթե ինքը՝ տվյալ անհատը, պահպանում է իր մտադրությունների և վարքագծի խաղաղ բնույթը²⁴ », իսկ ավելի վաղ մեկ այլ «Եզելինն ընդդեմ Ֆրանսիայի» գործով տվել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Հանրահավաքի ընթացքում այլ անձանց կողմից կատարված բռնության առանձին դրսևորումների կամ այլ պատժելի արարքների արդյունքում մարդը չի կարող զրկվել խաղաղ հավաքների ազատության իրավունքից, եթե տվյալ անձը պահպանում է խաղաղ մտադրությունը կամ վարքագիծը»²⁵ :

Ավելի ուշ ընդունվեց Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի թիվ 1609 բանաձևը, որի 7-րդ կետը նշում է. «Արտակարգ իրավիճակների ավարտից մի քանի օր առաջ՝ 2008 թվականի մարտի 17-ին, Ազգային ժողովը, կառավարության առաջարկով հրավիրված արտակարգ նիստի ընթացքում ընդունեց մի շարք փոփոխություններ «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» ՀՀ օրենքում, որոնք էապես սահմանափակում են հավաքների ազատության իրավունքը և իշխանություններին մեծածավալ հայեցողական լիազորություններ վերապահում՝ արգելելու քաղաքական ժողովները և ցույցերը: Հետևաբար, դրանք հակասում են եվրոպական չափանիշներին, որոնք ամրագրված են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 11-րդ հոդվածում, ինչպես նաև խախտում Հայաստանի

Հանրապետության՝ որպես Եվրոպայի խորհրդի անդամ պետության պարտավորությունները և հանձնառությունները:

Եվրոպայի խորհրդի Իրավունքի միջոցով ժողովրդավարության եվրոպական հանձնաժողովը (Վեներտիկի հանձնաժողով) և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը նույնպես համատեղ եզրակացության նախագծում նշել են, որ. «...առաջարկված փոփոխություններն ընդունելի չեն համարվում, քանզի դրանք էականորեն խստացնում են հավաքների իրավունքի սահմանափակումները», իսկ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը իր 1609 (2008) բանաձի 12.3 կետի համաձայն անհրաժեշտ է համարում վերոնշված օրենքում ՀՀ Ազգային ժողովի կատարած փոփոխությունները ուժը անմիջապես կորցրած ճանաչել՝ համապատասխան Վեներտիկի հանձնաժողովի առաջարկներին»²⁶ :

Նույն բանաձևում Վեհաժողովը ողջունում է ՀՀ Նախագահի կողմից պաշտոնի ստանձնման խոսքում արտահայտած սույն օրենքը եվրոպական չափանիշներին համապատասխանեցնելու մտադրությունը:

Սրան հաջորդեց Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի 1620 բանաձևը, որը վերաբերվում էր թիվ 1609 բանաձևի կատարմանը, որի 4.1 կետով վեհաժողովը ողջունում է «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» ՀՀ օրենքի ընդունումը Եվրոպայի խորհրդի չափանիշներին համահունչ և համարում է, որ այդ առումով Վեհաժողովի ներկայացրած պահանջն իշխանությունների կողմից կատարվել է²⁷ :

Պետք է նկատել, որ եթե հավաքների վայրի և ժամանակի տեղափոխման առաջարկը չի համարվում լուրջ հավաքների արգելման պատճառ, այլ իրականացվում է միայն մասնակիցների և երրորդ անձանց իրավունքների պաշտպանության ու անվտանգության ապահովման նկատառումներով և քաղաքացիների համար անհարմարությունների վերացման համար, ապա հավաքների ազատության այդպիսի սահմանափակումը մեր կարծիքով համապատասխանում է սահմանադրությամբ ամրագրված սահմանափակման նպատակներին և միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներին:

Որոշ պետություններում հենց սահմանադրորեն նշվում է այն նպատակը, որի համար կարելի է սահմանափակել հավաքների ազատության իրավունքը: Օր.՝ Շվեդիայում և Պարագվայում հավաքների ազատության իրավունքը կարող է սահմանափակվել ճանապարհային երթևեկության անվտան-

գության նկատառումներով, Սլովենիայում և Էստոնիայում՝ համաճարակի կանխման նկատառումներով, այլ շատ պետություններում՝ Գ-Դ-Հ-ում, Իսպանիայում, Իտալիայում և Բելգիայում, կախված այդ միջոցառումների անցկացման վայրից (բաց տարածություն կամ փակ տարածություն)՝ գործում է հավաքների իրավունքի իրականացման տարբեր իրավական ռեժիմ:

Շատ պետությունների օրենսդրություններում նշվում է այն վայրը և այն ժամանակը, երբ և որտեղ չի կարելի իրականացնել այդպիսի միջոցառումներ: Այսպես՝ Շվեյցարիայի ֆեդերալ դատարանը լեզիտիմ է համարել, այն իրավական ակտը, համաձայն որի արգելում է քաղաքական միջոցառումների իրականացումը հասարակական հողում ընդհանրապես կիրակի օրերին, Մեծ տոների օրերին և մյուս օրերին ժամը 22.00- 07.00 ընկած ժամանակահատվածում²⁸: 1941 թվականին «Կոկսը ընդդեմ Նյու Հեյշիքի» գործով ԱՄՆ-ի Գերագույն դատարանը որոշեց, որ հասարակական անվտանգության ապահովման համար օրենսդիրը իրավասու է հասարակական վայրերում կանոնակարգել երթերի և ցույցերի անցկացման ժամանակը, վայրը և իրականացման կարգը: Այդպիսի կանոնակարգում իրականացվում է նահանգների օրենսդրությամբ, որոնցից շատերը արգելում են այդպիսի միջոցառումների անցկացումը դատարանների շենքերի, քրեակատարողական հիմնարկների և ռազմական օբյեկտների մոտ, որպեսզի խուսափեն քաղաքականացումից²⁹:

Եվրոպայի խորհրդի չափանիշների համաձայն՝ հասարակական վայրերում հավաքներ անցկացնելու համար նախնական համաձայնություն ստանալը նույնպես համարվել է իրավաչափ: Դա համապատասխանում է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Կոնվենցիայի 11-րդ հոդվածին, համաձայն որի՝ «Այդ իրավունքների իրականացումը ենթակա չէ որևէ սահմանափակման, բացի նրանցից, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակության մեջ՝ ի շահ պետական անվտանգության ու հասարակական անդորրի, անկարգություններն ու հանցագործությունները կանխելու, այլ անձանց առողջությունն ու բարոյականությունը կամ նրանց իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու նպատակով: Սույն հոդվածը չի խոչընդոտում օրինական սահմանափակումներ մտցնել զինված ուժերի, ոստիկանության և պետական վարչակազմի մեջ մտնող անձանց կողմից այդ իրավունքների իրականացման վրա, եթե իշխանությունները դա անում են հա-

վաքների խաղաղ բնույթը ապահովելու համար: Բոլոր այն դեպքերում, երբ իշխանության համապատասխան մարմինները կասկածներ ունեն, որ այդ հավաքները չունեն խաղաղ բնույթ, կամ եթե դա ակնհայտ է դառնում հավաքների իրականացման ընթացքում, հավաքների իրականացման արգելքը կամ դրա ընդհատումը չի հակասում Կոնվենցիայի 11-րդ հոդվածին: Միևնույն ժամանակ իշխանության մարմինների կողմից պատասխանի բացակայությունը հավաքների իրականացման համաձայնության նշան է»³⁰:

Վերջերս՝ 2011 թվականի ապրիլի 22-ին, Հայաստանի Հանրապետությունում ընդունվեց օրենք «Հավաքների ազատության մասին», որի 5-րդ հոդվածի համաձայն՝ «Հավաքների ազատությունը կարող է սահմանափակվել միայն այն դեպքում, երբ ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության և հասարակական կարգի պահպանումը, հանցագործությունների կանխումը, հանրության առողջության ու բարոյականության (այսուհետ՝ հանրության շահեր), այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը (այսուհետ՝ այլ անձանց սահմանադրական իրավունքներ) գերակայում են հավաքի ազատության նկատմամբ»:

Այստեղ ձևակերպումը մի փոքր այլ է. մեր կարծիքով, սա նշանակում է, որ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում պետք է գնահատվի, թե մյուս նշված արժեքները գերակայում են արդյոք հավաքների ազատության իրավունքի նկատմամբ, թե՛ ոչ:

Նշված օրենքի 8-րդ հոդվածը ՀՀ Սահմանադրության 29-րդ հոդվածում նշված հատուկ կատեգորիայի անձանց հավաքների մասնակցության իրավունքը չի սահմանափակում, միայն նշում է, որ նրանք հավաքների ժամանակ պետք է պահպանեն քաղաքական չեզոքությունը և հավաքների չեն կարող մասնակցել ծառայողական համազգեստով:

Օրենքը նաև կարգավորում է հավաքների իրագրեման կարգը, լիազոր մարմնի ակտի կայացման ժամկետը և տեսակները, հավաքների արգելման, դադարեցման և ցրելու հիմքերը, հավաքների մասնակիցների պարտականությունները և այլն:

Օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետով նշվում է, որ ոստիկանությունը պարտավոր է հավաքի անցկացման վայրից հեռացնել հավաքի ընթացքը կոպտորեն խախտող անձանց: Իսկ 33-րդ հոդվածը ոստիկանությանը հնարավորություն է տալիս դադարեցնել հավաքը միայն այն դեպքում, եթե այլ կերպ հնարավոր չէ կանխել այլ անձանց սահմանադրական իրավունքների կամ հանրության շահերի անհամաչափ սահմանափակումը:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Կարծում ենք, որ վերոնշյալ օրենքը ավելի կատարելագործված է և կարգավորում է հավաքների հետ կապված գրեթե բոլոր իրավահարաբերությունները, սակայն, մեր կարծիքով, օրենքում կան թերություններ, կամ, ավելի ճիշտ, օրենսդրական բացեր: Մասնավորապես՝ օրենքի 2-րդ հոդվածում տրված հավաքի հասկացությունը թերի է. մեր կարծիքով ավելի ճիշտ կլիներ՝ տարաբնույթ մեկանաբանություններից խուսափելու համար տրվեր «ժողովներ», «հանրահավաքներ», «երթեր», «ցույցեր» եզրույթների հասկացությունը:

Օրենքի 7-րդ հոդվածում նշված է, թե ով կարող է լինել հավաքի կազմակերպիչ, սակայն նշված չէ, թե ով չի կարող լինել հավաքի կազմակերպիչ: Մեր կարծիքով, ճիշտ կլիներ, որ հոդված 8-ը ձևակերպվեր հետևյալ կերպ՝

«Հավաքների կազմակերպիչ չեն կարող լինել՝

- դատարանի վճռով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձիք, ինչպես նաև դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձիք,

- այն քաղաքական կուսակցությունները, հասարակական միավորումները և կրոնական կազմակերպությունները և նրանց մասնաճյուղերը, որոնց գործունեությունը կասեցվել կամ արգելվել է օրինական կարգով»:

Վերոնշյալ օրենքում նշված չէ նաև հավաքի կազմակերպիչի իրավունքները և պարտականությունները:

Օրենքի 19-րդ հոդվածում նշված են այն դեպքերը և վայրերը, որոնց դեպքում արգելվում է հավաքների անցկացումը: Սակայն մենք կարծում ենք, որ պետք է առանձնացվեն հավաքների արգելման դեպքերը հավաքների արգելման վայրերից: Մասնավորապես կարող է ձևակերպվել այսպես՝ « Հոդված 19 Հավաքների անցկացումը արգելվում է՝ եթե

4) *հավաքն անցկացվելու է «Հայաստանի ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ից կամ գազի ստորգետնյա պահեստարաններից կամ դրանց սպասարկման կառույցներից կամ «Օրբիտա-2» վերգետնյա արբանյակային կայանից այնպիսի հեռավորության վրա, որը սպառնում է դրանց անվտանգությանը* և այլ վտանգավոր արտադրական և այլ օբյեկտների հարակից տարածքում, որոնց գործադրումը պահանջում է անվտանգության կանոնների պահպանում:

Եվ շարունակել՝

5) Երկաթուղային կայանների, երկաթգծի,

բարձր լարման հոսանքի մալուխների հարակից տարածներում, որը կարող է վտանգել մասնակիցների անվտանգությունը:

6) Սահմանապահ գոտում, եթե չկա սահմանապահ մարմինների թույլտվությունը:

7) Հասարակական բոլոր այն վայրերում, որը կաթվածահար է անում մարդկանց բնականոն կյանքը: Նշված հասարակական վայրերի ցանկը հաստատում է ՀՀ կառավարությունը:

8) Պետական թագարանների և պատմամշակութային կոթողների մոտ հավաքների անկացման կարգը սահմանվում է կառավարության որոշմամբ»:

Այնուհետև մինչև 20 հոդվածին անցնելը ավելացնել ևս մեկ՝ 19.1 հոդված՝

«Հոդված 19.1 Հավաքների անցկացման վայրերը

1. Հավաքները կարող են անցկացվել հավաքների անցկացման նպատակին հարմար ցանկացած վայրում, եթե դրա անցկացումը չի վտանգում հավաքների մասնակիցների անվտանգությունը և շինության փլուզման վտանգ չի ներկայացնում:

2. Առանձին վայրերում հավաքների արգելման կամ սահմանափակման մասին պետք է հստակ սահմանված լինի օրենքով»:

Ճիշտ կլիներ, որ Վեներտիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի համատեղ եզրակացության համաձայն ստեղծվեր օրենքի կիրառությունը մոնիտորինգի ենթարկելու և վիճակագրական տվյալների համեմատական վերլուծություն կատարելու մեխանիզմ:

Վերոշարադրյալից երևում է, որ Հայաստանի Հանրապետությունում հաճախ փոփոխության են ենթարկվել մարդու հավաքների իրավունքը կարգավորող օրենքները, դրանք անընդհատ կատարելագործվել են և հասցվել միջազգային չափանիշներին: Սակայն այժմ էլ Հայաստանում հանդիպում են հավաքների իրավունքի իրականացման անհարկի սահմանափակման դեպքեր կամ համապատասխան մարմնի կողմից հավաքների վայրի և ժամանակի փոփոխման առաջարկների անհարկի պատճառաբանություններ, ինչի մասին է վկայում Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը իր թիվ 1677 բանաձևի 10-րդ կետում: Անդրադառնալով նշված խնդրին՝ նշում է. «Չնայած «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կատարված դրական փոփոխություններին, Վեհաժողովը նկատում է, որ ժողովներ անցկացնելու հայտերը նախկինի նման հաճախ տեխ-

նիկական հիմքերով մերժվում են պետական մարմինների կողմից, կամ դրանց նկատմամբ կիրառվում են անհարկի սահմանափակումներ: Ուստի Վեհաժողովը կրկնում է իշխանություններին ուղղված իր կոչը՝ պրակտիկայում հարգելու հավաքների ազատության սկզբունքը և ի կատար ածելու վերոհիշյալ օրենքի իրագործումը՝ մոնիտորինգի ենթարկելու նպատակով Եվրոպայի խորհրդի և Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) կողմից համատեղորեն իրականացվող ծրագրի արդյունքում ներկայացվող հանձնարարականները»³¹:

Մարդու հավաքների իրականացման իրավունքը, հանդիսանալով ժողովրդավարության կարևոր տարրերից մեկը, անհրավաչափ սահմանափակումներից պաշտպանելու կարիք ունի:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշում է, որ, նույնիսկ, առանձին մարդկանց բռնության դրսևորման պատճառով մարդիկ չեն կարող գրկվել խաղաղ հավաքների ազատության իրավունքից: Կասկածից վեր է, որ հավաքների արգելման մասին իրավասու մարմնի որոշումը պետք է լինի մանրամասն հիմնավորված: Իսկ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հավաքը կարելի է արգելել, եթե կա բռնության անմիջական սպառնալիք, «այնպիսի հավաքների սահմանափակումը, որոնցում քարոզվում են հակասահմանադրական համարվող տեսակետներ, բովանդակության կարգավորման յուրատեսակ մեխանիզմ է, որպես այդպիսին, չհիմնավորվող միջամտություն է խաղաղ հավաքների ազատության նկատմամբ»³²:

¹ Տե՛ս Де Сальвиа М., Прецеденты Европейского суда по правам человека. Руководящие принципы судебной практики, относящейся к Европейской конвенции о защите прав человека и основных свобод. Судебная практика с 1960 по 2002 г.: Сан Петербург, 2004 г. С. 688-691.

² Տե՛ս Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի «Ժողովրդավարական ինստիտուտների գործառույթը Հայաստանում» 1609(2008) բանաձև, www.coe.am/docs/pace/1620arm.

³ Տե՛ս Մարդու իրավունքների պաշտպանի 2010 թվականի արտահերթ զեկույցը ՀՀ –ում խաղաղ հավաքների իրավունքների մասին, Երևան-2010:

⁴ Տե՛ս Нунденко Л. А. Теоритические основы права гражданина РФ на проведение собраний, митингов, шествий и пикетирования /Нунденко Л. А.// Журнал российского права. 2000. N 12.

⁵ Տե՛ս Авакян С. А. Россия: гражданство, иностранцы, внешняя миграция / С. А. Авакян СПб., 2003. С. 172; Эжштайн К. Указ. Соч. С. 201, Таева Н. Е. Право иностранных граждан, находящихся на территории Российской Федерации, собираться мирно, без оружия /Таева Н. Е.// Юридический мир. 2006.N 12 и др.

⁶ Տե՛ս Գանիելյան Գ. 29-րդ հոդվածի մեկնաբանություն: ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ / խմբագրությամբ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի, Երևան , «Իրավունք», 2010, էջեր 323-324:

⁷ Տե՛ս Eur. Commission H. R. Application 8191/ 78, Rassemblement et Unite jurassienne v. Switzerland, Decision of 10 October 1979. DR. 1980. N 17. P. 93// Стандарты Совета Европы в области прав человека применительно к положениям Конституции Российской Федерации. Избранные права. М., 2002. С. 273.

⁸ Տե՛ս «Կիվենմասն ընդդեմ Ֆիլանդիայի» գործով՝ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի 1994 թվականի մարտի 31-ի թիվ 412/1990 զեկույց:

⁹ Տե՛ս «Մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի և դրան կից արձանագրությունների մեկնաբանություն. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունք/ Երևան: Տիգրան Մեծ, 2005, էջ 359:

¹⁰ Տե՛ս Երիցյան Ա., Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները ՀՀ-ում, Երևան 1996, էջ 77:

¹¹ Տե՛ս Степченкова Е. В. „Комментарий к Конституции РФ, Москва, Эксмо 2009, под ред. Зоркина В. Д. и Лазарева Л. В., С. 293.

¹² Տե՛ս Комментарий Конституции Российской Федерации / под общ. Ред. Карповича В. Д., М., 2002, С. 205, 221, 222.

¹³ Տե՛ս Конституционное (государственное) право зарубежных стран / отв. ред. Б. А. Страшун. М., 2000, С. 158.

¹⁴ Տե՛ս Գ. Գանիելյան, 29-րդ հոդվածի մեկնաբանություն: ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ / խմբագրությամբ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի, Երևան , «Իրավունք», 2010, էջ 324:

¹⁵ Տե՛ս Վենետիկի հանձնաժողով 60-րդ նստաշրջան (2004 թվականի հոկտեմբերի 8-9, (CDL AD(2004)039:, [http://www.venice.coe.int/docs/2005/CDL\(2005\)039-e.asp](http://www.venice.coe.int/docs/2005/CDL(2005)039-e.asp)

¹⁶ Տե՛ս Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը 2004 թվականի հոկտեմբերին ընդունած թիվ 1405 (2004) բանաձև, www.coe.am/index.php?cat_id=38&print=1:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

¹⁷ Տե՛ս Վենետիկի հանձնաժողով (Ստրասբուրգ, 8 փետրվարի 2005թ. կարծիք թիվ 290/2004 CDL (2005)018), [www.venice.coe.int/docs/2005/CDL-AD\(2005\)018-e.asp](http://www.venice.coe.int/docs/2005/CDL-AD(2005)018-e.asp)

¹⁸ Տե՛ս Վենետիկի հանձնաժողով (CDL (2004)42), [www.venice.coe.int/docs/2004/CDL-AD\(2004\)039-e.pdf](http://www.venice.coe.int/docs/2004/CDL-AD(2004)039-e.pdf)

¹⁹ Տե՛ս Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների կողմից ստանձնած պարտավորությունների կատարման Ե Վ Հանձնաժողովի Ձեկույց, փաստաթուղթ 10027-ը <http://www.hahr.am/index.php/hy/home/154?task=view>

²⁰ Տե՛ս ԵԱՀԿ և Եվրոպայի խորհրդի փորձագետների և Հայաստանի իշխանությունների քննարկումները հավաքների ազատությանը վերաբերող օրենսդրության շուրջ, Երևան 18,03,2005թ. <http://www.coe.am/pressreleases.php?id=42>

²¹ Տե՛ս <http://assembly.com>

²² Տե՛ս CDL-AD(2004)039 «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի վերաբերյալ եզրակացություն, ընդունված 60-րդ լիագումար նիստում 2004թ. <http://www.coe.am>

²³ Տե՛ս նույն տեղում, կետեր 103-111:

²⁴ Տե՛ս Ziliberg v. Moldova. Judgement of 4 May 2004, www.Echr.Coe.int :

²⁵ Տե՛ս Ezelin v. France. Judgement of 26 April 1991 www.Echr.Coe.int:

²⁶ Տե՛ս Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի 1609(2008) բանաձև, Ժողովրդավարական ինստիտուտների գործառույթը Հայաստանում, http://www.coe.am/index.php?cat_id=38:

²⁷ Տե՛ս Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի 1620(2008) բանաձև, Վեհաժողովի 1609 (2008) բանաձևի կատարումը Հայաստանի կողմից, http://www.coe.am/index.php?cat_id=38

²⁸ Տե՛ս Экштайн К. Указ. соч. С. 156.

²⁹ Տե՛ս Алебастрова И. А. Основы американского конституционализма / Алебастрова И. А., М., 2001. С. 274.

³⁰ Տե՛ս Комментарий Конституции Российской Федерации / под Ред. Зорькина В. Д. и Лазарева Л. В. М., 2009, С. 298.

³¹ Տե՛ս Ժողովրդավարական հաստատությունների գործառույթը Հայաստանում, Բանաձև 1677, <http://www.coe.am/index.php?cat-id=389> print=1, 2009թ. հունվարի 27:

³² Տե՛ս ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի ուղեցուցիչը խաղաղ հավաքների ազատության մասին, կետ 74:

РЕЗЮМЕ

Проблемы применения права мирных, без оружия собраний в Республике Армения

В статье автор рассматривает проблему применения права мирного, без оружия собрания. По мнению автора свобода собрания является проявлением свободы слова, свободы передвижения и естественным продолжением свободы слова. По мнению автора основная задача состоит в том, что в Республике Армения есть проблемы в связи с применением этого права. Автор анализировал закон “О свободе собраний” и сделал некоторые предложения по поводу изменения в законе.

SUMMARY

The problems of exercising the rights of peaceful and unarmed assembly

The issue of the article is the restriction of the right to freedom of peaceful and unarmed assembly. According to the author the main issue is that in the Republic of Armenia there are problems of the exercising this right. The author analyzed the Law on freedom of assembly and made her proposal.

ԿԱՐԱՊԵՏ ՀԱԿՈՒՅԱՆ

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ



ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԶԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ (ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ)

Համաշխարհային հասարակական-քաղաքական մտքում «Քաղաքացիական հասարակություն» հասկացությունը շրջանառվում է արդեն մի քանի հարյուրամյակ: Այս կատեգորիան հանդիսանում է տարբեր գիտությունների ուսումնասիրման առարկա՝ պետության և իրավունքի տեսություն, փիլիսոփայություն, քաղաքագիտություն, սոցիոլոգիա: Բայց մինչ այժմ գիտական շրջանակներում միանական կարծիք չկա քաղաքացիական հասարակության ծագման, կառուցվածքային ձևավորման և նրա պատմական հեռանկարների վերաբերյալ, այն մասին, թե ինչ դեր են խաղում այս կամ այն ինստիտուտները քաղաքացիական հասարակության գործունեության և ձևավորման գործում:

Այս առումով իրենից մեծ կարևորություն է ներկայացնում քաղաքացիական հասարակության առանցքային ինստիտուտներից մեկը՝ հասարակական միավորումների համակարգը: Իրավունքով պաշտպանվող հասարակական միավորումները քաղաքացիական հասարակության այլ ինստիտուտների հետ կարող են մեծ դերակատարում ունենալ Հայաստանի Հանրապետության զարգացման և ընթացող գործընթացների վրա: Իրականությունը ցույց է տալիս, որ առանց համապատասխան ինստիտուտների իրավական կարգավորման արդյունավետ մեխանիզմի առկայության քաղաքացիական հասարակության տեսությունը չի կարող վերածվել հասարակական պրակտիկայի:

Այսօր հասարակական-քաղաքացիական ոլորտը հայտնվել է ոչ միայն իրավաբանների, սոցիոլոգների և փիլիսոփաների, այլ նաև հասարակական միավորումների ներկայացուցիչների, քաղաքական գործիչների, լայն հասարակության ուշադրության կենտրոնում: Այդ փաստն ինքնին նշանակալից է, քանի որ հասարակական միավորումների դերը շատ մեծ է մեր հասարակության՝ քաղաքացիական հասարակություն վերածվելու գործում:

Հասարակական միավորումները, որոնք

շահույթ ստանալու նպատակ չեն հետապնդում, կազմում են այսպես կոչված «երրորդ սեկտորը»: Այս անվանումը փոխառված է արևմտյան տերմինաբանությունից: Ներկայիս ՀՀ օրենսդրությունը առանձնահատուկ կարգավիճակ է տալիս այնպիսի հասարակական միավորումներին, ինչպիսիք են՝ հասարակական կազմակերպությունները, արհեստակցական միությունները, կուսակցությունները և կրոնական կազմակերպությունները: Այս առումով շատ կարևոր է հասարակական միավորումների և պետական մարմինների փոխհարաբերության հիմնախնդիրը: Իշխանությունը պետք է ելնի քաղաքացիական հասարակության ինստիտուտների հետ գործընկերային հարաբերությունների ձևավորման սկզբունքից՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական հասարակության ձևավորումը նոր է սկսվում: Կախված նրանից, թե ինչքանով է կատարյալ այդ հարաբերությունների ձևավորման նորմատիվ-իրավական հիմքը, պայմանավորված է նրանց համագործակցության մեխանիզմների ու ընթացակարգերի կենսունակությունն ու կառուցողականությունը, ինչն էլ հանդիսանում է Հայաստանում քաղաքացիական հասարակության բնականոն կենսագործունեության կարևոր գրավականը:

Մեր երկրում քաղաքացիական հասարակության ձևավորման համար անհրաժեշտ է ուժեղ, գործունակ պետություն: Ներկայիս իրավիճակն այնպիսին է, որ պետությանն անհրաժեշտ է պաշտպանել քաղաքացիական հասարակության առանձին տարրերի դրսևորումներից, որոնց գործունեությունը կարգավորված չէ իրավունքով: Հասարակություն-պետություն համագործակցությունը դուրս է եկել նոր հարթության վրա. նրանք փոխկապակցված են և փոխօգնության կարիք ունեն:

Հասարակական միավորումների իրավական կարգավիճակին վերաբերող ելակետային նորմերը ամրագրված են առաջին հերթին 1995թ. հուլիսի 5-ին ընդունված ՀՀ Սահմանադրության

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

28-րդ հոդվածում, համաձայն որի՝ «Յուրաքանչյուր ոք ունի այլ անձանց հետ միավորումներ կազմելու, այդ թվում՝ արհեստակցական միություններ կազմելու և դրանց անդամագրվելու իրավունք»:

Յուրաքանչյուր քաղաքացի ունի այլ քաղաքացիների հետ կուսակցություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունք: Կուսակցություններ և արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունքներն օրենքով սահմանված կարգով կարող են սահմանափակվել զինված ուժերի, ոստիկանության, ազգային անվտանգության, դատախազության մարմինների ծառայողների, ինչպես նաև դատավորների և սահմանադրական դատարանի անդամի նկատմամբ:

Մարդուն չի կարելի հարկադրել անդամագրվելու որևէ կուսակցության կամ միավորման:

Միավորումների գործունեությունը կարող է կասեցվել կամ արգելվել միայն օրենքով նախատեսված դեպքերում՝ դատական կարգով:

Միավորումներն անհատների շահերի ընդհանրության և օրենքի հիման վրա կամավոր ստեղծված հասարակական կառույցներ են, որոնց նպատակն անդամների հոգևոր կամ ոչ նյութական այլ պահանջումների բավարարումն է: Հասարակական միավորումները հսկայական դեր ունեն ժողովրդավարության, քաղաքացիական հասարակության կայացման գործում: Հասարակական միավորումներն իրենց բնույթով բազմազան են: Այսպիսով, Սահմանադրության 28-րդ հոդվածի 1-ին մասն ամենից ընդհանուր դրույթն է, որն ամրագրում է անհատների՝ միավորումներ կազմելու իրավունքը: Նշված հոդվածի 1-ին մասի իրավաբանական բովանդակությունը ենթադրում է երկու իրավական հնարավորություն.

ա/ յուրաքանչյուր ոք ունի այլ անձանց հետ միավորումներ կազմելու իրավունք: Այս իրավունքն անհատական չէ, քանի որ դրա իրականացման համար անհրաժեշտ է այլ անձանց հետ համագործակցություն, որի արդյունքը պետք է լինի միավորում կազմելը.

բ/ յուրաքանչյուր ոք ունի հասարակական միավորումներին անդամագրվելու իրավունք: Այս իրավունքը, ի տարբերություն նախորդի, անհատական է: Անկախ կրոնական, ռասայական, սեռային, լեզվական և այլ հատկանիշներից, յուրաքանչյուրը պետք է ունենա գործող հասարակական միավորումներին միանալու կամ անդամագրվելուց հրաժարվելու, ինչպես նաև դրանցից անարգել դուրս գալու իրավունք: Միավորման իրավունքը

մարդկանց հնարավորություն է տալիս իրականացնել այնպիսի խնդիրներ, իրագործել այնպիսի նպատակներ ու շահեր, որոնք հնարավոր չէ իրականացնել անհատապես: Մարդիկ ստեղծում են հասարակական միավորումներ՝ համատեղ ջանքերով իրենց կողմից որոշակի ընդհանուր շահերի իրագործման նպատակով¹:

Սահմանադրության հիման վրա հասարակական միավորումների իրավական կարգավիճակին վերաբերող ընդհանուր բնույթի իրավանորմերը սահմանված են 1998թ. մայիսի 5-ին ընդունված ՀՀ քաղաքացիական օրենսգրքում: Մասնավորապես, նշված օրենսգրքի 122-րդ հոդվածը տալիս է հասարակական միավորման հետևյալ բնորոշումը. հասարակական միավորումներ են համարվում քաղաքացիների կամավոր միավորումները, որոնք օրենքով սահմանված կարգով միավորվել են իրենց շահերի ընդհանրության հիման վրա՝ հոգևոր կամ ոչ նյութական այլ պահանջումները բավարարելու համար²:

Հասարակական միավորումների իրավական կարգավիճակին վերաբերող ընդհանուր բնույթի իրավանորմեր են ամրագրված նաև «Հասարակական կազմակերպությունների մասին» 2001թ. դեկտեմբերի 4-ի ՀՀ օրենքով³:

Սակայն անհրաժեշտ է նշել, որ հասարակական միավորումները, հանդիսանալով քաղաքացիական հասարակության առանցքային ինստիտուտներից մեկը, իրենց իրավական կարգավիճակի հստակեցման կարիք ունեն: Այս առումով շատ կարևոր կլինեն «Հասարակական միավորումների մասին» առանձին նորմատիվ-իրավական ակտի ընդունումը, որը համալիր ձևով կկարգավորեր հասարակական միավորումների իրավական կարգավիճակին առնչվող իրավահարաբերությունները և մասնավորապես.

- հստակ կսահմաներ հասարակական միավորման հասկացությունը՝ նշելով նրա հիմնական հատկանիշները, որը անկախ օրենսդրական կարգավորումից հնարավորություն կտար որոշել, թե այս կամ այն կազմավորումը հանդիսանում է հասարակական միավորում, թե՞ ոչ,

- հստակ կնշեր, թե Հայաստանի Հանրապետությունում ինչ տեսակի հասարակական միավորումներ են գործում,

- կտրամադրեր ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված անձանց միավորման իրավունքի իրականացման անհրաժեշտ երաշխիքներ,

- կապահովեր ՀՀ տարածքում գործող հասարակական միավորումների իրավական կարգավիճակի համապատասխանությունը միջազգային

պայմանագրերին,

- իրավական ձևակերպում կտար հասարակական միավորումների ձևավորման պրակտիկ պահանջներին,

- անհրաժեշտ իրավական հիմք կստեղծեր հասարակական միավորումների առանձին տեսակների իրավական կարգավիճակը սահմանող օրենսդրական ակտերի հետագա զարգացման համար՝ որպես Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական հասարակության զարգացման անհրաժեշտ նախապայման:

Իրավաբանական գրականության, հասարակական միավորումների իրավական կարգավիճակի վերաբերյալ ընդհանուր դրույթներ պարունակող իրավական ակտերի, ինչպես նաև հասարակական միավորումների առանձին տեսակների իրավական կարգավիճակը սահմանող իրավական ակտերի ուսումնասիրության և տեսական վերլուծության արդյունքում ակնհայտ է դառնում, որ **հասարակական միավորումը օրենքով սահմանված կարգով կամքի ազատ դրսևորմամբ ֆիզիկական անձանց անմիջական միավորման արդյունքում ստեղծված ոչ առևտրային, անհատական անդամության վրա հիմնված ինքնակառավարվող կազմակերպություն է ընդհանուր նպատակների ու շահերի բավարարման համար, որը սահմանված է հասարակական միավորման կանոնադրությամբ:**

Տրված բնորոշումը վերաբերում է միայն օրենքով նախատեսված որևէ կազմակերպարարական ձևի շրջանակներում պետական գրանցում ստացած իրավաբանական անձ հանդիսացող հասարակական միավորումներին, որոնք Հայաստանի Հանրապետությունում հանդիսանում են կուսակցությունները, հասարակական կազմակերպությունները, արհեստակցական միությունները և կրոնական կազմակերպությունները: Իսկ ինչ վերաբերում է այն հասարակական միավորումներին, որոնք պետական գրանցում չեն ստանում նշված կազմակերպարարական ձևերի շրջանակներում, նրանք չունեն իրավաբանական անձի կարգավիճակ, և նրանց վրա չեն տարածվում դրանից բխող իրավունքներն ու պարտականությունները: Նման միավորումները իրավունք չունեն օրենքով սահմանված կարգով ներկայացնել ու պաշտպանել իր և իր անդամների իրավունքները և օրինական շահերն այլ կազմակերպություններում, դատարանում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում, համագործակցել ոչ առևտրային այլ կազմակերպությունների, այդ թվում՝ միջազգային և օտարերկրյա ոչ կառավարական, ոչ առևտրային կազմակերպությունների

հետ, ինչպես նաև համակարգված գործունեություն ծավալելու, ընդհանուր շահեր ներկայացնելու և պաշտպանելու նպատակով այդ կազմակերպությունների հետ ստեղծել միություններ կամ անդամակցել նրանց ստեղծած միություններին՝ պահպանելով իր ինքնուրույնությունը և իրավաբանական անձի կարգավիճակը, իր կանոնադրությամբ սահմանված կարգով ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ՝ մասնաճյուղեր և ներկայացուցչություններ, ինչպես նաև հիմնարկներ, ստեղծել առևտրային կազմակերպություններ կամ մասնակից դառնալ այդպիսի կազմակերպություններին⁴: Չնայած այս միավորումների վրա չեն տարածվում պետական գրանցում ստացած և իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող հասարակական միավորումների համար նախատեսված որոշ իրավունքներ, այնուամենայնիվ նրանց առկայությունը շատ կարևոր է մեր երկրում նոր ձևավորվող քաղաքացիական հասարակության լիարժեք ձևավորման համար: Բացի այդ՝ նման միավորումների ստեղծման իրավական հիմքը ՀՀ Սահմանադրության 28-րդ հոդվածում ամրագրված այլ անձանց հետ միավորումներ կազմելու յուրաքանչյուրի իրավունքն է:

Իրավաբանական գրականության, միջազգային փաստաթղթերի և ՀՀ օրենսդրության վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնել հասարակական միավորման հիմնական բնութագրիչ հատկանիշները.

- հասարակական միավորումները ստեղծվում են անձանց միավորվելու իրավունքի իրականացման միջոցով, որը, չնայած իր վառ ընդգծված կոլեկտիվ բնույթին, բխում է քաղաքացիների մի շարք անհատական իրավունքներից, որոնք ամբողջացնում են նրանց ինքնագործունեության ոլորտը, որտեղ պետական մարմինները չեն կարող թափանցել առանց օրենքով սահմանված հիմքերի,

- հանդիսանալով սոցիալական էակ՝ մարդը չի բավարարվում միայն անհատական իրավունքներով և ազատություններով: Նրան հաճախ անհրաժեշտ է լինում կենսագործել իր ձգտումները, որոնք ոչ միշտ են համընկնում պետական գործունեության ընդհանուր ուղղվածությանը: Իսկ դրա համար անհրաժեշտ է միավորվել այլ անձանց հետ: Այդ պատճառով այդպիսի միավորման հատկանիշ է հանդիսանում նրա անդամների մոտ հասարակական շահի և ընդհանուր նպատակների առկայությունը, որը սահմանված է միավորման կանոնադրությամբ,

- անձինք միմյանց հետ միավորվում են հոգևոր հարստացման և զարգացման համար: Նշ-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

վածը հասարակական միավորման այն սկզբունքային առանձնահատկությունն է, որն արտահայտում է նրա գործունեության ոչ առևտրային բնույթը՝ առանձնացնելով նրանց շահույթ ստանալու նպատակ հետապնդող կազմավորումներից,

- անհատական մասնակցության կամ անդամության առկայություն, որը բխում է անձանց անմիջական միավորումից,

- հասարակական միավորման ձևավորումն իրականացվում է կամավոր, առանց բռնության, ճնշման կամ հարկադրանքի այլ միջոցների կիրառման: Այսինքն՝ անհատները միավորվում են միայն սեփական նախաձեռնությամբ, իրենց շահերի և նպատակների համընկնման հիման վրա,

- հասարակական միավորումների գործունեության ոչ պետական բնույթը դրսևորվում է նրանում, որ նրանք գործում են պետական մարմինների անմիջական գործունեության ոլորտից դուրս,

- հասարակական միավորումների գործունեությունը պետք է հիմնվի օրենքի վրա, այսինքն՝ կրի օրինական բնույթ,

- հասարակական միավորումները, որպես ինքնավար միավորներ, իրենց համար սահմանում են ներքին նորմեր և կանոններ, ունեն բարդ կամ համեմատաբար պարզ կառուցվածք, իրենք են կարգավորում իրենց հարաբերությունները՝ կախված սեփական պահանջումներից, նպատակներից ու խնդիրներից, այսինքն՝ գործում են ինքնակառավարման սկզբունքի հիման վրա:

Այսպիսով, թվարկված հատկանիշների համադրումը կազմում է այն ամբողջությունը, որը թույլ է տալիս քաղաքացիների հասարակական մի-

ավորումները տարանջատել այլ կազմավորումներից, որոնք պատկանում են պետական կամ առևտրային կառույցների թվին:

Հայաստանի Հանրապետությունում հասարակական միավորումները կարող են ստեղծվել հետևյալ կազմակերպարավական ձևերի շրջանակներում՝ հասարակական կազմակերպություն, կուսակցություն, արհեստակցական միություն և կրոնական կազմակերպություն: «Կազմակերպարավական ձև» հասկացությունը ենթադրում է հասարակական միավորման օրենքով սահմանված այնպիսի իրավական կարգավիճակի առկայություն, որը բխում է նրա պահանջումներից, նպատակներից ու խնդիրներից: Օրենսդրությամբ հասարակական միավորումների ստեղծման կազմակերպարավական ձևերի հստակ նախատեսումը ապահովում է իրավական կարգավորման և համապատասխան միավորման իրավական կարգավիճակի սահմանման առավել մեծ հստակություն: Նշվածը շատ կարևոր է, քանի որ այն հնարավորություն է տալիս հստակ սահմանել միավորման գործունեությանը մասնակցող քաղաքացիների իրավունքներն ու պարտականությունները, երաշխավորել իրավունքների պաշտպանությունը դրանց խախտման դեպքում, նախատեսել պատասխանատվություն պարտավորությունների խախտման դեպքում, ինչպես նաև որոշել միավորման ընդունած որոշումների և իրականացվող գործողությունների իրավաչափությունը գործընկերների և պետության հետ հարաբերություններում:

¹ Տե՛ս ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ/ ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի.- Եր.«Իրավունք», 2010թ. էջ 318:
² Տե՛ս 05.05.1998թ. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 122-րդ հոդվածը:
³ Տե՛ս «Հասարակական կազմակերպությունների մասին» 04.12.2001թ. ՀՀ օրենքը:
⁴ Տե՛ս «Հասարակական կազմակերպությունների մասին» 04.12.2001թ. ՀՀ օրենքի 15-րդ հոդվածը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Նորմատիվ-իրավական ակտեր

ՀՀ Սահմանադրություն (ընդունված համաժողովրդական քվեարկությամբ 1995թ. հուլիսի 5-ին), 05.05.1998թ. ՀՀ քաղաքացիական օրենսգրքը:
«Հասարակական կազմակերպությունների մասին» 04.12.2001թ. ՀՀ օրենք:
«Տեղեկատվության ազատության մասին» 23.09.2003թ. ՀՀ օրենք:

Գրականություն

ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ/ ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի.- Եր.«Իրավունք», 2010թ. 1086 էջ:

Իմաստասիրական անդրադարձներ: Գիտական հոդվածների ժողովածու: Երևանի համալս. հրատ. 2004թ. Երևան 198 էջ:

ՀՀ սահմանադրական իրավունք: Երևանի պետ. համալս.: Երևան 2003թ. 608 էջ:

РЕЗЮМЕ

Общественное объединение как институт гражданского общества (понятие и признаки)

В данной работе общему теоретическому анализу подвергаются правовые вопросы касающиеся общественных объединений, в частности выделяется совокупность тех принципиальных признаков, которая позволяет разграничивать общественные объединения от других формирований, которые включают в себя часть формальных признаков общественных объединений. На основании этих принципиальных признаков дается принципиально новое, полное понятие общественного объединения. Предлагаются некоторые правовые механизмы для повышения эффективности деятельности отдельных видов общественных объединений. Отражается большая значимость общественных объединений как института гражданского общества.

SUMMARY

Non Governmental Organization (NGO) as an institute of Civil Society

This article provides complex theoretical analysis of legal issues concerning NGOs, particularly the article stresses the main component of concepts, which differs NGOs from other organizations having formal similarities. In this article there is described in an entirely new characteristics. The article proposes several legal mechanisms and structures for developing of several types of NGOs. The article also stresses the role and importance of the NGOs as an institute of Civil Society.

ԿԱՐԼԵՆ ԱՍԼԱՆՅԱՆ

ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի
նաղիոհեռուստատեսային ժուռնալիստիկայի
ամբիոնի ասպիրանտ



ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈՇՈՒԿԱՅԻ ԹՎԱՅՆԱՑՄԱՆ ՕՐԵՆՄԱՐԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ, ՉԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Հայաստանը հեռուստառադիոլորտի կարգավորման միանգամյան նոր՝ շրջադարձային փուլում է. 2015 թվականի հունվարի 1-ին Հայաստանի ամբողջ տարածքում դադարեցվելու է անալոգային հեռուստահեռարձակումը՝ անցնելով բացառապես թվային հեռուստահեռարձակման: Անցումը հեռարձակման նոր ձևաչափի սկսվել է աստիճանական փուլերով, ինչը ապահովելու համար պետությունը առաջին հերթին սկսեց օրենսդրական կարգավորումները: Այսպիսով, «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքի՝ հեռուստառադիոընկերությունների լիցենզավորմանը՝ արտոնագրմանը վերաբերող գլուխը, կարելի է ասել, ամբողջությամբ նորացվեց՝ համապատասխանեցվելով թվային հեռարձակման ցանց կազմակերպելուն: Առաջին հայացքից կարող է տպավորություն ստեղծվել, որ անցնելով թվայնացման՝ հնարավոր կլինի մեծացնել ռադիոհեռուստատեսային կապուղիների քանակը, ավելի շատ հեռարձակողների հնարավորություն ընձեռնել ունենալ սեփական հաճախականությունները, քանի որ թվային հեռարձակումն ինքնին ենթադրում է լսարանին և հեռուստառադիոընկերություններին ընձեռնվող հնարավորությունների մեծացում: Գործնականում միանգամայն հնարավոր է դառնում, օրինակ, ինքնուրույն, տնային պայմաններում որոշել նախընտրելի հաղորդման եթերաժամը թվային հեռուստատեսությունը կարող է անալոգայինից բավականին շատ ակիքներ պարունակել, ինչպես նաև ազատել տիրույթը, որը կարելի կլինի օգտագործել տարաբնույթ ծառայությունների համար¹:

Իրականությունը, սակայն, փոքր ինչ այլ է. «Ալիքների թվի ավելացումն ինքնաբերաբար տեղեկատվության մատչելիության և անհավասարությունների վերացման չի բերում: Կարևոր է իրական բազմազանություն ունենալ»²:

Հայաստանում հեռուստառադիոընկերությունների

հեռարձակում իրականացնելու միակ օրինական հիմքը շարունակում է մնալ լիցենզիան, որը մրցութային կարգով տրամադրում է ոլորտը կարգավորող մարմինը՝ Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը՝ ՀՌԱՀ-ը: Լիցենզիան պարտադիր է նաև կաբելային (մալուխային) հեռարձակում իրականացնելու համար, բայց այս դեպքում մրցույթ չի իրականացվում, արտոնագիրը տրվում է դիմումի հիման վրա:

Նախկին յոթ տարվա փոխարեն թվային ցանցով եթերային հեռարձակում իրականացնելու լիցենզիան տրամադրում է տասը տարի ժամկետով, ավելի ճշգրիտ ձևակերպմամբ՝ հեռուստահեռարձակողների մրցույթ է իրականացնում յուրաքանչյուր տասը տարին մեկ՝ սկսած 2010 թվականի հուլիսի 20-ից³: Առաջին մրցույթն արդեն անց է կացվել. հեռուստատեսային 18 հեռարձակողներ (այդ պահին գործող 22-ի փոխարեն) ստացել են արտոնագրերը, սակայն հայտարարել, թե Հայաստանը հեռուստատեսության ոլորտում անցել է թվային հեռարձակման, առայժմ վաղ է: Խնդիրն այն է, որ, պայմանավորված տեխնիկական հանգամանքներով, թվային հեռարձակման մրցույթում հաղթելով հանդերձ՝ հեռարձակողները մինչև 2015 թվականը շարունակելու են եթերը անալոգային կապուղիներով⁴: «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքում 2010 թվականի մայիսի 6-ին լրացված անցումային դրույթներով շուրջ հինգ տարի՝ 2010 թվականի հուլիսի 20-ից մինչև 2015 թվականի հունվարի 1-ը, հայտարարվում է անալոգային հեռարձակումից թվային հեռարձակման անցման ժամանակաշրջան, որի ընթացքում պետության կողմից անհրաժեշտ ենթակառուցվածքների ապահովմամբ իրականացվում է աստիճանական (ըստ Հայաստանի Հանրապետության առանձին մարզերի) անցում թվային հեռարձակման⁵: Կարծում ենք, սակայն, որ այստեղ Կառա-

www.lawinstitute.am

վարությունը կարող է խնդիրների առջև կանգնել, քանի որ սփռման տարածքից զատ թվային հեռարձակման անցնելիս կարևոր է հաշվի առնել նաև հեռարձակումն ընդունողների՝ ազգաբնակչության տեխնիկական կարողությունները, պատրաստվածությունը: Այս իմաստով կարևոր է պետության օժանդակությունը այն խմբերին, ովքեր ֆինանսական դժվարություններ կունենան ձեռք բերելու անհրաժեշտ սարքավորումները: Նման նախադեպ արդեն կիրառել է Լիտվայի կառավարությունը՝ փոխհատուցում տրամադրելով անապահով ընտանիքներին, որոնք ձեռք են բերել թվային հեռարձակումն ընդունող սարքեր ⁶:

Հավելենք նաև, որ հարևան Ադրբեջանը սկսել է այս գործընթացը 2010 թվականին և մտադիր է ավարտել 2012-ին, իսկ Վրաստանում թվայնացումը Հայաստանին զուգահեռ կավարտվի 2015 թվականին:

Հատկանշական է, որ այս փուլում Հայաստանում հեռարձակվող հեռուստաընկերությունների թիվը չորսով նվազեց, քանի որ ՀՌԱՀ-ը ներկայացրեց կապուղիների տրամադրման սահմանափակումներ՝ կապված թեմատիկ ուղղվածության, սփռման գոտու և հեռուստաընկերությունների քանակի հետ: Մոտեցում, որ միանգամայն նոր էր հայկական հեռուստաշուկայում, քանի որ նախկինում կար միայն կապուղիների սահմանափակ քանակ և որոշ դեպքերում նաև սփռման տարածքի կոնկրետ հատվածներ, բայց թեմատիկ ուղղվածությունը, բովանդակությունը հեռուստաընկերությունները մրցութային փաթեթը մշակելիս իրենք էին որոշում: Այժմ հստակ ամրագրված է, թե օրինակ, հանրապետական կամ մայրաքաղաքային սփռման գոտում քանի և թեմատիկ ինչ ուղղվածությունների հեռուստաընկերություններ կարող են հեռարձակվել: Այսպես, հանրապետության ողջ տարածքում թվային հեռարձակման ցանցի միջոցով եթեր կարող են դուրս գալ ընդհանուր առմամբ ութ հեռուստաընկերություններ, որոնցից երկուսը Հանրային հեռուստառադիոընկերության հեռուստալիքներն են: Ընդ որում, օրենքով ամրագրվում է, որ դրանցից մեկը պետք է լինի ընդհանուր ուղղվածության, մյուսը՝ հոգևոր-մշակութային: Հայաստանի գրեթե ողջ տարածքով սփռվող հինգ մասնավոր հեռուստաընկերությունները պետք է լինեն ընդհանուր ուղղվածության, իսկ մեկը՝ վերահեռարձակող է: Ինչ վերաբերում է Երևանում հեռարձակվող

ինը հեռուստալիքներին, ապա «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքը թեմատիկ բաժանվածության առումով փորձել է ընդգրկել գրեթե բոլոր լսարանները.

- լրատվական-վերլուծական՝ տեղական և միջազգային նորություններով
- երաժշտական
- երիտասարդական
- ժամանցային
- մանկապատանեկան, գիտակրթական, դաստիարակչական, ճանաչողական:

Մայրաքաղաքային սփռման տարածքում վերահեռարձակման լիցենզիա կարող են ստանալ չորս հեռուստաընկերություններ:

Հստակեցվեց մարզային հեռուստաընկերությունների կարգավիճակը. Հայաստանի բոլոր մարզերում, տվյալ տարածքի բնակչության հետաքրքրությունները հաշվի առնելով, մեկ ընդհանուր ուղղվածության հեռուստաընկերություն կարող է գործել: Թեև օրենքի անցումային դրույթներով մարզային հեռուստաընկերությունները դեռ չեն մասնակցում թվային հեռարձակման համար լիցենզիաների մրցույթին, այդուհանդերձ մարզերում սկսվել է գործընթաց, որի արդյունքում տեղական փոքր մասշտաբի հեռուստաընկերությունները միավորվում են՝ պատրաստվելով մասնակցել առաջիկայում սպասվող մրցույթներին: Առաջմ հստակեցված չէ, թե ինչ ընթացակարգով, ինչ պայմաններով և կոնկրետ երբ մարզային հեռուստառադիոընկերությունները կանցնեն հեռարձակման թվային ցանցի: ՀՌԱՀ-ը նրանց ներկայիս՝ անալոգային լիցենզիաների գործողության ժամկետը երկարաձգել է մինչև 2015 թվականի հունվարի 1-ը:

Դրական է գնահատվում միտումը ՀՌԱՀ-ի կողմից՝ շարունակելու օրենքի ուժով պարտադրել հեռուստառադիոընկերություններին՝ ապահովելու հայրենական հաղորդումների գերակայությունը՝ չնայած հեռարձակողների առջև դրված թեմատիկ սահմանափակումներին: Ներկայացված մրցութային առաջարկներից ընտրություն կատարելիս, ի թիվս ֆինանսական ու տեխնիկական բնույթի մի շարք այլ հարցերի, հանճաժողովը պետք է նախապատվություն տա փաթեթներում սեփական և հայրենական արտադրության հաղորդումների գերակայությունը, բազմակարծությունը խթանելու կարողությանը, աշխատակիցների մասնագիտական հմտություններին և այլն: Սեփական և հայրեն-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

նական արտադրության հաղորդումների ծավալը փաթեթից զատ պետք է նշված լինի նաև մրցույթի մասնակցության հայտում: Իսկ ահա կաբելային հեռարձակում իրականացնող ընկերությունները սեփական հեռուստառադիոհաղորդումներ կարող են արտադրել և հեռարձակել միայն հանձնաժողովի թույլտվությամբ:

Անշուշտ, զգալի առաջընթաց էր վարկանիշային քվեարկության ներմուծումը կապուղիների տրամադրման մրցույթում: Փաթեթների հաջորդական ներկայացումը և բաց քվեարկությունը, որի արդյունքների հիման վրա ընտրվում է հաղթողը, շեշտակի բարելավեցին հանձնաժողովի գործունեության օբյեկտիվության, հրապարակայնության և թափանցիկության երաշխիքները: Այստեղ կատարված թերևս ամենանշանակալի բարեփոխումը հանձնաժողովի համար ամրագրված օրենսդրական պահանջն էր՝ պատշաճ հիմնավորվել և պատճառաբանել կայացված որոշումը:

Իսկ ե՞րբ և ինչպե՞ս կսկսվի ռադիոընկերությունների անցումը թվային հեռարձակմանը: Անցումային դրույթները բավական բացեր և անորոշ տեղեր են թողել, որոնց կարճ ժամանակահատվածում լուծումներ չտալու դեպքում ռադիոշուկայի զարգացման օրինաչափությունները զգալի կխախտվեն, իրավիճակը փակուղային կդառնա: Գնահատականներ հնչեցին, թե, կենտրոնանալով հեռուստաընկերությունների վրա, օրենսդիրը աչքաթող է արել ռադիոկայանները⁷: Արդեն իսկ լրագրել են հանրապետության գրեթե բոլոր 12 մասնավոր ռադիոկայաններին տրված 16 լիցենզիաների գործողության ժամկետները⁸: ՀՌԱՀ-ը ժամանակավոր լուծում գտավ. չանցկացրեց անալոգային կապուղիների նոր մրցույթներ՝ հնարավորություն տալով ռադիոընկերություններին ներկայացվող հայտի հիման վրա երկարաձգել արտոնագրերի գործողության ժամկետները՝ առավելագույնը մինչև 2013 թվականի հուլիսի 20-ը: Բոլոր ռադիոկայաններն էլ օգտվեցին այս հնարավորությունից և երկարացրին իրենց լիցենզիաները առավելագույն ժամկետով⁹: Եվս երկու ռադիոկայանների լիցենզիաների գործողության ժամկետներն էլ ավարտվում են գրեթե նույն շրջանում, 14 օրվա տարբերությամբ: Այսինքն՝ ռադիոընկերությունների թվային հեռարձակման անցնելու մրցույթները պետք է կազմակերպվեն ոչ ուշ, քան 2013 թվականի հուլիսը: Անցումային այս դրույթներով օրենքը որոշակիացնում է, որ 2013 թվականի հուլիսի 20-ից ռադիոյի թվային հեռարձակումն ապահովելու համար օրենքով կսահմանվեն ռադիոընկերությունների լիցենզավորման կարգն ու պայմանները, այդ թվում՝ թեմատիկ ուղղվածությունն ու քանակը: Իսկ մինչ այդ եթեր հեռարձակվող ռադիոկայանների համար գործունեության հիմքը կշարունակի մնալ ներկայիս լիցենզիան:

¹ Տե՛ս Թվայնացման ուղեցույց, Լրատվամիջոցների ազատության հարցերով Եվրոպական անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) ներկայացուցչի գրասենյակ, Վիեննա, 2010, էջ 12

² Տե՛ս Նայման-Սետկալֆ Բ., Ռիխտեր Ա., Ռադիոհեռուստատեսային հեռարձակման թվային համակարգին անցման հայեցակարգի վերլուծություն, Երևան, 2010, էջ 2:

³ Տե՛ս ՀՀ օրենքը «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին, 10.06.2010:

⁴ Տե՛ս «Ռադիոհեռուստատեսային հեռարձակման թվային համակարգին անցման հայեցակարգը», ՀՀ Կառավարություն, N47 որոշում, 12.11.2009:

⁵ Տե՛ս Նույն տեղում:

⁶ Տե՛ս Iešmantait J., Order on Remuneration of the Acquisition Costs of Set-Top-Boxes, Litva, 2010.

⁷ Տե՛ս Հարությունյան Մ., Բա ռադիոընկերությունները, պարոնա՛յք..., Առավոտ օրաթերթ, Երևան, 19.09.2008, էջ 4:

⁸ Տե՛ս 12 ռադիոկայաններին տրված է գործունեության 16 լիցենզիաներ, քանի որ երկու ռադիոկայաններ մեկից ավելի բնակավայրերի ընդգրկումով հեռարձակում իրականացնում են մի քանի հաճախականություններով:

⁹ Տե՛ս ՀՌԱՀ-ի պաշտոնական կայք, www.tvradio.am:

РЕЗЮМЕ

Законодательные основы цифровизации телевидения и радио, тенденции развития

Армения находится в новом решающем этапе регулирования телевидения и радио. 1 января 2015 года, на всей территории Армении остановится аналоговое телевидение переходя только на цифровое. Переход на новый формат вещания начался последовательными этапами. Государство сперва начало с урегулирование законодательство. В данной статье рассматриваются некоторые проблемы.

SUMMARY

The legal basis and trends of digitalization of television and radio.

Armenia is in crucial stage in the new regulation of television and radio. January 1, 2015, on the whole territory of Armenia analog broadcasting will stop passing only in digital. The transition to the new format broadcasting began with successive levels. The government first began with regulation legislation. This article discusses some of the problems.

ԿՈՐՅՈՒՆ ԱՐԵՎՇԱՏՅԱՆ

Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի առողջապահության կազմակերպման և բժշկական իրավունքի ամբիոնի դասախոս,
Երևանի «Գլաձոր» համալսարանի իրավագիտության ամբիոնի հայցորդ



ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՊԱՍԱՐԿՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՄՐԱԳՐՄԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ

Բազմաթիվ պետություններում, Հայաստանի Հանրապետությունում ևս մարդու առողջության պահպանումը և երաշխավորված բժշկական օգնությունն ու սպասարկումը մարդու սոցիալ-տնտեսական իրավունքների իրավական կարգավորման և դրանց գործնական կիրառման ոլորտի առաջնային ուղղություններից են: Բժշկական օգնության և սպասարկման, ինչպես նաև առողջության պահպանման վերաբերյալ սահմանադրական նորմերը ի հայտ են եկել դեռևս 19-րդ դարում: Մասնավորապես, 1850թ. հունվարի 31-ին ընդունված Պրուսիայի Սահմանադրական խարտիայում նշվում էր, որ «բժշկական և անասնաբուժական օգնության կանոնների» սահմանումը վերապահվում էր կայսրությանը և կանոնակարգվում էին վերջինիս կողմից ընդունված օրենսդրությամբ¹:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո մարդու առողջության պահպանման իրավունքն ամրագրվեց 1948թ. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում², որը գրեթե բոլոր պետությունների համար դարձավ ընդհանուր չափանիշ՝ ուղեցույց, որի իրագործմանը պետք է ձգտեն բոլոր ազգերն ու պետությունները, որոնք ջանում են ապահովել Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում շարադրված իրավունքների և ազատությունների համընդհանուր և արդյունավետ ճանաչումն ու պահպանումը³: Արդյունքում, աշխարհում գործող սահմանադրությունների մեծ մասում ամրագրում ստացավ նաև առողջության պահպանման իրավունքը⁴:

Ներկայում ժողովրդավարական երկրները, հիմք ընդունելով ՄԱԿ-ի կողմից հռչակված մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, ինչպես նաև ճանաչելով մարդու կյանքը և

առողջությունը որպես բարձրագույն արժեք՝ առաջնորդվում են այս մոտեցումներով իրենց հիմնական օրենքների ընդունման կամ դրանցում փոփոխություններ կատարելու ընթացքում: Նմանօրինակ միտումն անխուսափելիորեն ունի դրական նշանակություն, քանի որ նպաստում է ժամանակակից ժողովրդավարական պետությունների էության փոփոխմանը՝ դարձնելով դրանք սոցիալ-իրավական պետություններ⁵: Գտնում ենք, որ ժողովրդավարական բարեփոխումների շարունակական զարգացման ճանապարհին անհրաժեշտ է մեծ ուշադրություն դարձնել մարդու բարձրագույն արժեքների, կյանքի և առողջության սահմանադրական սկզբունքների իրացմանը, որն էլ պետական, սոցիալական և հասարակական գործունեության ակտիվ իրավական աջակցություն է պահանջում:

Մարդու՝ բժշկական օգնություն և սպասարկում ստանալու, ինչպես նաև առողջության պահպանման իրավունքները մեծ ազդեցություն են թողել միջազգային հանրության գիտակցության վրա՝ երկրորդ սերնդի իրավունքների ձևավորման գաղափարախոսության և սոցիալական պետության հայեցակարգի ճանաչման առումով: Այսինքն, արտասահմանյան երկրների սահմանադրություններում այս իրավունքների ամրագրման ձևի և կարգի վրա ներազդեցություն են ունեցել յուրաքանչյուր պետության ազգերի պատմական զարգացման ընթացքը, ազգային ավանդույթները՝ պայմանավորված սահմանադրականության փիլիսոփա-աշխարհայացքային առանձնահատկություններով:

Բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքը ներառում է մի շարք այլ իրավունքներ և դրանց իրացման երաշխիքներ.

www.lawinstitute.am

դրա հետևանքով է, որ տարբեր երկրների սահմանադրություններում այն տարբեր ձևակերպումներ է ստացել, նույնիսկ որոշ սահմանադրություններում, որոնք ընդունվել են մասնավորապես, մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմը, քննարկվող իրավունքի ամրագրումն ուղղակի բացակայում է: Այստեղից ելնելով՝ կարելի է կատարել օտարերկրյա պետությունների սահմանադրությունների պայմանական բաժանում.

- սահմանադրություններ, որոնցում ամրագրված չեն մարդու բժշկական օգնություն և սպասարկում ստանալու, ինչպես նաև առողջության պահպանման իրավունքները,

- սահմանադրություններ, որոնցում այս իրավունքներն ամրագրված են անուղղակի կերպով՝ ներկայացված լինելով մի շարք հարակից իրավունքների միջոցով կամ որոնցում հղում է կատարվում հատուկ օրենսդրությանը,

- սահմանադրություններ, որոնցում ուղղակի ձևով ամրագրված է մարդու բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքը և/կամ առողջության պահպանման իրավունքը:

Բժշկական օգնություն և սպասարկում ստանալու, ինչպես նաև առողջության պահպանման իրավունքներն ամրագրված չեն ԱՄՆ Սահմանադրության մեջ⁶: Հետևաբար, առողջապահության ոլորտում բնակչության իրավունքների կարգավորման խնդիրները որոշվում են յուրաքանչյուր նահանգի համար առանձին մոտեցմամբ: Այս ոլորտում մշակվում են նահանգային ծրագրեր, կիրառվում է պետական դրամաշնորհների և սուբսիդիաների կարգ՝ առողջապահության ոլորտը զարգացնելու և բարձր մակարդակի վրա պահելու նպատակով⁷, ինչպես նաև վնասի պատճառման դեպքում գործում է վարչական պատասխանատվության համակարգը⁸:

Նմանօրինակ մոտեցում կարելի է տեսնել նաև Հնդկաստանի՝ 1950 թվականի Սահմանադրությունում, որն աշխարհում գործող ամենածավալուն ու մանրամասնեցված սահմանադրություններից մեկն է: Դրանում ամրագրված մարդու իրավունքներն ու ազատությունները, գաղութային կարգերի ազատագրումից հետո, Հնդկաստանի ժողովրդի կարևորագույն ձեռքբերումներից են: Այնուամենայնիվ, մոտ կես դար շարունակ այդ իրավունքների շարքում էապես բացակայել են որոշ հիմնական սոցիալ-տնտեսական և անձնական

իրավունքներ⁹: Օրինակ՝ Սահմանադրության մեջ ամրագրված չեն կյանքի, հանգստի, սոցիալական ապահովության, այդ թվում՝ բժշկական օգնություն և սպասարկում ստանալու և առողջության պահպանման իրավունքները:

Ավստրիայում առ այսօր շարունակում է գործել Ֆեդերալ սահմանադրական օրենքը՝ Ավստրիայի Հանրապետության Սահմանադրությունը, որում բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքը և առողջության պահպանման իրավունքն ամրագրում չեն ստացել: Այնուամենայնիվ, քննարկվող Սահմանադրության 10-րդ հոդվածը բովանդակում է, որ առողջապահությանն առնչվող հարցերը ենթակա են օրենսդրական կարգավորման միայն պետության կողմից, իսկ 78ա հոդվածի 2-րդ կետում ամրագրված է, որ եթե մարդու կյանքին, առողջությանը, ազատությանը կամ սեփականությանը իրական վտանգ է սպառնում կամ նման սպառնալիք կարող է անուղղակի կերպով ծագել, ապա անվտանգության մարմինները, անկախ վտանգը կանխելու պարտավորություն ունենալու հանգամանքից, իրավասու են առաջին անհրաժեշտության բազմակողմանի օգնություն ցուցաբերել, մինչև համապատասխան ոլորտի իրավասու մարմինները կմիջամտեն¹⁰:

Իռլանդիայի Սահմանադրությունում նշանակալից տեղ է տրվում քաղաքացիների իրավունքներին, մասնավորապես՝ անձնական, ընտանեկան, կրթության, մասնավոր սեփականության, կրոնական և այլն: Չբովանդակելով հատուկ դրույթներ բժշկական օգնություն և սպասարկում ստանալու և առողջության պահպանման իրավունքների վերաբերյալ՝ Իռլանդիայի Սահմանադրության 45-րդ հոդվածով սահմանվում է, որ պետությունը պարտավոր է աջակցել բնակչության բարեկեցությանը, հնարավորության սահմաններում պահպանել և ապահովել սոցիալական ներդաշնակություն, միջոցներ ձեռնարկել, որպեսզի չչարաշահվեն աշխատողների, կանանց, տղամարդկանց և անչափահասների իրավունքները ու վտանգվի նրանց առողջությունը¹¹:

Իսլանդիայի Հանրապետության Սահմանադրությունում մարդու իրավունքներին և հիմնարար ազատություններին վերաբերող նորմերն առավելապես ընդլայնվել և փոփոխվել են վերջին տասնամյակի ընթացքում: Մասնավորապես, Սահմանադրության 7-րդ գլուխը բովանդակում է մար-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

դու հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ դրույթներ, սակայն այստեղ ևս բժշկական օգնություն և սպասարկում ստանալու և առողջության պահպանման իրավունքների վերաբերյալ դրույթները բացակայում են¹² :

Նույն մոտեցումն է նկատվում նաև Դանիայի Թագավորության Սահմանադրությունում, որտեղ անձի իրավական կարգավիճակի վերաբերյալ դրույթները բավականին սեղմ են ներկայացված: Սահմանադրությամբ ամրագրված են անձնական, բնակարանի, սեփականության անձեռնմխելիության, ձեռնարկատիրական գործունեության ազատ և հավասար մատչելիության, սոցիալական ապահովության, անվճար բազային կրթության, խոսքի և մտքի ազատության, հավաքների կազմակերպման և այլ իրավունքներ¹³ :

Անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ վերը հիշատակված երկրների Հիմնական օրենքներում բժշկական օգնություն և սպասարկում ստանալու և առողջության պահպանման իրավունքների վերաբերյալ դրույթների ուղղակի բացակայությունը պայմանավորված է այդ սահմանադրությունների պատմական անցյալով և դրանց ընդունման ժամանակաշրջանի մարտահրավերներով, այլ ոչ թե այդ իրավունքների պակաս կարևորությամբ: Վստահ ենք, որ ինչպես շատ այլ ժողովրդավարական զարգացած երկրներում, վերոհիշյալ երկրներում նույնպես բժշկական օգնություն և սպասարկում ստանալու և առողջության պահպանման իրավունքներն արժանացել են ներպետական օրենսդրական կարգավորման:

Ինչ վերաբերում է այն սահմանադրություններին, որոնցում բժշկական օգնություն և սպասարկում ստանալու և առողջության պահպանման իրավունքներն ամրագրված են անուղղակի կերպով, պետք է նշել, որ այդ իրավունքները ներկայացված են հիմնականում հարակից իրավունքների և այդ ոլորտներում պետության ունեցած պարտավորությունների տեսքով:

Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետության Սահմանադրության մեջ նշվում է, որ յուրաքանչյուր ոք ունի կյանքի իրավունք (2-րդ հոդվածի 2-րդ կետ), ինչպես նաև յուրաքանչյուր մայր ունի խնամքի և հասարակության կողմից պաշտպանված լինելու իրավունք (6-րդ հոդվածի 4-րդ կետ)¹⁴ :

Բոսնիա և Հերցեգովինայի Սահմանադրությունում քննարկվող իրավունքներն ուղղակիորեն

ամրագրված չեն, սակայն 2-րդ հոդվածի 2-րդ կետը բովանդակում է, որ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայում և վերջինիս կից արձանագրություններում ամրագրված իրավունքներն ու ազատությունները Բոսնիա և Հերցեգովինայում ունեն բարձրագույն իրավաբանական ուժ և գործում են անմիջականորեն: Բացի այդ՝ Հիմնական օրենքում ամրագրված է, որ պետությունն ամենաբարձր մակարդակով երաշխավորում է միջազգայնորեն ճանաչված մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները իր իրավագործության ներքո գտնվող յուրաքանչյուր անձի համար¹⁵ :

Հունաստանի Սահմանադրության 21-րդ հոդվածի համաձայն՝ պետությունը պարտավորվում է հոգ տանել քաղաքացիների առողջության մասին և ձեռնարկում է հատուկ միջոցառումներ՝ պաշտպանելու երիտասարդներին, տարեցներին, հաշմանդամներին, ինչպես նաև օգնելու կարիքավոր մարդկանց¹⁶ :

Լիխտենշտեյնի թագավորության Սահմանադրության 3-րդ գլխում սահմանված են պետության պարտականությունները, մասնավորապես 18-րդ հոդվածի համաձայն՝ պետությունը հոգ է տանում հասարակական առողջապահական համակարգի մասին, աջակցություն է ցուցաբերում հիվանդների օգնության կազմակերպմանը և ձգտում է օրենսդրական ճանապարհով պայքարել ալկոհոլիզմի և թափառաշրջության դեմ¹⁷ :

Լյուքսեմբուրգի Սահմանադրության 2-րդ գլխում ներառված են քաղաքացիների հիմնական իրավունքներն ու պարտականությունները, որտեղ մարդու և ընտանիքի բնական իրավունքները երաշխավորվում են պետության կողմից: Սոցիալական ապահովության և առողջապահության կազմակերպումը, ինչպես նաև աշխատելու, ազատ առևտրով և արդյունաբերությամբ զբաղվելու մարդու իրավունքները երաշխավորվում են օրենքով: Սահմանադրության 23-րդ հոդվածի 1-ին կետում ամրագրված է, որ բժշկական և սոցիալական օգնության ցուցաբերումը կարգավորվում է օրենքով¹⁸ :

Հաջորդ խմբում ընդգրկվում են այն պետությունները, որոնք իրենց սահմանադրություններում ուղղակիորեն ամրագրել են մարդու բժշկական օգնություն և սպասարկում ստանալու և/կամ առողջության պահպանման իրավունքները: Դրանց շարքում են Ալբանիան, Բուլղարիան, Իսպանիան,

www.lawinstitute.am

Պորտուգալիան, Ռուսաստանի Դաշնությունը, ԱՊՀ և Բաթյան երկրները և այլ պետություններ:

Իտալիայի Սահմանադրության 2-րդ գլխում, որը նվիրված է էթիկական և սոցիալական հարաբերություններին, ամրագրված են մարդու այնպիսի հիմնարար իրավունքներ և ազատություններ, ինչպիսիք են՝ բժշկական օգնություն և սպասարկում ստանալու, առողջության պահպանման, ամուսնության և ընտանիք կազմելու և այլ իրավունքները: Սահմանադրության 32-րդ հոդվածում ամրագրված է, որ պետությունը պահպանում է մարդու առողջությունը որպես անհատի հիմնարար իրավունք ու հիմնական հանրային շահ և չքավորներին երաշխավորում է անվճար բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքը¹⁹:

Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության 41-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի առողջության պահպանման և բժշկական օգնության և սպասարկման իրավունք: Բժշկական օգնությունն ու սպասարկումը քաղաքացիներին պետական և համայնքային նշանակության առողջապահական հաստատություններում տրամադրվում է անվճար՝ համապատասխան բյուջեների, ապահովագրական հատկացումների և այլ աղբյուրներից ստացված միջոցների հաշվին: Ռուսաստանի Դաշնությունում իրականացվում է բնակչության առողջության պահպանմանն ու ամրապնդմանն ուղղված ծրագրերի ֆինանսավորում, միջոցներ են ձեռնարկվում՝ զարգացնելու առողջապահական պետական, համայնքային և մասնավոր համակարգերը՝ հիմքում դնելով մարդու առողջության ամրապնդումը և սանիտարական ու էկոլոգիական բարեկեցությունը: Բացի այդ, նշվում է, որ պաշտոնատար անձանց կողմից մարդու կյանքին ու առողջությանը վտանգ ներկայացնող փաստեր և հանգամանքներ թաքցնելը առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն²⁰:

Ալբանիայի Հանրապետության Սահմանադրությունում մանրամասն ամրագրված են մարդու հիմնական իրավունքներն ու ազատությունները՝ որպես անօտարելի, պարտադիր և անփոփոխ իրավունքներ: Սոցիալական ոլորտում մարդու իրավունքների և ազատությունների հետ կապված՝ պետությունը պարտավորություն է ստանձնել իր հնարավորությունների սահմաններում ապահովել հանրության առողջության պահպանման ամենաբարձր մակարդակը, ֆիզիկական և մտավոր զար-

գացածությունը և այլն: Սահմանադրության 55-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր քաղաքացի ունի պետության կողմից երաշխավորված առողջության պահպանման իրավունք, իսկ յուրաքանչյուր ոք ունի բժշկական ապահովագրության իրավունք՝ օրենքով սահմանված կարգին համապատասխան²¹:

Անդորրայի Սահմանադրության 30-րդ հոդվածում ամրագրված է, որ ճանաչվում են ինչպես մարդու առողջության պահպանման իրավունքը, այնպես էլ սոցիալական նպաստներից օգտվելու իրավունքը, և այդ նպատակով պետությունն ապահովում է սոցիալական ապահովագրության համակարգը²²:

Բելգիայի Սահմանադրությունում քաղաքացու իրավունքներն ու ազատությունները ամրագրված են 2-րդ բաժնում, որտեղ երաշխավորվում են օրենքի առջև հավասարության, անձնական ազատության, դատական պաշտպանության, բնակարանի անձեռնմխելիության և այլ իրավունքներ: Սահմանադրության 23-րդ հոդվածը բովանդակում է տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների ամբողջություն, որոնց ապահովումը դրվում է պետության վրա: Այդ իրավունքների շարքին են դասվում, օրինակ, կյանքի իրավունքը, աշխատանքի և մասնագիտության ազատ ընտրության իրավունքը, սոցիալական ապահովագրության և առողջության պահպանման իրավունքը, ինչպես նաև սոցիալական, բժշկական և իրավաբանական օգնության իրավունքը²³:

Բուլղարիայի Սահմանադրությունում մեծ ուշադրություն է դարձվել կանանց և մայրերին. այնտեղ ամրագրված երաշխիքներից մեկն էլ կանանց անվճար մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության ցուցաբերումն է (47-րդ հոդվածի 2-րդ կետ): Սահմանադրության 52-րդ հոդվածում ամրագրված է քաղաքացիների առողջության ապահովագրության իրավունքը, որը վերջիններիս երաշխավորում է մատչելի բժշկական օգնություն, ինչպես նաև օրենքով սահմանված եղանակներով անվճար բժշկական սպասարկում ստանալու իրավունքը: Քաղաքացիների առողջության պահպանման համար ֆինանսավորումը կատարվում է պետական բյուջեի, սոցիալական ապահովագրության և այլ միջոցների հաշվին, որի ձևավորման կարգն ու պայմանները նույնպես սահմանվում են օրենքով: Ուշադրության է արժանի

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

նաև քննարկվող հոդվածի 5-րդ կետում ամրագրված դրույթը, ըստ որի՝ պետությունը վերահսկողություն է իրականացնում բոլոր բժշկական հաստատությունների, ինչպես նաև՝ դեղերի, բժշկական նշանակության ապրանքների արտադրության և վաճառքի նկատմամբ²⁴ :

Էստոնիայի Սահմանադրությունում ամրագրում են ստացել սոցիալական, ժողովրդավարական, իրավական պետությանը բնորոշ մարդու և քաղաքացու իրավունքներ, ազատություններ և պարտականություններ: Ինչ վերաբերում է մարդու առողջության պահպանման իրավունքին, ապա այդ դրույթը ներկայացված է Սահմանադրության 28-րդ հոդվածում հետևյալ ձևակերպմամբ՝ «Յուրաքանչյուր ոք ունի առողջության պահպանման իրավունք»²⁵ :

Ֆինլանդիայի Հիմնական օրենքում, մարդու իրավական կարգավիճակն ընդգրկում իմաստ է ստացել՝ հիմք ընդունելով միջազգային իրավական փաստաթղթերը: Հատկապես ուշադրության են արժանի սոցիալ-տնտեսական իրավունքները, կրթության և մշակույթի ոլորտի մարդու իրավունքները, ինչպես նաև պետության և հասարակության պարտավորությունները՝ ապահովելու շրջակա միջավայրի պահպանումը: Սահմանադրության 19-րդ հոդվածում ամրագրված է յուրաքանչյուրի սոցիալական ապահովության իրավունքը, ինչպես նաև նշվում է, որ պետությունը պարտավոր է յուրաքանչյուրին ապահովել սոցիալական և բժշկական ծառայություններ օրենքով սահմանված կարգով²⁶ :

Ֆրանսիայի 1946թ. Սահմանադրության ներածությունում ասվում է, որ պետությունը բոլորին, մասնավորապես՝ երեխաներին, կանաց, տարեցներին երաշխավորում է առողջության պահպանման, հանգստի ու ժամանցի իրավունքները, իսկ յուրաքանչյուր անհատի և ընտանիքի զարգացման համար երաշխավորում է նպաստավոր պայմաններ²⁷ և հռչակում է իր նվիրվածությունը մարդու իրավունքներին և հիմնարար ազատություններին²⁸ :

Իսպանիայի Սահմանադրությունում սոցիալական իրավունքներն ամրագրված են առանձին՝ «Սոցիալ-տնտեսական քաղաքականության հիմնական սկզբունքները» գլխում: Հիմնական օրենքի 169 հոդվածներից 55-ը նվիրված են մարդու և քաղաքացու իրավունքներին, ազատություններին և պարտականություններին: Սահմանադրության 10-

րդ հոդվածի 1-ին պարբերությունը բովանդակում է անհատի արժանապատվության, նրա իրավունքների անօտարելիության, ազատ զարգացման, օրենքի առջև հավասարության և այլ իրավունքներ, որոնք քաղաքական և սոցիալական ներդաշնակության հիմքն են: Սահմանադրության 43-րդ հոդվածում, մարդու առողջության պահպանման իրավունքի ամրագրումից զատ, սահմանվում է պետության պարտականությունը՝ կազմակերպելու և պաշտպանելու ազգային առողջապահությունը, իրականացնելու պրոֆիլակտիկ միջոցառումներ, մատուցելու անհրաժեշտ օգնություն և ծառայություններ, ինչպես նաև կազմակերպելու սանիտարական իրազեկումներ բնակչության շրջանում, սպորտային և ֆիզիկական զարգացումն ապահովող միջոցառումներ²⁹ :

Լատվիայի Սահմանադրությունն այն եզակի սահմանադրություններից է, որոնց կառուցվածքում բացակայում են ինչպես նախաբանը, այնպես էլ եզրափակիչ և անցումային դրույթները: Սակայն Հիմնական օրենքի կառուցվածքով չէ, որ պետք է պայմանավորված լինի երկրի սահմանադրականությունը կամ տվյալ սահմանադրության կենսական ուժը: Դրանում ամրագրված մարդու հիմնական իրավունքների ցանկն ու ծավալն ամբողջությամբ համապատասխանում են համընդհանուր ճանաչում ստացած ժողովրդավարական չափանիշներին: Այն բովանդակում է այնպիսի իրավունքներ, ինչպիսիք են՝ օրենքի առջև հավասարությունը, անմեղության կանխավարկածը, կյանքի իրավունքը, անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքը, պատվի և արժանապատվության պաշտպանության իրավունքը, ազատ մտքի, խղճի և կրոնական համոզմունքներ ունենալու իրավունքը, սոցիալական ապահովագրության իրավունքը: Ինչ վերաբերում է մարդու՝ բժշկական օգնություն և սպասարկում ստանալու, ինչպես նաև առողջության պահպանման սահմանադրական իրավունքներին, Սահմանադրության 111-րդ հոդվածում ամրագրված է՝ պետությունը պարտավոր է պահպանել մարդու առողջությունը և յուրաքանչյուրին երաշխավորել հիմնական բժշկական օգնություն³⁰ :

Լիտվայի Սահմանադրության 2-րդ և 3-րդ գլուխներում մանրամասն ներկայացված են մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները, ինչպես նաև պետության դերը դրանց ապահով-

www.lawinstitute.am

ման և իրացման գործում: Այդ իրավունքների և ազատությունների ամբողջական ծավալն ու բովանդակությունը համապատասխանում են հանրնդիանուր միջազգային չափորոշիչներին: Լիտվայի Սահմանադրության 53-րդ հոդվածը բովանդակում է, որ պետությունը հոգ է տանում յուրաքանչյուրի առողջության համար և յուրաքանչյուրին երաշխավորում է բժշկական օգնություն և սպասարկում հիվանդության դեպքում: Բացի այդ՝ ամրագրված է, որ օրենքով է սահմանվում պետական առողջապահական կազմակերպություններում քաղաքացիներին անվճար բժշկական օգնություն և սպասարկում տրամադրելու կարգը³¹:

Մակեդոնիայի Սահմանադրության 39-րդ հոդվածով յուրաքանչյուր քաղաքացու երաշխավորվում է առողջության պահպանման իրավունքը, և հետաքրքիրն այն է, որ իր և այլոց առողջության պահպանումն ու ամրապնդումը քաղաքացու ոչ միայն իրավունքն է, այլ՝ պարտականությունը: Սահմանադրության մեջ ամրագրված է իրավունքի գերակայության սկզբունքը, որով բնութագրվում է մարդու իրավունքների և ազատությունների գերակայության՝ բարձրագույն արժեքի չափանիշը, որը վերաբերում է նաև առողջության պահպանման իրավունքին³²:

Նիդերլանդների Սահմանադրությունը բովանդակում է մարդու իրավունքների և ազատությունների կարգավորման յուրահատուկ մոտեցում: Սահմանադրական կարգավորման առարկան ներառում է հավասար իրավունքների և ազատությունների, ազատ տեղաշարժի, խոսքի, մտքի, հանրահավաքների ազատ կազմակերպման, անձի և անձնական կյանքի անձեռնմխելիության և շատ այլ իրավունքներ: Բացի նշված իրավունքներից և ազատություններից, Նիդերլանդների Սահմանադրությունում ներառված են պետության սոցիալական գործառույթներն ամրագրող մի շարք նորմեր, որոնցից է նաև բնակչության առողջության պահպանումն ու սոցիալական զարգացումը (22-րդ հոդված)³³:

Լեհաստանի Հանրապետության Սահմանադրության 2-րդ բաժինը նվիրված է մարդու և քաղաքացու իրավունքներին, ազատություններին և պարտականություններին, որոնք ներառում են քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային իրավունքներ և ազատություններ: Հարկ է ընդգծել, որ որոշ տնտեսական, սոցիալական և

մշակութային իրավունքներ և ազատություններ ամրագրված են ոչ որպես սուբյեկտիվ իրավունքներ, այլ որպես այդ ոլորտում պետական մարմինների պարտականություններ: Սահմանադրության 68-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի առողջության պահպանման իրավունք: Անկախ քաղաքացիների նյութական կարգավիճակից՝ պետությունը նրանց ապահովում է օրենքով սահմանված եղանակներով հավասար և մատչելի բժշկական օգնություն և սպասարկում՝ պետական միջոցների հաշվին: Բացի այդ, առողջապահության ոլորտում հատուկ երաշխիքներ են ապահովվում երեխաների, հղի կանանց, հաշմանդամների և տարեցների համար, տարվում են համապատասխան միջոցառումներ համաճարակների դեմ պայքարի, շրջակա միջավայրի պաշտպանության և բացասական հետևանքների կանխարգելման, երիտասարդների և երեխաների ֆիզիկական կրթության զարգացման ուղղություններով³⁴:

Պորտուգալիայի Սահմանադրությունը հարուստ է մարդու տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներով: Սոցիալական ոլորտի իրավունքները ներառում են սոցիալական ապահովության, առողջության պահպանման, առողջ շրջակա միջավայրի և այլ իրավունքներ: Սահմանադրության 64-րդ հոդվածում ամրագրված է, որ յուրաքանչյուր ոք ունի առողջության պահպանման իրավունք և պարտավոր է պահպանել ու ամրապնդել այն: Այդ իրավունքն իրացվում է հանրնդիանուր ազգային առողջապահական ծառայության միջոցով՝ հաշվի առնելով քաղաքացիների նյութական և սոցիալական դրությունը, հիմնականում անվճար հիմունքներով՝ ստեղծելով տնտեսական, սոցիալական, մշակութային և էկոլոգիական պայմաններ, որոնց միջոցով կերաշխավորվեն երեխաների, երիտասարդության և տարեցների պաշտպանությունը, ինչպես նաև իրականացնելով սանիտարական իրազեկվածություն բնակչության շրջանում:

Վերոնշյալ հոդվածի 3-րդ կետում թվարկված են այն պարտադիր գործողությունները, որոնք պետությունը պետք է իրականացնի առողջապահության ոլորտի իրավունքների ապահովման և իրացման համար: Մասնավորապես պետությունը պետք է՝

- երաշխավորի յուրաքանչյուր քաղաքացու՝ պրոֆիլակտիկ հետազոտություններ անցնելու,

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

բժշկական օգնություն ստանալու և առողջության վերականգնման իրավունքը, անկախ նրա նյութական կարգավիճակից,

- ապահովի բժշկական հաստատությունների և բժշկական անձնակազմի ողջամիտ և արդյունավետ տեղաբաշխումն ամբողջ երկրի տարածքում,

- կանոնակարգի առողջապահական և դեղագործական ոլորտում առկա ծախսերը՝ ապահովելով սոցիալական ներդաշնակություն,

- կանոնակարգի և վերահսկի բժշկության ոլորտի ձեռնարկատիրական և մասնավոր գործունեությունը՝ այն միավորելով ազգային առողջապահական ծառայության հետ այնպես, որ և՛ պետական, և՛ մասնավոր առողջապահական հաստատություններում ապահովեն որակի և արդյունավետության համապատասխան չափորոշիչներ,

- կանոնակարգի և վերահսկի քիմիական, կենսաբանական և դեղագործական նշանակության ապրանքների, ինչպես նաև բուժական և փստորոշիչ այլ միջոցների արտադրությունը, վաճառքը և օգտագործումը³⁵ :

Ռումինիայի Սահմանադրության 33-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուրին երաշխավորվում է առողջության պահպանման իրավունքը, և պետությունը պարտավոր է միջոցներ ձեռնարկել բնակչության առողջության և հիգիենայի ապահովման համար: Բացի այդ, բժշկական օգնության և սպասարկման, ինչպես նաև սոցիալական ապահովության կազմակերպումը՝ կապված հիվանդության, դժբախտ պատահարների, մայրության և առողջության վերականգնման, անհատի ֆիզիկական և մտավոր առողջության պահպանման հետ, սահմանվում են օրենքով: Հարկ է ընդգծել, որ բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքի ապահովման և կազմակերպման, ինչպես նաև դրա իրացման նկատմամբ հսկողություն սահմանելու պարտականությունը Սահմանադրությամբ դրվում է պետության վրա³⁶ :

Սլովակիայի Սահմանադրության 2-րդ գլուխն ամբողջությամբ նվիրված է մարդու հիմնական իրավունքներին և ազատություններին: Առողջության պահպանման իրավունքն ամրագրված է Սահմանադրության 40-րդ հոդվածում, որը երաշխավորվում է յուրաքանչյուր անձի, իսկ օրենքով սահմանվող անվճար բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքը ծագում է բա-

ցառապես բժշկական ապահովագրության հիման վրա³⁷ :

Սլովենիայի Սահմանադրությունում ամրագրված են անձնական, սոցիալական, տնտեսական, քաղաքական, մշակութային իրավունքներ և ազատություններ, ինչպիսիք են աշխատանքի ազատության և հարկադիր աշխատանքի արգելման, սոցիալական ապահովության և պաշտպանության, առողջ շրջակա միջավայրի, բարեկեցիկ կենսամակարդակի իրավունքները, որոնք երաշխավորվում են պետության կողմից: Ինչ վերաբերում է բժշկական օգնություն և սպասարկում ստանալու և առողջության պահպանման իրավունքներին, Սլովենիայի Սահմանադրության 51-րդ հոդվածը բովանդակում է, որ յուրաքանչյուր ոք ունի օրենքով սահմանված եղանակներով առողջության պահպանման իրավունք. առողջապահական համակարգից և դրա համար հատկացվող ֆինանսավորումից օգտվելու կարգն ու պայմանները նույնպես սահմանվում են օրենքով³⁸ :

Թուրքիայի Սահմանադրության 56-րդ հոդվածը բովանդակում է յուրաքանչյուրի՝ առողջ և հավասարակշռված շրջակա միջավայրում ապրելու իրավունքը: Շրջակա միջավայրի մաքրության բարելավման և աղտոտման կանխարգելման խնդիրները պետության և նրա քաղաքացիների պարտականությունն են: Պետությունը պետք է պլանավորված կարգով ստեղծի առողջապահական կազմակերպություններ և կազմակերպի դրանց գործունեությունը՝ յուրաքանչյուր մարդու առողջ միջավայրում ապրելու հնարավորություն տալու, առողջ մարմին և հոգի ունենալու նպատակներով: Պետությունն այս խնդրի լուծումն իրականացնում է՝ օգտագործելով հանրային և մասնավոր առողջապահական և սոցիալական օգնության հաստատությունները: Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունների ցանցն ընդլայնելու համար օրենքով սահմանվում է առողջության պարտադիր ապահովագրություն³⁹ :

Հունգարիայի Սահմանադրությունում քաղաքացիների հիմնական իրավունքների, ազատությունների և պարտականությունների վերաբերյալ հատուկ գլխի առկայությունը բնութագրում է Հիմնական օրենքի էությունն ու նշանակությունը: Դրանում ամրագրված է, որ յուրաքանչյուր ոք ունի ամենաբարձր մակարդակի ֆիզիկական և հոգևոր առողջության իրավունք: Այդ իրավունքի կենսա-

գործումն իրականացվում է Սահմանադրությունում ամրագրված մի շարք երաշխիքներով՝ առողջապահական հաստատությունների գործունեությանը և բժշկական օգնության և սպասարկման տրամադրմամբ, ֆիզիկական դասընթացների պարբերաբար կազմակերպմամբ, շրջակա միջավայրի պահպանմամբ և այլն (§ 70/D)⁴⁰ :

Խորվաթիայի Սահմանադրության 58-րդ հոդվածով քաղաքացիներին երաշխավորվում է ոչ միայն առողջության պահպանման, այլ նաև առողջ շրջակա միջավայրում ապրելու իրավունքները⁴¹ :

Ճապոնիայի Սահմանադրության 25-րդ հոդվածում ամրագրված է, որ յուրաքանչյուր ոք իրավունք ունի, որպեսզի ապահովվի իր առողջ կենսակերպի նվազագույն մակարդակը, և պետությունը պետք է միջոցներ ձեռնարկի բնակչության առողջության շարունակական զարգացման և ամրապնդման համար⁴² : Ճապոնիայում բժշկական ծառայությունները հիմնականում ֆինանսավորվում են և՛ մասնավոր, և՛ պետական ապահովագրական ծրագրերի հիման վրա: Տեղական ինքնակառավարման մարմինների կառուցվածքում ընդգրկված են առողջապահական ստորաբաժանումներ, որոնք պատասխանատու են տեղական առողջապահական ծրագրերի իրականացման համար⁴³ :

Բրազիլիայի Սահմանադրությունում ամրագրված է քաղաքացու այնպիսի նվազագույն աշխատավարձի իրավունքը, որը բավարար կլինի իր և իր ընտանիքի անձնական, այդ թվում՝ առողջության պահպանման հետ կապված կարիքները բավարարելու համար (7-րդ հոդված): Բացի այդ, Սահմանադրության 196-րդ հոդվածը բովանդակում է դրույթ, որի համաձայն՝ առողջությունը բոլորի իրավունքն է, իսկ պետության պարտականությունը այդ իրավունքի երաշխավորումն է սոցիալական և տնտեսական քաղաքականության իրագործման միջոցով, որը ենթադրում է հիվանդությունների և այլ դժբախտ պատահարների ռիսկերի նվազեցում և մատչելի ու հավասար պայմանների ու ծառայությունների ապահովում յուրաքանչյուրին՝ պահպանելու, բարելավելու և վերականգնելու իր առողջությունը⁴⁴ :

Անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ վերոթվարկյալ երկրներում գործող սահմանադրությունների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ գոյություն ունի բժշկական օգնություն և սպա-

արկում ստանալու, ինչպես նաև առողջության պահպանման երկու համակարգ՝ պետական և մասնավոր: Քաղաքացիների առողջության պահպանումն ապահովող հիմնական ձևը բաժին է ընկնում պետական առողջապահական համակարգին, որն իրագործելու համար պետությունը ընդլայնում է բժշկական մասնագիտացված հաստատությունների ցանցը, տվյալ հաստատությունները զինում է բժշկական և այլ անհրաժեշտ սարքավորումներով, ապահովում է տվյալ բնագավառի մասնագետների ուսուցումն ու մասնագիտական որակավորման բարձրացումը, ինչպես նաև ընդունում է բժշկական օգնության և սպասարկման ոլորտը կանոնակարգող իրավական ակտեր, վերահսկողություն է իրականացնում և՛ պետական, և՛ մասնավոր բժշկական հաստատություններում մատուցվող ծառայությունների որակի նկատմամբ:

Բացի պետական համակարգից, բժշկական օգնությունից և սպասարկումից օգտվել ցանկացող անձն ունի մասնավոր բժշկական հաստատությունների կողմից մատուցվող համապատասխան ծառայություններից օգտվելու հնարավորություն: Չզալի նյութական և ֆինանսական միջոցներ ունեցող նմանօրինակ բժշկական հաստատություններում մարդու համար նախատեսված են ավելի հարմարավետ պայմաններ, իսկ անձնակազմը բաղկացած է բարձր որակավորում ունեցող մասնագետներից, և կարող են մատուցվել ավելի ընդարձակ բժշկական ծառայություններ, քան պետական բժշկական հաստատություններում: Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ անգամ այն երկրներում, որտեղ պետական բժշկական օգնությունն ու սպասարկումը գտնվում են բարձր մակարդակի վրա, միևնույն է, այն զիջում է ազատականացված և ապահովագրմամբ մատուցվող բժշկական օգնությանն ու սպասարկմանը: Ազատ բժշկական օգնությունն ու սպասարկումն ունի իր և՛ դրական, և՛ բացասական կողմերը, քանի որ այն մատչելի է հիմնականում բարձր եկամուտ ունեցող անձանց համար, որոնք մատուցված ծառայությունների դիմաց կատարում են ուղղակի վճարումներ: Այնուհանդերձ, նմանատիպ համակարգի շնորհիվ բարելավվում է բժշկական անձնակազմի նյութական վիճակը, որն էլ խթան է հանդիսանում մասնագիտական որակավորման շարունակական և հետևողական բարձրացման համար, բացի այդ՝ նման ծառայություններից օգտվողը հնարավորու-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

թյուն է ստանում ընտրելու լավագույն որակավորում ունեցող բժշկին⁴⁵ :

Ինչ վերաբերում է ԱՊՀ երկրների սահմանադրություններում բժշկական օգնություն և սպասարկում ստանալուն, ինչպես նաև առողջության պահպանման իրավունքի ամրագրմանը, նշենք, որ Վրաստանի Սահմանադրության 37-րդ հոդվածում ամրագրված է յուրաքանչյուրի՝ առողջության ապահովագրությունից օգտվելու իրավունքը՝ որպես բժշկական օգնության մատչելի միջոց: Անվճար բժշկական օգնության և սպասարկման ապահովման կարգն ու պայմանները սահմանվում են օրենքով: Պետության կողմից վերահսկվում են բոլոր տեսակի առողջապահական հաստատությունները, ինչպես նաև դեղամիջոցների արտադրությունն ու վաճառքը⁴⁶ :

Ադրբեջանի Հանրապետության Սահմանադրությունը բովանդակում է յուրաքանչյուրի՝ բժշկական օգնություն և սպասարկում ստանալու, ինչպես նաև առողջության պահպանման իրավունքը՝ պարտավորեցնելով պետությանը ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ զարգացնելու առողջապահության բոլոր ուղղությունները, երաշխավորելու սանիտարահամաճարակային բարեկեցությունը և ստեղծելու պայմաններ ցանկացած տեսակի բժշկական ապահովագրության համար (41-րդ հոդված)⁴⁷ :

Բելոռուսի Հանրապետության Սահմանադրության 45-րդ հոդվածով քաղաքացիներին երաշխավորվում է առողջության պահպանման իրավունքը, այդ թվում՝ անվճար բժշկական օգնության տրամադրումը պետական առողջապահական հաստատություններում: Պետությունը պարտավորվում է ապահովել բժշկական օգնության և սպասարկման մատչելիությունը բոլոր քաղաքացիներին, իսկ առողջության պահպանման իրավունքն իրացվում է ֆիզիկական դաստիարակության և սպորտի զարգացման, շրջակա միջավայրի բարելավման, առողջապահական վերականգնողական հաստատությունների ցանցի ընդլայնման և այլ համանման միջոցառումների միջոցով⁴⁸ :

Ղազախստանի Հանրապետության Սահմանադրության 29-րդ հոդվածում ամրագրված է քաղաքացիների առողջության պահպանման իրավունքը, ինչպես նաև օրենքով սահմանված եղանակներով երաշխավորված անվճար և վճարովի բժշկական օգնություն և սպասարկում ստանալու

իրավունքը: Միաժամանակ նշվում է, որ բժշկական օգնությունն ու սպասարկումը կարող են ստանալ ինչպես պետական և մասնավոր բժշկական հաստատություններում, այնպես էլ այն անձանց մոտ, ովքեր օրենքով սահմանված կարգով զբաղվում են բժշկական ծառայությունների մատուցմամբ⁴⁹ :

Առողջության պահպանման և օրենքով սահմանված եղանակներով երաշխավորված անվճար բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքները երաշխավորվում է նաև Կիրգիզիայի Հանրապետության Սահմանադրության 34-րդ⁵⁰ , Մոլդովայի Հանրապետության Սահմանադրության 36-րդ⁵¹ , Տաջիկստանի Հանրապետության Սահմանադրության 38-րդ⁵² և Թուրքմենստանի Սահմանադրության 33-րդ հոդվածներով⁵³ :

Ուզբեկստանի Սահմանադրության 40-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի որակյալ բժշկական հետազոտության իրավունք⁵⁴ :

Ուկրաինայի Սահմանադրության 49-րդ հոդվածում ամրագրված է, որ յուրաքանչյուր ոք ունի առողջության պահպանման, բժշկական օգնություն և սպասարկում ստանալու, ինչպես նաև բժշկական ապահովագրության իրավունք: Առողջության պահպանումն ապահովվում է սոցիալ-տնտեսական, բժշկա-սանիտարական և պրոֆիլակտիկ վերականգնողական ուղղվածությամբ պետական ծրագրերի ֆինանսավորման միջոցով: Պետությունը ստեղծում է բոլոր քաղաքացիների համար մատչելի և արդյունավետ բժշկական օգնություն և սպասարկում ստանալու պայմաններ: Պետական առողջապահական հաստատություններում բժշկական օգնությունը և սպասարկումը տրամադրվում են անվճար հիմունքներով: Նման հաստատությունների առկա քանակը երբևէ չի կարող կրճատվել, այդ իսկ պատճառով պետությունը նպաստում է բոլոր տեսակի բժշկական հաստատությունների զարգացմանը⁵⁵ :

Վերլուծելով ԱՊՀ երկրների Հիմնական օրենքները՝ պարզ դարձավ, որ ինչպես եվրոպական երկրներում, այստեղ նույնպես առկա են մարդու բժշկական օգնություն և սպասարկում ստանալու, ինչպես նաև առողջության պահպանման իրավունքի ապահովման երկու ուղղություններ՝ պետական և մասնավոր: Պետական մակարդակով ապահովվում է օրենքով սահմանված եղանակներով հիմնական բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքի իրացումը, իսկ մասնավոր

www.lawinstitute.am

բժշկական հաստատություններում՝ բացի հիմնականից նաև լրացուցիչ բժշկական օգնություն և սպասարկում ստանալու հնարավորությունը:

Հարկավոր է ընդգծել, որ մարդու բժշկական օգնություն և սպասարկում ստանալու, ինչպես նաև առողջության պահպանման իրավունքների կարևորությունը միջազգայնորեն սկզբնավորվեց դեռևս 20-րդ դարից՝ արժևորվելով և դասվելով մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների շարքը: Ասվածը հիմնավորվում է հատկապես նրանով, որ վերջին դարաշրջանի տոտալիտար ռեժիմների փլուզման արդյունքում մարդու սոցիալ-տնտեսական իրավունքներն ու ազատությունները ստացան միջազգային իրավական ամրագրումներ, և մարդու բժշկական օգնություն և սպասարկում ստանալու, ինչպես նաև առողջության պահպանման իրավունքները բացի ներպետական բնույթի խնդիր լինելուց աստիճանաբար վերածվեցին նաև միջազգային բնույթի խնդիրների: Արդյունքում քննարկվող իրավունքների սահմանադրաիրավական ապահովման վրա աստիճանաբար սկսեցին ազդեցություն ունենալ նաև միջազգային չափորոշիչները:

Ներկայում, համընդհանրորեն ճանաչում է ստացել այն, որ մարդու բժշկական օգնություն և սպասարկում ստանալու և առողջության պահպանման իրավունքները գտնվում են միջազգային հանրության պաշտպանության ներքո:

Նույն մոտեցմամբ էլ առաջնորդվեցին նաև ՀՀ 2005 թվականի սահմանադրական բարեփոխումների ընթացքում՝ Սահմանադրության մեջ ամրագրելով յուրաքանչյուր անձի բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքը որպես բարձրագույն արժեք, որի պաշտպանությունն ապահովում է պետությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան: Բացի այդ, պետությունը սահմանափակված է մարդու բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:

Նորաստեղծ պետությունները նույնպես ուշադրության կենտրոնում են պահում քննարկման առարկա դարձած իրավունքների ամրագրումն իրենց հիմնական օրենքներում: Օրինակ՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրության 40-րդ հոդվածում ամրագրված է, որ յուրաքանչյուր ոք ունի առողջության պահպանման իրա-

վունք, օրենքով սահմանված կարգով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք, ինչպես նաև անվճար հիմնական բժշկական ծառայություններ ստանալու իրավունք, որոնց ցանկը և մատուցման կարգը սահմանվում են օրենքով⁵⁶:

Պատասխանելու համար առաջադրված հարցերին՝ որքանով է կարևոր և անհրաժեշտ «բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք» դրույթի ամրագրումը ՀՀ սահմանադրությունում և որքանով է արդարացված «առողջության պահպանման իրավունք» դրույթի բացակայությունը ՀՀ սահմանադրությունում, կատարված վերլուծությունից և պարզաբանումներից հանգում ենք նրան, որ ՀՀ Սահմանադրությունն առողջության պահպանման իրավունքի ամրագրման հարցում հանդես է բերել որոշակի ինքնատիպություն. 2005թ. ՀՀ Սահմանադրության բարեփոխումների ժամանակ 1995թ. ՀՀ Սահմանադրության սկզբնական տեքստից հանվեց «յուրաքանչյուր ոք ունի առողջության պահպանման իրավունք» ձևակերպմամբ դրույթը, խմբագրված տեսքով թողնվեց «յուրաքանչյուր ոք ունի օրենքով սահմանված եղանակներով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք» և «յուրաքանչյուր ոք ունի անվճար հիմնական բժշկական ծառայություններ ստանալու իրավունք» ձևակերպմամբ դրույթները:

Սակայն, գտնում ենք, որ ՀՀ Հիմնական օրենքն առավել լիարժեք դարձնելու համար ճիշտ կլիներ, որ «առողջության պահպանման իրավունք» դրույթը տեղ գտներ նաև ՀՀ Սահմանադրությունում հետևյալ խմբագրությամբ՝ «Յուրաքանչյուր ոք ունի առողջության պահպանման իրավունք: Բնակչության առողջության պահպանման, բարելավման և ամրապնդման համար պետությունն իրականացնում է օրենքով սահմանված առողջապահական ծրագրեր և միջոցառումներ»: Նմանօրինակ ամրագրումը, մեր կարծիքով, «առողջության պահպանման իրավունք» դրույթին կտար ամբողջական տեսք և «բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք» դրույթի հետ միասին կընդգծեր ՀՀ Հիմնական օրենքի ինքնատիպությունը:

- ¹ Տե՛ս Կոնստիտուցիա և օրենսդրական ակտեր բուրժուական պետությունների / Под ред. П. Н. Галанзы. - М.: Госполитиздат, 1959, С. 136.
- ² Տե՛ս Կոնստիտուցիա և օրենսդրական ակտեր բուրժուական պետությունների / Сост. В. А. Картошкин, Е. А. Лукашева. - М.: Изд-во НОРМА, 2002, С. 41.
- ³ Տե՛ս ՀՀ արտաքին գործերի նախարարության պաշտոնական տեղեկագիր. ՄԱԿ-ի շրջանակներում կիրառված պայմանագրեր (Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, 23.06.1993թ.), N4, Երևան, 2004, էջ 40:
- ⁴ Տե՛ս Կոնստիտուցիա և օրենսդրական ակտեր բուրժուական պետությունների / Отв. ред. Е. А. Лукашева. - М.: Изд-во НОРМА, 1996, С. 21-22: Brubaker R., Citizenship and Nationalhood in Franceand Germany. - Harvard, 1992, էջ 82:
- ⁵ Տե՛ս Սոցիալական պետություն և իրավունքների պաշտպանություն. - М.: Изд-во ИГПРАН, 1994, С. 146.
- ⁶ Տե՛ս Կոնստիտուցիա և օրենսդրական ակտեր բուրժուական պետությունների / Сост. проф. В. В. Маклаков. - 3-е издание, перераб. и доп.- М.: БЕ , 2002, С. 348-372.
- ⁷ Տե՛ս Биев Ю. Финансирование по-американски // Медицинская газета. - 2003. - 1 августа.
- ⁸ Տե՛ս Barry D. Whitecomb H. R., The legal foundation of public administration - West Publ. Comp. - 1987, էջ 27:
- ⁹ Տե՛ս Կոնստիտուցիա և օրենսդրական ակտեր բուրժուական պետությունների / Сост. В. В. Маклаков. - 5-е изд., перераб. и доп. - М.: Волгтерс лувен, 2006, С. 423-574.
- ¹⁰ Տե՛ս Կոնստիտուցիա և օրենսդրական ակտեր բուրժուական պետությունների / Под общ. ред.: Окуньков Л. А. // Федеральный конституционный закон Австрии от 10.11.1920г. // - М.: Изд-во Норма, 2001, С. 28-29, 70.
- ¹¹ Տե՛ս Կոնստիտուցիա և օրենսդրական ակտեր բուրժուական պետությունների / Под общей ред. Л. А. Окунькова. Ред. колл. Б. С. Крылов, М. Я. Булошников. - М.: Изд-во группа ИНФРА•М-НОРМА, 1997, С. 353.
- ¹² Տե՛ս Կոնստիտուցիա և օրենսդրական ակտեր բուրժուական պետությունների / Под общ. ред.: Окуньков Л. А. // Конституция Исландии от 17.06.1944г. // - М.: Изд-во Норма, 2001, С. 26-28.
- ¹³ Տե՛ս Կոնստիտուցիա և օրենսդրական ակտեր բուրժուական պետությունների / Под общей ред. Л. А. Окунькова. Ред. колл. Б. С. Крылов, М. Я. Булошников. - М.: Изд-во группа ИНФРА•М-НОРМА, 1997, С. 303-314.
- ¹⁴ Տե՛ս Կոնստիտուցիա և օրենսդրական ակտեր բուրժուական պետությունների / Сост. В. В. Маклаков. - 4-е изд., перераб. и доп. - М.: Волгтерс Клувер, 2003, С. 101-102.
- ¹⁵ Տե՛ս Կոնստիտուցիա և օրենսդրական ակտեր բուրժուական պետությունների / Под общ. ред.: Окуньков Л. А. // Конституция Боснии и Герцеговины от 14.12.1995г. // - М.: Изд-во Норма, 2001, С. 434-444.
- ¹⁶ Տե՛ս Կոնստիտուցիա և օրենսդրական ակտեր բուրժուական պետությունների / Под общей ред. Л. А. Окунькова. Ред. колл. Б. С. Крылов, М. Я. Булошников. - М.: Изд-во группа ИНФРА•М-НОРМА, 1997, С. 253.
- ¹⁷ Տե՛ս Կոնստիտուցիա և օրենսդրական ակտեր բուրժուական պետությունների / Под общ. ред.: Окуньков Л. А. // Конституция Лихтенштейна от 05.10.1921г. // - М.: Изд-во Норма, 2001, С. 376.
- ¹⁸ Տե՛ս նախնի տեղեկություն, // Конституция Люксембурга от 17.10.1868г. //, С. 404: Конституции государств Европейского Союза. Под общей ред. Л. А. Окунькова. Ред. колл. Б. С. Крылов, М. Я. Булошников. - М.: Изд-во группа ИНФРА•М-НОРМА, 1997, С. 459.
- ¹⁹ Տե՛ս Կոնստիտուցիա և օրենսդրական ակտեր բուրժուական պետությունների / Конституция Италии от 27.12.1947г. // : Учебное пособие: / Сост. проф. В. В. Маклаков. - 3-е издание, перераб. и доп.- М.: БЕ , 2002, С. 137.
- ²⁰ Տե՛ս Կոնստիտուցիա և օրենսդրական ակտեր բուրժուական պետությունների / Гимн Российской Федерации. Герб Российской Федерации. Флаг Российской Федерации. - М.: Изд-во «Омега-Л», 2011, С. 12.
- ²¹ Տե՛ս Կոնստիտուցիա և օրենսդրական ակտեր բուրժուական պետությունների / Под общ. ред.: Окуньков Л. А. // Конституция Албании от 21.10.1998г. // - М.: Изд-во Норма, 2001, С. 190.
- ²² Տե՛ս նախնի տեղեկություն, // Конституция Андорры от 14.03.1993г. //, С. 232.
- ²³ Տե՛ս Կոնստիտուցիա և օրենսդրական ակտեր բուրժուական պետությունների / Под общей ред. Л. А. Окунькова. Ред. колл. Б. С. Крылов, М. Я. Булошников. - М.: Изд-во группа ИНФРА•М-НОРМА, 1997, С. 111.
- ²⁴ Տե՛ս Կոնստիտուցիա և օրենսդրական ակտեր բուրժուական պետությունների / Под общ. ред.: Окуньков Л. А. // Конституция Болгарии от 12.07.1991г. // - М.: Изд-во Норма, 2001, С. 401-402.
- ²⁵ Տե՛ս նախնի տեղեկություն, // Конституция Эстонии от 28.06.1992г. //, С. 719-720.
- ²⁶ Տե՛ս նախնի տեղեկություն, // Конституция Финляндии от 11.06.1999г. //, С. 374.
- ²⁷ Տե՛ս Կոնստիտուցիա և օրենսդրական ակտեր բուրժուական պետությունների / Под общей ред. Л. А. Окунькова. Ред. колл. Б. С. Крылов, М. Я. Булошников. - М.: Изд-во группа ИНФРА•М-НОРМА, 1997, С. 683-684.
- ²⁸ Տե՛ս Constitution française du 4 octobre 1958. La documentation française. Documents d'Études. Droit constitutionnel et institution politique. ? 1.04. Édition 2000, էջ 3-5:

- ²⁹ Տե՛ս Կոնստիտուցիա շարքայնիկ գոսարդրնիկ: Վելիկոբրիտանիա, Ֆրանսիա, Գերմանիա, Իտալիա, Իսպանիա, Եվրոպայնիկ Տոյոյ, Տոյննննիկ Տիտայնի Աերիկի, Յոնիա, Ինդիա: Մոլիկ. ոսոսիկ / Տոստ. Վ. Վ. ՄակլակոՎ. - 4-ե իզդ., ոերերաբ. և ձոս. - Մ.: Վոլղերս Լուեր, 2003, Տ. 235.
- ³⁰ Տե՛ս Կոնստիտուցիա գոսարդրնիկ Եվրոպայնիկ. Վ 3-ի տոյաի. Տ. 2 / Սոձ ըոլի. ոեր.: ՕկոնյոկոՎ Յ. Ա. // Կոնստիտուցիա Լատուի ըտ 15.02.1922դ. // - Մ.: Իզդ-ոո Որնա, 2001, Տ. 316.
- ³¹ Տե՛ս նոյն տեղոոձ, // Կոնստիտուցիա Լիտուի ըտ 25.10.1992դ. //, Տ. 340.
- ³² Տե՛ս նոյն տեղոոձ, // Կոնստիտուցիա Մակեձոնի ըտ 17.11.1991դ. //, Տ. 439.
- ³³ Տե՛ս Կոնստիտուցիա գոսարդրնիկ Եվրոպայնիկ Տոյոյ. Սոձ ըոլի. ոեր. Յ. Ա. ՕկոնյոկոՎ. Ղեր. կոլլ. Բ. Տ. ԿրյոլոՎ, Մ. Յ. ԲոլոշնիկոՎ. - Մ.: Իզդ-ոո ցրոպոյնի ԻՆՖՐԱ•Մ-ՈՐՄԱ, 1997, Տ. 480.
- ³⁴ Տե՛ս Կոնստիտուցիա գոսարդրնիկ Եվրոպայնիկ. Վ 3-ի տոյաի. Տ. 2 / Սոձ ըոլի. ոեր.: ՕկոնյոկոՎ Յ. Ա. // Կոնստիտուցիա Քոլիշի ըտ 02.04.1997 յ. // - Մ.: Իզդ-ոո Որնա, 2001, Տ. 697.
- ³⁵ Տե՛ս Կոնստիտուցիա գոսարդրնիկ Եվրոպայնիկ Տոյոյ. Սոձ ըոլի. ոեր. Յ. Ա. ՕկոնյոկոՎ. Ղեր. կոլլ. Բ. Տ. ԿրյոլոՎ, Մ. Յ. ԲոլոշնիկոՎ. - Մ.: Իզդ-ոո ցրոպոյնի ԻՆՖՐԱ•Մ-ՈՐՄԱ, 1997, Տ. 538.
- ³⁶ Տե՛ս Կոնստիտուցիա գոսարդրնիկ Եվրոպայնիկ. Վ 3-ի տոյաի. Տ. 3 / Սոձ ըոլի. ոեր.: ՕկոնյոկոՎ Յ. Ա. // Կոնստիտուցիա Րոմոնի ըտ 21.11.1991դ. // - Մ.: Իզդ-ոո Որնա, 2001, Տ. 69.
- ³⁷ Տե՛ս նոյն տեղոոձ, // Կոնստիտուցիա ՏլոՎակի ըտ 01.09.1992դ. //, Տ. 122.
- ³⁸ Տե՛ս նոյն տեղոոձ, // Կոնստիտուցիա ՏլոՎենի ըտ 23.12.1991դ. //, Տ. 179.
- ³⁹ Տե՛ս նոյն տեղոոձ, // Կոնստիտուցիա Տորքի ըտ 07.11.1982դ. //, Տ. 238.
- ⁴⁰ Տե՛ս Կոնստիտուցիա գոսարդրնիկ Եվրոպայնիկ. Վ 3-ի տոյաի. Տ. 1 / Սոձ ըոլի. ոեր.: ՕկոնյոկոՎ Յ. Ա. // Կոնստիտուցիա Վոնցրի ըտ 18.08.1949դ. // - Մ.: Իզդ-ոո Որնա, 2001, Տ. 562.
- ⁴¹ Տե՛ս Կոնստիտուցիա գոսարդրնիկ Եվրոպայնիկ. Վ 3-ի տոյաի. Տ. 3 / Սոձ ըոլի. ոեր.: ՕկոնյոկոՎ Յ. Ա. // Կոնստիտուցիա ԽորՎաի ըտ 22.12.1990դ. // - Մ.: Իզդ-ոո Որնա, 2001, Տ. 457.
- ⁴² Տե՛ս Կոնստիտուցիա շարքայնիկ գոսարդրնիկ: Վելիկոբրիտանիա, Ֆրանսիա, Գերմանիա, Իտալիա, Եվրոպայնիկ Տոյոյ, Տոյննննիկ Տիտայնի Աերիկի, Յոնիա, Ինդիա: Մոլիկ. ոսոսիկ / [Տոստ. Տո., ոեր., աՎտ. ՎՎեձ. և Վոտոյն. Տ. Վ. ՄակլակոՎ]. - 5-ե իզդ., ոերերաբ. և ձոս. - Մ.: Վոլղերս Կլուեր, 2006, Տ. 398.
- ⁴³ Տե՛ս Էնցիկլոոեձիա «Կոնստիտուցիա Յոնիա ըտ Ա ձոս Յ» / Յնձեհ. Էնցիկլոոեձիա - <http://encycl.yandex.ru>:
- ⁴⁴ Տե՛ս Կոնստիտուցիա շարքայնիկ գոսարդրնիկ // օնստիտուցիա Բրազիլի ըտ 05.10.1988դ. // : Մոլիկ. ոսոսիկ: / Տոստ. որոֆ. Վ. Վ. ՄակլակոՎ. - 3-ե իզձոննիկ, ոերերաբ. և ձոս.- Մ.: ԲԵ , 2002, Տ. 413, 510.
- ⁴⁵ Տե՛ս Կոնստիտուցիոննո (գոսարդրնիկ) ոերայնիկ շարքայնիկ Տրոն. Օոյնի Տիտ. Յ. Ա. Տարոշն. - Մ., 1996, Տ. 161-163.
- ⁴⁶ Տե՛ս Կոնստիտուցիա գոսարդրնիկ-տոյննիկոՎ ՏՈԳ. // Կոնստիտուցիա Գրոշի ըտ 24.08.1995դ. // - Ղեր. կոլլ. Յ. Ա. ՕկոնյոկոՎ, Վ. Վ. ՕկսոնյոկոՎ, Մ. Յ. ԲոլոշնիկոՎ. - Ինստիտոյնիկ ձոնոդոտելիկ Վ ֏րոձոննոյնիկ ոերայնիկ ըոյնի Քրոձոննիկ Քրոձոննիկ Ֆեձերոցի, - Մ.: Իզձ-ոո ցրոպոյնի ՈՐՄԱ-ԻՆՖՐԱ•Մ, 1999, Տ. 215.
- ⁴⁷ Տե՛ս նոյն տեղոոձ, // Կոնստիտուցիա Աերնայնձոնսկոյ Ղերոպոլի ըտ 12.11.1995դ. //, Տ. 28.
- ⁴⁸ Տե՛ս նոյն տեղոոձ, // Կոնստիտուցիա Ղերոպոլի Բելորոշի ըտ 24.11.1996դ. //, Տ. 138.
- ⁴⁹ Տե՛ս նոյն տեղոոձ, // Կոնստիտուցիա Ղերոպոլի Աոնոստոն ըտ 30.08.1995դ. //, Տ. 281.
- ⁵⁰ Տե՛ս նոյն տեղոոձ, // Կոնստիտուցիա Կրնցնսկոյ Ղերոպոլի ըտ 05.05.1993դ. //, Տ. 338.
- ⁵¹ Տե՛ս նոյն տեղոոձ, // Կոնստիտուցիա Ղերոպոլի ՄոլձոՎո ըտ 29.07.1994դ. //, Տ. 386.
- ⁵² Տե՛ս նոյն տեղոոձ, // Կոնստիտուցիա Ղերոպոլի Տոձնիկոնոստոն ըտ 06.11.1994դ. //, Տ. 505:
- ⁵³ Տե՛ս նոյն տեղոոձ, // Կոնստիտուցիա Տորքոնոստոն ըտ 18.05.1992դ. և ըտ 27.12.1995դ. (Տ իզնոննիկ) //, Տ. 560.
- ⁵⁴ Տե՛ս նոյն տեղոոձ, // Կոնստիտուցիա Աոնեկոնոստոն ըտ 08.12.1991դ. //, Տ. 603.
- ⁵⁵ Տե՛ս Կոնստիտուցիա գոսարդրնիկ Եվրոպայնիկ. Վ 3-ի տոյաի. Տ. 3 / Սոձ ըոլի. ոեր.: ՕկոնյոկոՎ Յ. Ա. // Կոնստիտուցիա Արոննի ըտ 28.06.1996դ. // - Մ.: Իզձ-ոո Որնա, 2001, Տ. 320.
- ⁵⁶ Տե՛ս Լեձոննիկն Ղերոպոլի ձոննիկ ոերայնիկ Տոնննիկն Տոնննիկն ոերայնիկն, ընդոննիկն՝ 10.12.2006թ., ԼՂձ Նոննիկն ոերայնիկն ոերայնիկն Ղերայնիկն <http://www.president.nkr.am/am/constitution/>:

РЕЗЮМЕ

Важность закрепления права на получение медицинской помощи в основном законе страны

Насколько важно и необходимо закрепление положения “право на получение медицинской помощи” в онституции и чем оправдано отсутствие в онституции положения о “праве на охрану здоровья”? Для получения ответов на поставленные вопросы, был проведен анализ основных законов зарубежных государств, в результате чего было проведено условное деление конституций:

- конституции, в которых не закреплены права на получение медицинской помощи и на охрану здоровья;
- конституции, в которых эти права закреплены косвенно, т.е. представлены посредством рядом схожих прав или в которых делается ссылка на специальное законодательство;
- конституции, в которых прямо закреплены права на получение медицинской помощи и/или на охрану здоровья.

Автор считает, что для того, чтобы придать Основному закону РА более полноценный вид, было бы правильнее закрепить положение “право на охрану здоровья” и в онституции РА в следующей редакции: “Каждый имеет право на охрану здоровья. Для охраны, улучшения и укрепления здоровья населения, государство осуществляет предусмотренные законом оздоровительные программы и мероприятия”. Подобное закрепление придало бы положению “право на охрану здоровья” целостный вид и вместе с положением “право на получение медицинской помощи” подчеркнуло бы своеобразие Основного закона РА.

SUMMARY

The importance of incorporation of the right to receive medical assistance and services in state Basic law

To what extent is the necessity and importance of stipulation of the «right to receive medical assistance and services» provision in Basic law and to what extent is justified the absence of the «right to health care» provision in it? Analysis of the constitutions of foreign countries helped to answer these questions, and as a result we had a conventional division of the constitutions as following:

- Constitutions which are not fixed with the human right to receive medical assistance and services, as well as the right to health care,
- Constitutions, in which these rights are fixed in an indirect manner, represented by a number of related rights or having reference to special legislation,
- Constitutions which are directly fixed with the human right to receive medical assistance and services and/or the right to health care.

According to the author, in order to make the state Basic law more complete, the provision «right to health care» would better be stipulated in the Constitution of Republic of Armenia with the following manner: «Everyone shall have right to health care. The State shall undertake health care programs and other measures prescribed by the law for maintaining, improving and strengthening the health of population». The stipulation of both above mentioned provisions in the Constitution will emphasis its distinctiveness.

ՎԼԱԴԻՄԻՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի
իրավաբանական ֆակուլտետի քրեական և
քրեական դատավարության իրավունքի
ամբիոնի ասպիրանտ



ԳՈՐԾԸ ԴԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ ԻՐԱՎԱԿԱՆ ՄՏՔԻ ՀՈՒՇԱՐՉԱՆՆԵՐՈՒՄ

Սույն հոդվածում նպատակ ունենք վերլուծել գործը դատական քննության նախապատրաստելու մասին քրեադատավարական օրենսդրության պատմական զարգացման գործընթացը: Այսպիսի վերլուծությունը թույլ կտա ստեղծել հիմք քրեական դատավարության այս փուլի վերաբերյալ գործող օրենսդրության ուսումնասիրության համար, ինչպես նաև հնարավորություն կընձեռնի այս փուլի արդի խնդիրները քննարկելիս կարևոր եզրակացություններ անել:

Գործը դատական քննության նախապատրաստելու ինստիտուտը հազարամյակների պատմություն ունի և դատական իրավունքի պատմությանը հայտնի է դեռևս մ.թ.ա. 5-րդ դարի կեսերից: Այսպես, պրոֆեսոր Վ. Գ. Ավետիսյանը, ներկայացնելով հռոմեական իրավունքի կայացման պատմությունը, գրում է, որ Հանրապետական ժամանակաշրջանի քաղաքացիական դատավարությունը ընթանում էր **jus** և **judicium** կոչվող փուլերով: Առաջին փուլը կրում էր նախապատրաստական բնույթ: Գործի քննությունն այս փուլում ավարտվում էր, եթե պատասխանողն ընդունում էր հայցը, իսկ եթե նա առարկում էր ներկայացված հայցապահանջի դեմ, ապա քննությունն անցնում էր երկրորդ փուլ, որի ընթացքում կատարվում էր առավել խոր և հանգամանալից քննություն:

Դատավարության **jus** փուլն ընթանում էր քաղաքի հրապարակներից մեկում՝ բանավոր ընթացակարգով և կրում էր հրապարակային բնույթ, այսինքն՝ դատավարությանը կարող էր մասնակցել ցանկացած անձ: Դատավարության այս փուլը վարում էր դրա համար հատուկ լիազորված պաշտոնատար անձը, ով կոչվում էր պրետոր¹:

Հանրապետական ժամանակաշրջանի կայացման ավելի ուշ փուլում (մ.թ.ա. 1-ն դար) գործը դատական քննության նախապատրաստելու փուլը գործում էր նաև քրեական դատավարությունում: Այսպես, համոզվելով, որ կասկածյալի դեմ վկայող ապացույցները հիմնավոր են, մեղադրողը դիմում էր համապա-

տասխան հանձնաժողովի պրետոր-նախագահողին՝ պահանջելով, որ նա կասկածյալին դատի տալու որոշում կայացնի (սա այսպես կոչված **postulatio** - ն էր): Պրետորը ծանոթանում էր գործին և, եթե նա գտնում էր, որ բոլոր պահանջները պահպանված են, ապա նա կասկածյալի անունը ներառում էր ամբաստանյալների ցուցակում (*nomen accipiebat*) և տեղեկացնում վերջինիս նրա բացակայության դեպքում:

Այնուհետև պրետորը մեղադրողին դիպրոմ² էր հանձնում և նախաքննության համար վերջնաժամկետ նշանակում՝ հայտարարելով համապատասխան օր դատական քննության համար³:

Ինչ վերաբերվում է հին և վաղ միջնադարյան (մ.թ.ա. 1-ին հազ. - մ.թ. 9-րդ դար) Հայաստանի դատական իրավունքում գործը դատական քննության նախապատրաստելու ինստիտուտի պատմական զարգացման ուսումնասիրությանը, ապա մեր առջև հանդես էր դրոշակի դժվարություններ՝ պայմանավորված այն հանգամանքով, որ մեզ չեն հասել այդ ժամանակների իրավունքի գրավոր աղբյուրները: Այդ պատճառով անհնար է վերականգնել այս ինստիտուտի այդ ժամանակաշրջանի նկարագիրը:

Եթե հայ իրավունքի պատմության վերոգրյալ շրջանից մեզ հասած իրավունքի գրավոր աղբյուրները դատական իրավունքի վերաբերյալ շատ աղքատիկ են, ապա նույնը չի կարելի ասել զարգացած միջնադարի՝ 10-13 դդ. մասին: Այս շրջանում հայտնվում է հայ իրավունքի հիմնական աղբյուրներից մեկը՝ Մխիթար Գոշի Դատաստանագիրքը (1184թ.):

Ըստ Մխիթար Գոշի Դատաստանագրքի՝ մինչև դատական քննությունը դատավորն անհրաժեշտության դեպքում պետք է ծանոթանար գործին, առանձին լսեր կողմերին և ապա նշանակեր դատական նիստ. «Մի՛ զամբաստանի կամ գրատախազի միայն լուիցե գբան, և եթե լուիցե, ուսցի միայն, այլ մի՛ վճիռ հատցե մինչ ի միասին կատարելապես քննեսցի»⁴: Այս նախնական գործողություններից հետո դատավորը նշանակում էր դատական նիստի օրը⁵:

Չարգացած միջնադարի հայ իրավունքի

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

աղբյուրների մեջ կարևոր տեղ են զբաղեցնում նաև Սմբատ Սպարապետի Դատաստանագիրքը (1265թ.) և Դավիթ Ալավկորդու կանոնները (11-12 դդ.): Հայ իրավաբանական մտքի այս ականավոր հուշարձանները չեն պարունակում գործը դատական քննության նախապատրաստելու վերաբերյալ տեղեկություններ, այդ իսկ պատճառով դուրս կմնան այս ուսումնասիրության շրջանակներից:

Հարկ է նշել, որ գործը դատական քննության նախապատրաստելը հայտնի է եղել նաև միջնադարյան այլ երկրների օրենսդրությանը: Այսպես, օրինակ՝ աշխարհահռչակ գերմանական «Կարոլինա» (1532թ.) դատաստանագրքի LIV հոդվածը սահմանում է, որ խոշտանգումների միջոցով կամ առանց դրանց ստացված խոստովանություններից հետո դատավորը պետք է ճշտեր հարցաքննվողի կողմից կատարված հանցանքի վերաբերյալ հանգամանքները, որպեսզի որոշեր՝ արդյոք հարցաքննվողի կողմից արված խոստովանությունները համապատասխանում են իրականությանը, թե՛ ոչ՝: Հանցագործության հանգամանքները պարզելուց հետո դատավորը դատական քննության օր էր նշանակում:

Ուշագրավ է, որ Մխիթար Գոշի Դատաստանագիրքը, գրված լինելով մոտ երեք հարյուր հիսուն տարի առաջ, քան գերմանական «Կարոլինան», կտրականապես դեմ էր ծեծի, խոշտանգումների և այլ բարբարոսական մեթոդների միջոցով ապացույցների ձեռքբերմանը և ավելի հանգամանորեն էր անդրադառնում գործը դատական քննության նախապատրաստելու հարցերին: Այս հանգամանքը, իհարկե, պատիվ է բերում Դատաստանագրքի հեղինակին և միաժամանակ վկայում այս դարաշրջանի հայ իրավական մտքի պատշաճ մակարդակի մասին:

Հայ իրավաբանական միտքը տևական ընդմիջումից հետո (պայմանավորված մոնղոլների արշավանքների 13 դ., իսկ այնուհետև Հայկական լեռնաշխարհում 14-19 դդ. պարսկական ու թուրքական գերիշխանության հաստատման հետ), 18-րդ դարի կեսերին, կրկին վերելք ապրեց, որի շնորհիվ ստեղծվեցին այնպիսի արժեքավոր իրավական հուշարձաններ, ինչպիսիք են «Աստրախանի հայոց դատաստանագիրքը» (1765թ.) և «Որոգայթ փառացը» (1773թ.):

«Աստրախանի Հայոց Դատաստանագիրքը», գրում է Մ. Գ. Խաչատրյանը, տարբերվում է ինչպես իր նախորդներից, այնպես էլ իր ժամանակի հայտնի բոլոր իրավական հուշարձաններից: Այն պարունակում է այնպիսի քրեադատավարական սահմանակարգեր, որոնք մինչ այդ հայտնի չեն եղել իրավունքի պատմությանը: Այդ նորամուծությունները վերաբերում են ինչպես քրեական դատավարության սկզբունքներին, այնպես էլ դատական ապացույցներին ու դատավորների անձին՝: Չնայած այս առաջա-

դիմական դրույթների առկայության, Դատաստանագիրքը չի նախատեսում գործը դատական քննության նախապատրաստելու վերաբերյալ մանրամասներ:

Ի տարբերություն «Աստրախանի Հայոց Դատաստանագրքի», Շ. Շահամիրյանի «Որոգայթ փառաց» տրակտատը հանգամանորեն անդրադարձել է գործը դատական քննության նախապատրաստելու հարցերին: Սակայն, մինչև տրակտատի հոդվածների մանրագնմին վերլուծությանն անցնելը, հարկ է նշել, որ այն ստեղծվել է աշխարհում առաջինը համարվող ԱՄՆ Սահմանադրության հռչակումից 14 տարի առաջ և Մադրասի հայ համայնքում մասնակիորեն գործածվել է ԱՄՆ Սահմանադրության գործադրությունից վեց տարի առաջ (1783թ.):⁸ Սակայն, տրակտատի ոչ բոլոր հոդվածները ունեն սահմանադրական բնույթ, այն անդրադարձել է նաև քրեական դատավարության իրավունքին ընդհանրապես և գործը դատական քննության նախապատրաստելու կարգին մասնավորապես:

Այսպես, համաձայն տրակտատի 506-րդ հոդվածի՝ դատարանի կողմից ընտրվում են առաքինի և բարի համբավի տեր իննսունչորս տղամարդ. դրանցից յոթանասունը՝ մեղադրյալի մեղավորություն-անմեղությունը որոշելու համար, իսկ քսանչորսը՝ դատելու (ընդ որում քսանչորսից տասներկուսը պետք է ընտրված լինեն մեղադրյալի կողմից, ում վերաբերյալ որ զանգատ է հարուցվել):⁹ Այսպիսով, յոթանասուն քննիչների (բնագրում՝ «որոնողք») գործառույթը, ըստ Շահամիրյանի, մեղադրյալին դատի տալն էր, իսկ քսանչորս դատավորներից (բնագրում՝ «գատկողք») կազմված կոլեգիան գործը քննում էր ըստ էության:

Դատի տալու ընդհանուր պատկերն ըստ «Որոգայթ փառացի» հետևյալն էր. «Նախ Սուրբ ավետարանի վրա երդվեցնում են յոթանասուն քննիչներին, ապա քսանչորս դատողներին, ի հաստատումն այն բանի, որ իրենք խոստանում են իշխանավորների և դատավորների առջև ասել միայն այն, որը համապատասխան է Հայոց օրենսդրությանը, և մեղադրվողի նկատմամբ անչար ու անաչառ որոշում և վճիռ կայացնել ըստ իրենց մարդկային բնության և բանական կարողության: Երդվելուց հետո յոթանասուն քննիչները և երկու ատենախոսները, իրենց հետ վերցնելով մեղադրվողի դատական գործը, առանձնանում են մի սենյակում, փակում դռները և ... փակ դռների հետևում մնում են այնքան ժամանակ, մինչև որ վիճարկումից հետո յոթանասուն հոգին համաձայնության են գալիս երկուսից մեկում. կամ մեղադրյալն անմեղ է, կամ մեղավոր և դատական պատիժ կրելու ենթակա. երկբնույթ որոշում չի կայացվում: Որոշումը, որն ընդունվում է քննիչների համաձայնությամբ, արձանագրվում է թղթի վրա, որի տակ ստորագրում են բոլոր յոթանասուն քննիչները և դուրս են գալիս սեն-

www.lawinstitute.am

յակից: Քննիչների խմբի գլխավորը ստորագրված թուղթը ձեռքին կանգնում է իշխանի և դատավորների առջև և բարձրաձայն ասում. «Անմեղ է» կամ «Մեղավոր է»¹¹: Եթե քննիչների վճիռը լինում է «Անմեղ», ամբաստանյալին իսկույն առանց որևէ խոսքի բանտից ազատ էին արձակում, իսկ եթե քննիչների վճիռը լինում էր «Մեղավոր է», ապա գործը փոխանցվում էր քսանչորս դատիչներից կազմված փոքր կոլեգիային, և դրանով իսկ սկսվում էր դատական քննությունը:

Իրենց ժամանակների համար առաջադիմական համարվող «Ռոդգայթ փառացի» այս դրույթները

ուսումնասիրելիս նկատվում է անգլիական քրեադատավարական օրենսդրության բացահայտ ազդեցությունը: Բանն այն է, որ գործը դատական քննության նախապատրաստելու նույնատիպ դատավարական կարգ նախատեսված է եղել անգլիական «**committal proceedings**» (այսինքն՝ դատի տալ) ինստիտուտով, որը գործնական կիրառություն է ունեցել Անգլիայում 14-րդ դարից մինչև 1933թ., երբ դատի տալու գործառնությունները անցան մագիստրատներին¹²:

¹ Տե՛ս Ավետիսյան Վ. Գ. «Հռոմեական մասնավոր իրավունք»: Երևանի պետ. համալս. Եր.: Երևանի համալս. հրատ., 2010թ., 185-186 էջեր:

² Պրետորի կողմից տրված դիպլոմը մեղադրողին տալիս էր հետևյալ իրավունքները՝ 1) կատարել բնակարանի խուզարկություն ինչպես կասկածյալի, այնպես էլ այլ անձանց մոտ (իհարկե, որոշ սահմանափակումներով), 2) վերահսկել անձնական նամակագրությունը և կրկնորինակել նամակները, 3) պարտադրել այն անձանց, ում նա անհրաժեշտ էր համարում, վկայություն տալու համար ներկայանան Հռոմ (**testimonium demmtere alicui**), 4) օգտվել պետական և համայնքային մարմինների ծառայություններից:

³ Տե՛ս Зелинский Ф.Ф.: Римский уголовный процесс // М. Туллий Цицерон. Полное собрание речей в русском переводе. Т. I. СПб, 1901, С. 759. Հղումն ըստ. <http://elar.uniyar.ac.ru/jspui/handle/123456789/1106>

⁴ Տե՛ս Մխիթար Գոշ, Գիրք Դատաստանի, Աշխատասիրության Խ. Թորոյանի, Երևան, 1975թ. Ա խմբագրություն, Նախադրություն, գլուխ Զ, էջ 9:

⁵ Տե՛ս Դազինյան Գ.Ս. «Քրեական դատավարության պատմական և արդի հիմնահարցերը Հայաստանում»: Եր., Երևանի համալս. հրատ., 2001թ., էջ 23: Տե՛ս նաև՝ Суд и процесс в Армении X-XIII вв./ Отв. ред. С. Т. Еремян.- Ер.: Изд-во АН Арм ССР, 1985, С. 201:

⁶ “Каролина. Уголовно-судебное уложение Карла V”. Перевод, предисловие и примечания проф. С.Я. Була-това. Алма-Ата, 1967:

⁷ Տե՛ս Մ. Գ. Խաչատրյան «Քրեական դատավարության տեսության և պրակտիկայի հարցեր», Երևան, 1996թ. էջ 103: Տե՛ս նաև՝ «Հայրենիքի ձայն», 8 ապրիլի 1981թ.:

⁸ Տե՛ս Համբարձումյան Ռ. Հ. «Ռոդգայթ փառացի»: Ակունքները, այժմ էականությունը և առանձնահատկությունները: Ուսումնասիրություն, Եր.: Նժար, 1999թ., էջ 3:

⁹ Տե՛ս Տրակտատի հողվածների կարգային համարները և դրանց բովանդակությունը վերցված են Ռ. Հ. Ավագյանի «Հայ իրավական մտքի զանձարան» (մ. թ. ա. 9դ. – մ.թ. 19դ.), (Երևան, Հ. 2., «ՄՆԻԻ ԵՄ- XXI ԴԱԸ», 2002թ.) աշխատությունից:

¹⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 184: Տե՛ս նաև՝ Авакян Р. О. “Памятники армянского права” -Ер.: “ЕФ МНЮИ – XXI ВЕК”, 2000., С. 617:

¹¹ Տե՛ս նույն տեղը, 184-185 էջեր:

¹² Տե՛ս Гущенко К.Ф., Головки Л.В., Филимонов Б.А. “Уголовный процесс западных государств”. Изд.2-ое, доп. и испр. – издательство “Зерцало-М”, 2002., С. 119-121:

РЕЗЮМЕ

Институт подготовки уголовного дела к судебному заседанию в памятниках права

Научная статья посвящена истории развития уголовно-процессуального законодательства о стадии подготовки уголовного дела к судебному заседанию.

Стадия подготовки уголовного дела к судебному заседанию в уголовно-процессуальном законодательстве Армении имеет богатую историю.

Такой анализ отечественного опыта реформирования рассматриваемой стадии создает основу для изучения действующего законодательства, позволит сделать выводы, важные при разрешении актуальных уголовно-процессуальных проблем современной науки.

SUMMARY

Institute of the preparation of a criminal case to a court hearing in the monuments of law

The scientific article is dedicated to the history of the criminal procedurâ legislation of the preparation of a criminal case to trial.

The stage of the preparation of a criminal case to a court hearing in the criminal procedure legislation of Armenia has a rich history.

This analysis of domestic reform experiences of this stage provides the basis for the study of existing legislation. It will allow to draw conclusions that are important in resolving pressing problems of criminal procedure of modern science.

ԳԵՂԱՄ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀՀ կառավարության աշխատակազմի «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի իրավաբան
ՀՀ պետական կառավարման ակադեմիայի իրավագիտության ամբիոնի 2-րդ տարվա ասպիրանտ



ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Իրավաբանական անձանց իրավական կարգավորման առանձնահատկությունները ԵՄ-ում կայանում են նրանում, որ դրանց վրա ազդեցություն են գործում ինչպես առանձին պետությունների օրենսդրությունները, այնպես էլ տարբեր իրավական հարցերի շուրջ ընդունված համաեվրոպական ակտերը:

Եվրոպական Միության ակտերում հանդիպում են տարբեր տերմիններ. «իրավաբանական անձ» (legal person), «ընկերություն» (company), «տնտեսական ընկերություն» (society), «ֆիրմա» (firm), «տնտեսվարող սուբյեկտ» (undertaking, enterprise), ինչն առաջացնում է որոշակի անորոշություն: Քանի որ տնտեսական մրցակցության մեջ ընդգրկված անձանց տարբերակումն ինչպես տեսական, այնպես էլ գործնական կարևորություն ունի, ապա անհրաժեշտ է պարզաբանել դրանցից յուրաքանչյուրի էությունը և դերակատարությունը ԵՄ-ի օրենսդրությունում:

Համաձայն Եվրոպական Միության գործունեության մասին պայմանագրի (այսուհետ նաև՝ Լիսաբոնի պայմանագիր) 54-րդ հոդվածի 2-րդ պարբերության՝ «ընկերություններ» և «ֆիրմաներ» են համարվում քաղաքացիական կամ առևտրային օրենսդրության համաձայն հիմնադրված (constituted under civil or commercial law) ընկերությունները կամ ֆիրմաները, այդ թվում՝ կոոպերատիվները և հանրային կամ մասնավոր օրենսդրությամբ կարգավորվող այլ իրավաբանական անձինք (other legal persons governed by public or private law)՝ բացառությամբ ոչ առևտրային կազմակերպությունների (non-profit-making)¹:

Այսպիսով, ելնելով այս հոդվածի դրույթներից, կարելի է եզրահանգում կատարել, որ «ընկերություն» հասկացության տակ հասկացվում են բոլոր տեսակի իրավաբանական անձինք, որոնց հիմնական նպատակը շահույթի ստացումն է:

Միևնույն ժամանակ, մասնագետների կարծիքով 54-րդ հոդվածը տարածվում է նաև ընկերությունների վրա, որոնք իրավաբանական անձինք չեն: Նման դատողություններ անում են մի շարք հեղինակներ, ովքեր ընկերությունների շարքն են դասում նաև իրավաբանական անձ չհանդիսացող կազմակերպություններին՝ միևնույն ժամանակ վերապահում կատարելով, որ վերջիններս իրենց էությամբ կարողանան ազատ տնտեսական գործունեություն իրականացնել արտասահմանում²:

Նրանց կարծիքով տվյալ դեպքում վճռորոշ դեր է խաղում ընկերության իրավական որոշակի անկախությունն իր մասնակիցներից, ինչպես նաև հատուցելի տնտեսական գործունեության իրականացման փաստը, ընդ որում, պարտադիր չէ որպես հիմնական գործունեություն:

Այսպիսով, ԵՄ-ում կիրառվող «ընկերություն» հասկացությունը հավաքական է և ներառում է տարբեր տեսակի իրավաբանական անձանց: Միևնույն ժամանակ, «ընկերություն» հասկացությունն ավելի լայն հասկացություն է, քան «իրավաբանական անձ» հասկացությունը, քանի որ այն ներառում է նաև իրավաբանական անձ չհանդիսացող անձանց:

«Ընկերություն» հասկացության այսքան լայն մեկնաբանումն անհրաժեշտություն է առաջացնում հարաբերակցել դրա փախհարաբերությունը «տնտեսվարող սուբյեկտ» հասկացության հետ: Օրենսդրական փոփոխությունները կամ տնտեսվարող սուբյեկտի կազմակերպատիրական ձևի ձևափոխումը, որն արտահայտվում է տնտեսվարող սուբյեկտին իրավաբանական անձի իրավունքներ տալու կամ զրկելու հետ, չեն ազդում տնտեսվարող սուբյեկտի տնտեսական էության վրա: Այսինքն, տնտեսվարող սուբյեկտի կողմից իրավաբանական անձանց իրավունքով օժտված լինելը վերջինիս կարևոր, բայց ոչ պարտադիր

www.lawinstitute.am

հատկանիշն է³:

Եվրոպական իրավունքում հաճախ օգտագործվող «տնտեսվարող սուբյեկտ» հասկացությունն սկզբնական շրջանում լայնորեն օգտագործվում էր Եվրոպական Համայնքի «մրցակցային օրենսդրությունում»: Հենց ԵՀ-ի մրցակցային օրենսդրության մեջ ձևավորվել է տնտեսվարող սուբյեկտի «եվրոպական» հասկացությունը⁴:

Տնտեսվարող սուբյեկտի հասկացության սահմանումը ԵՄ-ի մրցակցային օրենսդրության մեջ «նախադեպային» ծագում ունի: Այն ձևավորվել է ԵՄ-ի դատական իշխանության ներկայացուցիչների կողմից և կիրառվում է Եվրոպական Հանձնաժողովի և անդամ պետությունների իրավասու մարմինների կողմից համապատասխան գործեր քննելիս:

«Տնտեսվարող սուբյեկտ» հասկացությունը, սակայն, չի սահմանվում ինչպես Եվրոպական ընկերակցության հիմնադրման պայմանագրում, այնպես էլ լիսաբոնյան փոփոխություններից հետո: Այնուամենայնիվ, սա չափազանց կարևոր հասկացություն է, քանի որ միայն տնտեսվարող սուբյեկտների միջև համաձայնությունն է ընկնում Լիսաբոնի պայմանագրի 101-րդ հոդվածի կարգավորման տակ, իսկ 102-րդ հոդվածը կիրառվում է միայն տնտեսվարող սուբյեկտների կողմից ազդեցիկ դիրք գրավելու միջոցով չարաշահումների դեպքում:

Եվրոպական արդարադատության դատարանը Hofner and Elser v Macrotron GmbH⁵ գործում պարզաբանել է, որ «տնտեսվարող սուբյեկտ» հասկացությունը ներառում է ցանկացած կազմակերպարավական միավոր, որն զբաղված է տնտեսական գործունեությամբ՝ անկախ կազմակերպարավական միավորի իրավական կարգավիճակից և նրա ֆինանսավորման եղանակից:

Wouters v Algemene Raad van de Nederlandsche Orde van Advocate գործում դատարանն ասել է, որ պայմանագրի մրցակցությանը վերաբերող դրույթները չեն կիրառվում այն գործունեության նկատմամբ, որն իր բնույթով, իր նպատակով և խնդրո առարկա հանդիսացող կանոններով չի պատկանում տնտեսական գործունեության ոլորտին... կամ այն կապված է պետական մարմինների իրավասությունների իրականացման հետ⁶:

Տնտեսական գործունեությամբ զբաղված լինելու և անկախ իրավական կարգավիճակի հետ կապված ձևակերպումները կօգնեն հասկանալ «տնտեսվարող սուբյեկտ» հասկացությունը:

Hofner-ի գործում արտահայտված այն տեսակետը, որ ցանկացած կազմակերպարավական միավոր, որն զբաղված է տնտեսական գործունեությամբ, անկախ իր իրավական կարգավիճակից՝ կարող է որակվել որպես տնտեսվարող սուբյեկտ, իր արտահայտումն է գտել Եվրոպական արդարադատության դատարանի (այսուհետ նաև՝ Դատարան) բազմաթիվ վճիռներում և Հանձնաժողովի որոշումներում: Ընկերությունները և ընկերակցությունները կարող են որակվել որպես տնտեսվարող սուբյեկտներ, նման որակում կարող են նմանապես ստանալ նաև գյուղատնտեսական կոոպերատիվները⁷: Առևտրային ասոցիացիաները, որոնք զբաղված են տնտեսական գործունեությամբ, ևս կարող են համարվել տնտեսվարող սուբյեկտներ: Դրանից հետևում է, որ առևտրային ասոցիացիաների միջև համաձայնությունները ևս կարող են ընկնել Լիսաբոնի պայմանագրի 101-րդ հոդվածի կարգավորման տակ⁸: Փաստը, որ կազմակերպությունը չունի շահույթ ստանալու նպատակ կամ չունի տնտեսական նպատակ, չի ապարդակում այն որպես տնտեսվարող սուբյեկտ՝ պայմանով, որ այն վարում է որոշակի առևտրային կամ տնտեսական գործունեություն: Այս հիմքի վրա Հանձնաժողովը Distribution of Package Tours During the 1990 World Cup-ի⁹ գործով որակեց ՖԻՖԱ-ին՝ 1990 թվականի ֆուտբոլի աշխարհի առաջնության պատասխանատու մարմին, ինչպես նաև իտալական ֆուտբոլի ասոցիացիային և տեղական կազմակերպչական կոմիտեին որպես տնտեսվարող սուբյեկտներ՝ 81-րդ հոդվածի իմաստով¹⁰: Ֆիզիկական անձը բազմաթիվ իրավիճակներում ևս կարող է համարվել տնտեսվարող սուբյեկտ, սակայն ոչ այն դեպքերում, երբ ֆիզիկական անձը հանդես է գալիս որպես աշխատող, կամ անձնական սպառման (օգտագործման) համար ձեռք է բերում ապրանքներ կամ ծառայություններ:

Ինչպես արդեն նշել էինք, երկրորդ պնդումը կապված էր իրավական կարգավիճակի հետ: Եվրոպական արդարադատության դատարանը Hofner-ի գործում սահմանել էր, որ կազմակերպարավական միավորի իրավական կարգավիճակը որոշիչ չէ որպես տնտեսվարող սուբյեկտ որակելիս: Պետական մարմինները, ինչպիսիք են Hofner-ի գործում աշխատանքի տեղավորման գործակալությունը կամ Banchemo-ի¹¹ գործում Պետական մոնոպոլիաների անկախ վարչությունը (Autonomous Administration of State Monopolies) համարվեցին տնտեսական բնույթի գործունեությամբ զբաղվող՝

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

կապված համապատասխանաբար աշխատանքի գնման և ծխախոտի արտադրության շուկայում ապրանքների ու ծառայությունների առաջարկության հետ: Պետական սեփականություն հանդիսացող ընկերությունները կամ մարմինները, որոնք պետության կողմից լիազորված են համապատասխան իրավագործությամբ, և կվազի-կառավարական մարմինները, որոնք իրականացնում են տնտեսական գործունեություն, ևս կարող են լինել տնտեսվարող սուբյեկտներ:

Hofner-ի գործում առաջ քաշված բանաձևին հետագայում ավելացվեց այլ դրույթ՝ «ֆունկցիոնալ մոտեցումը»¹². կազմակերպչիրավական միավորը կարող է գործել որպես տնտեսվարող սուբյեկտ, եթե իրականացնում է իր ֆունկցիաները, բայց տնտեսվարող սուբյեկտ չէ, երբ իրականացնում է ուրիշների ֆունկցիաները: Օրինակ՝ Մեծ Բրիտանիայում տեղական իշխանությունները երբեմն կարող էին գործել իրենց հանրային իրավունքի շրջանակում «Պառլամենտի մասին» օրենքում սահմանված նպատակներին հասնելու համար, այս դեպքում դրանք տնտեսվարող սուբյեկտներ չեն: Բայց մեկ այլ դեպքում դրանք կարող են գործել որպես առևտրային միավորներ, որի դեպքում դրանք տնտեսվարող սուբյեկտներ են Լիսաբոնի պայմանագրի 101-րդ հոդվածի իմաստով¹²:

Ֆիզիկական անձինք կարող են համարվել տնտեսվարող սուբյեկտներ, եթե նրանք զբաղվում են տնտեսական գործունեությամբ: Մրցակցային կանոնները կիրառվելու են, օրինակ, առևտրային գործակալների նկատմամբ՝ բացառությամբ, երբ նրանք միայն կատարում են պրինցիպալի հրահանգները¹³, մաքսային գործակալների¹⁴, արտոնագրային հավատարմատարների, գյուտարարների նկատմամբ, ովքեր կարող են մտնել հակամրցակցային համաձայնությունների մեջ՝ կապված իրենց գյուտի օգտագործման հետ¹⁵ և այլն:

Ազատ (լիբերալ) մասնագիտությունների անդամները կարող են լինել տնտեսվարող սուբյեկտներ՝ Լիսաբոնի պայմանագրի 101-րդ հոդվածի իմաստով: Commission v Italy¹⁶ գործում ԵԱԳ-ն որոշեց, որ մաքսային գործակալներն Իտալիայում, ովքեր առաջարկում էին վճարովի ծառայություններ մաքսային ձևակերպումների կատարման դիմաց կապված ապրանքների ներմուծման, արտահանման կամ տարանցիկ փոխադրման հետ, տնտեսվարող սուբյեկտներ են: Այն մերժեց իտալական կառավարության այն փաստարկը, որ մաքսային գործակալների գործունեությունը մտավոր

բնույթ է կրում և պահանջում է այնպիսի պայմաններով թույլտվություն և համաձայնություն, որից բխում է, որ նրանք տնտեսվարող սուբյեկտներ չեն:

Տնտեսվարող սուբյեկտների ասոցիացաները, անկախ իրենց իրավասուբյեկտությունից, ևս համարվում են Լիսաբոնի պայմանագրի 101-րդ և 102-րդ հոդվածների սուբյեկտներ, եթե իրականացնում են առևտրային գործունեություն և իրենց նախաձեռնությամբ կարող են գործողություններ կատարել: Ասոցիացիաները կարող են պատասխանատվության ենթարկվել ցանկացած գործողության համար, որը խախտում է մրցակցային օրենսդրությունը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նրա անդամներն ասոցիացիան օգտագործում է որպես գործիք՝ իրենց հակամրցակցային վարքագիծը կորոդինացնելու համար: Սակայն տուգանքներ կարող են դրվել այն կազմակերպությունների վրա, որոնք ունեն իրավասուբյեկտություն (որպեսզի կարողանան հարկադրել): Ասոցիացիայի իրավասուբյեկտության բացակայության դեպքում տուգանքի կարող են ենթարկվել նրա անդամները իրենց կատարած խախտման սահմաններում:

Պետությունը, պետական մարմինները և մարմինները, որոնց նկատմամբ պետությունն ունի հատուկ կամ բացառիկ իրավունքներ, ևս կարող են համարվել տնտեսվարող սուբյեկտներ այն ծավալով, որքանով նրանք ընդգրկված են գործարար հարաբերությունների մեջ՝ անկախ նրանից, թե արդյոք վերջիններս օժտված են իրավաբանական անձի կարգավիճակով, թե՛ ոչ: Լիսաբոնի պայմանագրի 101-րդ հոդվածը չի կիրառվում պետական գործողությունների նկատմամբ՝ անկախ նրանից, թե այդ գործողություններն իրականացվել են անմիջապես պետության կողմից, թե փոխանցվել են պետական կամ մասնավոր մարմնի: Սակայն ոչ պետական գործողությունները՝ անկախ նրանից՝ իրականացվել են պետության, թե պետական կամ մասնավոր մարմնի կողմից, 101-րդ հոդվածի կարգավորման առարկա են: Օրինակ՝ Հանձնաժողովը մրցակցային կանոնները կիրառեց կառավարության կողմից նշանակված գինի արտադրողների և վաճառողների խորհրդի նկատմամբ, որը սահմանել էր կոնյակի գինը, ազգային հեռահաղորդակցության նկատմամբ, որը, հանդիսանալով մենաշնորհի որոշակի ծառայություններ մատուցելու ոլորտում, կատարել էր հակամրցակցային գործողություններ, պետական սեփականություն հանդիսացող բանկերի, երկաթգծային տրանսպորտի մար-

միների և փոստային մարմինների նկատմամբ¹⁷:

Չնայած նշվածից պարզ է, որ պետական սեփականություն հանդիսացող ընկերությունները կամ պետական մարմինները կարող են որակվել որպես տնտեսվարող սուբյեկտներ որոշակի նպատակների համար, սակայն դա չի վերաբերում այն դեպքերին, երբ վերջիններս գործում են պետական իշխանության անունից կամ որպես պետական մարմին:

Արդյոք աշխատողները և արհմիությունները համարվում են տնտեսվարող սուբյեկտներ: Jean Claude Becu¹⁸ գործում ԵԱԳ-ն որոշեց, որ աշխատողները, որոնք իրենց աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվելու ժամանակաշրջանում ներառված են տնտեսվարող սուբյեկտում, որի աշխատողներն իրենք են և կազմում են տնտեսվարող միավորի մաս, չեն հանդիսանում տնտեսվարող սուբյեկտ՝ ԵՄ-ի մրցակցային օրենսդրության տեսանկյունից, սակայն նախկին աշխատողները, որոնք իրականացնում են իրենց անկախ բիզնեսը, կհամարվեն: Albany գործում ԵԱԳ-ն առնչվում էր մի խնդրի հետ, երբ գործատուներին ներկայացնող կազմակերպությունները և աշխատողները միասնաբար համաձայնել էին հիմնադրել միասնական կենսաթոշակային ֆոնդ, որը պատասխանատու կլիներ լրացուցիչ կենսաթոշակային ծրագրերի համար և պահանջում էին պետական մարմիններից ֆոնդի մասնակցությունը դարձնել պարտադիր: Դատական գործում առկա հարցերից մեկը կայանում էր նրանում, թե նման կազմակերպությունների միջև առկա համաձայնությունն արդյոք համաձայնություն է տնտեսվարող սուբյեկտների միջև: ԵԱԳ-ն գտավ, որ՝ ոչ: Խնդիրը կայանում է նրանում, որ Լիսաբոնի պայմանագրի գործառույթներն ուղղված են ոչ միայն մրցակցային քաղաքականությանը: Այն, զուգահեռ բազմաթիվ այլ ոլորտների, ներառում է նաև սոցիալական ոլորտը, որի նպատակը սոցիալական ոլորտում ԵՄ-ի և նրա անդամ պետությունների սերտ համագործակցությունն է, մասնավորապես ասոցիացիաների իրավունքներին և աշխատողների ու գործատուների միջև կնքվող կոլեկտիվ պայմանագրերին վերաբերող հարցերում:

Լիսաբոնի պայմանագրի 101-րդ հոդվածը չի կիրառվում այն տնտեսվարող սուբյեկտների միջև համաձայնությունների նկատմամբ, որոնք մեկ տնտեսական կազմակերպություն են: Սրա ամենավառ օրինակները կարող են հանդիսանալ հիմնական և դուստր ընկերությունների միջև հա-

մաձայնությունները, պրինցիպալի և գործակալի միջև հարաբերությունները կամ համանմանորեն կապալառուի և ենթակապալառուի հարաբերությունները:

Այսպիսով, 101-րդ հոդվածը, որպես կանոն, չի կիրառվում հիմնական և դուստր ընկերությունների միջև ներկորպորատիվ համաձայնագրերի կամ պրակտիկայի վրա, եթե նրանք այնպիսի տնտեսվարող միավոր են, որում դուստրը չունի իրական անկախություն՝ որոշելու իր գործողությունների ուղղությունը շուկայում, և եթե համաձայնությունները կամ պրակտիկան վերաբերում են միայն խմբի ներսում խնդիրների տեղաբաշխմանը: Այսինքն՝ Լիսաբոնի պայմանագրի 101-րդ հոդվածը չի տարածվի տնտեսվարող սուբյեկտների համաձայնությունների վրա, եթե նրանց հարաբերություններն այնքան սերտ են, որ տնտեսականորեն կարելի է նրանց համարել մեկ միասնական կազմակերպություն: Նման դեպքերում մենք ավելի շատ գործ ունենք կազմակերպության ներսում գործառույթների տեղաբաշխման հետ, քան անկախ կազմակերպությունների միջև կայացված համաձայնությունների: Beguelin Import v GL Import Export¹⁹ գործում ԵԱԳ-ն որոշեց, որ Պայմանագրի 81(1)-րդ հոդվածը չի կիրառվում համաձայնությունների նկատմամբ, որոնք կայացվել են հիմնական և նրա դուստր ընկերությունների միջև, որը չնայած հանդիսանում է առանձին իրավաբանական անձ, սակայն որևէ տնտեսական անկախությամբ օժտված չէ:

Այսպիսով, մի քանի բիզնեսներ կարող են համարվել մեկ «տնտեսական կազմակերպություն», եթե նրանց միջև գոյություն ունեն վերահսկման հարաբերություններ: Սակայն այս հանգամանքը չի տարածվում համատեղ ձեռնարկությունների վրա: Համաձայնությունները, կնքված մեկ հիմնական ընկերության և համատեղ ձեռնարկության միջև, ընկնում են 101(1)-րդ հոդվածի կարգավորման ներքո, քանի որ համատեղ ձեռնարկությունները առանձին կազմակերպություններ են: Նմանապես մեկ տնտեսական միավոր չեն համարվի մի քանի պետական սեփականություն հանդիսացող ընկերությունները, եթե նրանք կառավարվում են տարբեր պետական մարմինների կողմից, որոնք չեն համակարգում իրենց գործողությունները գործառույթների ներքին բաժանման հիման վրա²⁰:

Հիմնական հարցը կայանում է նրանում, թե արդյոք կայացված համաձայնության կողմերն ան-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

կախ են իրենց որոշումներն ընդունելիս, թե նրանցից մեկն ունի բավականաչափ վերահսկողություն մյուսի գործերի նկատմամբ, և թե վերջինս չունի «իրական անկախություն» իր գործողությունների ընթացքը որոշելիս:

«Ijsselcentrale»²¹ գործում Հանձնաժողովը գտավ, որ այն հանգամանքը, որ արտադրողները կազմում են հանրային էլեկտրաէներգիայի մատակարարման միասնական համակարգի մի մասը, չի նշանակում, որ նրանք մեկ տնտեսվարող սուբյեկտ են. նրանք առանձին իրավաբանական անձինք են, չեն կառավարվում մեկ ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից և ունակ են անկախ որոշելու իրենց վարքագիծը:

Եթե դուստր ընկերությունը դառնում է հիմնական ընկերությունից անկախ, օրինակ՝ եթե այն վաճառվում է, համաձայնությունը երկու ընկերությունների միջև կարող է ընկնել Լիսաբոնի պայմանագրի 101(1)-րդ հոդվածի կարգավորման տակ այն պահից, երբ հիմնական ընկերություն-դուստր ընկերություն փոխհարաբերությունները դադարում են:

Կարելի է եզրահանգել, որ չնայած այն հանգամանքի, որ տնտեսվարող սուբյեկտների հասկացության սահմանումը ԵՄ-ի տնտեսական մրցակությանը վերաբերող իրավական ակտերում չի սահմանվում, սակայն այն պարզաբանվում է բազմաթիվ դատական մախադեպերով: Վերլուծելով «տնտեսվարող սուբյեկտ» հասկացության շուրջ ձևավորված տեսակետները և մոտեցումները՝ կարելի է ասել, որ տնտեսվարող սուբյեկտներ են ֆիզիկական անձինք և բոլոր կազմակերպարավական միավորները՝ անկախ կազմակերպարավական միավորի իրավական կարգավիճակից և նրա ֆինանսավորման եղանակից, որոնք զբաղված են տնտեսական գործունեությամբ: Ընդ որում, ԵՄ-ի մրցակցային օրենսդրությունը չափանիշներ է սահմանել նաև տնտեսվարող սուբյեկտների կողմից իրականացվող գործունեության համար. այն պետք է պատկանի տնտեսական գործունեության ոլորտին և կապված չլինի պետական մարմինների իրավասությունների իրականացման հետ: Այսպիսով, ԵՄ-ի մրցակցային օրենսդրության մեջ «տնտեսվարող սուբյեկտ» հասկացությունը համընդգրկում և բազմաբովանդակ հասկացություն է:

Ի տարբերություն ԵՄ-ի օրենսդրության՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը սահմանում է տնտեսվարող սուբյեկտի հասկացությունը: «Տնտեսական մրցակցության պաշտպա-

նության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը²² հիմնական հասկացությունների շարքում սահմանել է նաև «տնտեսվարող սուբյեկտ» հասկացությունը (4-րդ հոդված): Ընդ որում, «տնտեսվարող սուբյեկտ» հասկացությունը «Տնտեսական մրցակության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունման պահից ենթարկվել է որոշակի փոփոխությունների: «Տնտեսական մրցակության պաշտպանության մասին» «Հայաստանի Հանրապետության օրենքի մայր տարբերակում «տնտեսվարող սուբյեկտ» հասկացությունը սահմանված էր անհատ ձեռնարկատեր, առևտրային կազմակերպություն, ինչպես նաև անձանց խումբ»: Այնուհաստ է, որ նման ձևակերպումը չի անդրադառնում մրցակցային գործընթացում ներգրավված բոլոր սուբյեկտներին: 2007 թվականի փետրվարի 22-ին ընդունված «Տնտեսական մրցակության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով²³ «տնտեսվարող սուբյեկտ» հասկացությունը սահմանվեց հետևյալ կերպ. տնտեսվարող սուբյեկտ՝ ֆիզիկական անձ (այդ թվում՝ անհատ ձեռնարկատեր), իրավաբանական անձ, այլ կազմակերպություն, դրա ներկայացուցիչ, ներկայացուցչություն կամ մասնաճյուղ, անձանց խումբ: Այս ձևակերպմամբ ընդարձակվեց տնտեսվարող սուբյեկտ հանդիսացող անձանց շրջանակը (օրինակ՝ առևտրային կազմակերպության փոխարեն արդեն օգտագործվում էր իրավաբանական անձ հասկացությունը, որն ընդգրկում է ինչպես առևտրային, այնպես էլ ոչ առևտրային կազմակերպությունները): Սակայն պետք է նշել, որ 2007 թվականի ձևակերպումն էլ գերծ չէր թերություններից: Այն չէր ներառում պետական մարմիններին, որոնք ևս կարող են հանդիսանալ տնտեսվարող սուբյեկտներ: Նշենք, որ պետական մարմին հասկացությունը «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն առանձին է սահմանում: Բացի այդ, 2007 թվականի ձևակերպման մեջ որպես տնտեսվարող սուբյեկտ էին հանդես գալիս նաև ներկայացուցիչը, ներկայացուցչությունը, մասնաճյուղը:

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի²⁴ 318-րդ հոդվածի 1-ին մասի՝ մեկ անձի (ներկայացուցչի) կողմից ուրիշ անձի (ներկայացվողի) անունից լիազորագրի, օրենքի կամ դրա համար լիազորված պետական մարմնի կամ տեղական ինք-

նակառավարման մարմնի ակտի վրա հիմնված լիազորությունների ուժով կնքված գործարքը քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ է ստեղծում, փոփոխում ու դադարեցնում է անմիջականորեն ներկայացվողի համար: Տրված բնորոշումից երևում է, որ ներկայացուցիչն այն անձն է, որն իրեն վերապահված լիազորությունների շրջանակում հանդես է գալիս երրորդ անձանց հետ փոխհարաբերություններում՝ ներկայացվողի համար առաջացնելով իրավունքներ և պարտականություններ: Ներկայացուցչի իրավական վիճակն առանձնահատուկ է այնքանով, որ նա գործում է ոչ միայն ի շահ ուրիշի (ներկայացվողի), այլև նրա անունից: Այդ պատճառով ներկայացուցիչներ չեն համարվում այն անձինք, որոնք թեև գործում են ի շահ ուրիշի, բայց իրենց անունից (առևտրային միջնորդները, մրցութային կառավարիչները, կտակարարները և այլն), ինչպես նաև ապագայում հնարավոր գործարքների վերաբերյալ բանակցություններ վարելու լիազորությամբ օժտված անձինք²⁵:

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 61-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ «Ներկայացուցչություն է համարվում իրավաբանական անձի գտնվելու վայրից դուրս տեղակայված նրա առանձնացված ստորաբաժանումը, որը ներկայացնում է իրավաբանական անձի շահերը և իրականացնում դրանց պաշտպանությունը»:

Մասնաճյուղ է համարվում իրավաբանական անձի գտնվելու վայրից դուրս տեղակայված նրա առանձնացված ստորաբաժանումը, որն իրականացնում է նրա բոլոր գործառնությունները կամ դրանց մի մասը՝ ներառյալ ներկայացուցչության գործառնությունները:

Այսպիսով, ներկայացուցչությունները և մասնաճյուղերն իրավաբանական անձինք չեն, գործում են իրավաբանական անձի հաստատած կանոնադրությունների հիման վրա, նրանց ղեկավարները նշանակվում են իրավաբանական անձի կողմից և գործում են լիազորագրի հիման վրա: Ներկայացուցչությունների և մասնաճյուղերի պարտավորություններով պատասխանատու է ստեղծող իրավաբանական անձը:

Ստացվում է, որ ներկայացուցիչը, ներկայացուցչությունները կամ մասնաճյուղերը հանդես են գալիս մեկ ուրիշի անունից և վերջինիս համար էլ ձեռք են բերում իրավունքներ և ստանձնում պարտականություններ: Նման պայմաններում անհասկանալի է, թե ինչպես են ներկայացուցիչները, ներկայացուցչությունները կամ մասնաճյուղերը հան-

դիսանալու տնտեսավարող սուբյեկտներ՝ տնտեսական մրցակցության օրենսդրության իմաստով:

2011 թվականի ապրիլի 12-ին ընդունված «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով²⁶ «տնտեսավարող սուբյեկտ» հասկացությունը ենթարկվեց որոշակի փոփոխությունների: Այսպիսով, «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի գործող տարբերակում տնտեսավարող սուբյեկտ են համարվում արտոնագրային վճար վճարողները, անհատ ձեռնարկատերերը, իրավաբանական անձինք, այլ կազմակերպությունները, դրա ներկայացուցիչները, ներկայացուցչությունները կամ մասնաճյուղերը, անձանց խմբերը, առևտրային ցանցերը: «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված համակենտրոնացման դեպքում տնտեսավարող սուբյեկտ է համարվում նաև ֆիզիկական անձը: Ինչպես նկատում ենք, «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2007 թվականի խմբագրության մեջ առկա խնդիրներն այստեղ ևս գոյություն ունեին: 2011 թվականին կատարված փոփոխությունների իմաստը կայանում էր նրանում, որ ֆիզիկական անձինք որպես այդպիսին չէին կարող հանդիսանալ տնտեսավարող սուբյեկտներ տնտեսական մրցակցության որևէ ոլորտում՝ բացառությամբ համակենտրոնացումների, քանի որ այլ բնագավառներում հանդես գալու համար նրանք պետք է զբաղվեին առևտրային գործունեությամբ, ինչի համար պետք է լինեին անհատ ձեռնարկատեր: Դրա հետ կապված՝ ֆիզիկական անձինք՝ որպես տնտեսավարող սուբյեկտ նախատեսվեցին միայն համակենտրոնացման համար, իսկ դրա փոխարեն մտավ «արտոնագրային վճար վճարող» հասկացությունը: Խնդիրը կայանում էր նրանում, որ «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի²⁷ համաձայն արտոնագրային վճար վճարող կարող են հանդիսանալ նաև որոշակի գործունեության տեսակներ իրականացնող անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձինք: Բացի այդ փոփոխությունից «տնտեսավարող սուբյեկտ» հասկացությունը լրացվեց նաև «առևտրային ցանց» արտահայտությամբ: Առևտրային ցանց է հանդիսանում երկու կամ ավելի առևտրային օբյեկտների

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

համախումբը, որոնք գտնվում են ընդհանուր կառավարման ներքո կամ գործում են միևնույն առևտրային նշանի կամ անհատականացման այլ միջոցի ներքո: Սրա էությունը կայանում է նրանում, որ տնտեսվարող սուբյեկտ է հանդիսանում ոչ թե իրավաբանական անձը, այլ վերջինիս պատկանող առևտրային ցանցը: Գծվար է համաձայնել նման մոտեցման հետ, քանի որ առևտրային ցանցի մեջ մտնող առևտրային օբյեկտներն օժտված չեն տնտեսական ինքնուրույնությամբ և չեն կարող որոշել իրենց տնտեսական գործունեության ուղղությունը: Սակայն նման մոտեցում օրենսդիրը դրսևորել է՝ ել-

նելով գործնականում առաջացած խնդիրներից: Գործնականում խոչընդոտներ էին առաջանում իրավաբանական անձանց մրցակցային օրենսդրության խախտման համար պատասխանատվության ենթարկելու ժամանակ: Այդ իսկ պատճառով օրենսդիրն ընտրեց նման մոտեցում, որպեսզի այս կամ այն կերպ կարողանա զսպել տնտեսվարող սուբյեկտներին՝ չնայած այն հանգամանքի, որ դեռևս պարզ չէ, թե նոր մոտեցումը գործնականում ինչպես է կիրառվելու:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Տեսական գրականություն

1. Բարսեղյան Ս. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, առաջին մաս, երրորդ հրատարակություն, Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան 2006, 926 էջ:
2. Дубовицкая Е. А. Европейское корпоративное право: Свобода перемещения компаний в Европейском сообществе.- М.: Волперс Клувер, 2004, 149 стр. <http://www.twirpx.com/file/472279/> (26.03.2012).
3. Пилецкий А. Е. Теоретические проблемы предпринимательской правосубъектности: автореф. Дис. Док-ра юрид. Наук. М., 2006.
4. Clifford A. Jones, M. Phil. Private enforcement of antitrust law in the EU, UK and USA. Oxford university press, 236 p.
5. Richard Wish Competition Law Fifth edition, Oxford University Press 2005. 989 p.
6. Lennart Ritter, W. David Braun European Competition Law, A Practitioner's Guide, Third edition, Kluwer International Law, 2004, 949 p.

Իրավական ակտեր

7. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք՝ ընդունված 1998 թվականի մայիսի 5-ին, www.arlis.am:
8. ՀՀ օրենքը տնտեսական մրցակցության պաշտպանության մասին, ընդունված է 2000 թվականի նոյեմբերի 6-ին, www.arlis.am (փոփոխությունները տես նույն տեղում):
9. ՀՀ օրենքն արտոնագրային վճարների մասին՝ ընդունված 2010 թվականի դեկտեմբերի 22-ին, www.arlis.am:
10. Consolidated version of the Treaty on the Functioning of the European Union, Official Journal of the European Union C 115/47, 9.5.2008 <http://eur-lex.europa.eu/LexUriServ/LexUriServ.do?uri=OJ:C:2008:115:0047:0199:en:PDF> (26.03.2012).

Իրավակիրառ պրակտիկա

11. Case C-41/90 [1991] ECR I-1979, [1993] 4 CMLR 306.
12. UEFA's Broadcasting Regulations OJ [2001] L 171/12, [2001] 5 CMLR 654.
13. Commission Decision of 27 October 1992 OJ [1992] L 326/31, [1994] 5 CMLR 177.
14. C-387/93 [1995] ECR I-4663, [1996] 1 CMLR 829.
15. Eco-Emballages OJ [2001] L 233/37, [2001] 5 CMLR 1096.
16. Peugeot, ECJ June 16, 1994, 1994 ECR I-2727.
17. COAPI, D.Comm. Jan. 30, 1995, 1995 OJ L 122/37.
18. Commission Report on Competition in Professional Services, COM(2004)83 final.
19. Vaessen/Moris, D.Comm. Jan 10, 1979, 1979 OJ L 19/32.
20. Case C-35/96 [1998] ECR I-3851, [1998] 5 CMLR 889.
21. Case C-22/98 [1999] ECR I-5665, [2001] 4 CMLR 968.
22. Case 22/71 [1971] ECR 949, [1972] CMLR 81.
23. Usinor/Sacilor-Normandie, D.Comm. April 2, 1982, 1982 OJ L 139/1.
24. OJ [1991] L 28/32, [1992] 5 CMLR 154.

Ինտերնետային կայքեր

25. www.europa.eu
26. www.arlis.am
27. www.twirpx.com

¹ Consolidated version of the Treaty on the Functioning of the European Union, Official Journal of the European Union C 115/47, 9.5.2008.

² Տե՛ս Дубовицкая Е. А. Европейское корпоративное право: Свобода перемещения компаний в Европейском сообществе.- М.: Волтерс лувер. 2004.- С.6-7.

³ Տե՛ս Пилецкий А. Е. Теоретические проблемы предпринимательской правосубъектности: автореф. Дис. Док-ра юрид. Наук. М., 2006 –С.9.

⁴ Տե՛ս Clifford A. Jones, M. Phil. Private enforcement of antitrust law in the EU, UK and USA. Oxford university press. P. 25.

⁵ Case C-41/90 [1991] ECR I-1979, [1993] 4 CMLR 306, para 21.

⁶ Տե՛ս Richard Wish Competition Law Fifth edition, Oxford University Press 2005. P. 80-81

⁷ Տե՛ս օրինակ Case 61/80 Cooperative Stremesel-en Kleureselfabriek v Commission [1981] ECR 851, [1982] 1 CMLR 240.

⁸ Տե՛ս օրինակ Case 71/74 FRUBO v Commission [1975] ECR 563, [1975] 2 CMLR 123.

⁹ Commission Decision of 27 October 1992 OJ [1992] L 326/31, [1994] 5 CMLR 177, paras 13-14.

¹⁰ UEFA's Broadcasting Regulations OJ [2001] L 171/12, [2001] 5 CMLR 654, para 47.

¹¹ Case C-387/93 [1995] ECR I-4663, [1996] 1 CMLR 829, para 50.

¹² Տե՛ս Eco-Emballages OJ [2001] L 233/37, [2001] 5 CMLR 1096, para 70: French local authorities were acting as undertakings when entering into contracts in relation to the collection of household waste.

¹³ Peugeot, ECJ June 16, 1994, 1994 ECR I-2727, paras 33-36

¹⁴ COAPI, D.Comm. Jan. 30, 1995, 1995 OJ L 122/37, paras 32-33, 36-47; տես Commission Report on Competition in Professional Services, COM(2004)83 final

¹⁵ Vaessen/Moris, D.Comm. Jan 10, 1979, 1979 OJ L 19/32, 34.

¹⁶ Case C-35/96 [1998] ECR I-3851, [1998] 5 CMLR 889.

¹⁷ Տե՛ս Lennart Ritter, W. David Braun European Competition Law, A Practitioner's Guide, Third edition, Kluwer International Law, 2004. P. 51.

¹⁸ Case C-22/98 [1999] ECR I-5665, [2001] 4 CMLR 968.

¹⁹ Case 22/71 [1971] ECR 949, [1972] CMLR 81.

²⁰ Ֆրանսիական պետական երկու պողպատածուլական ընկերությունների միաձուլման գործում Հանձնաժողովը գտավ Փարիզի պայմանագրի 66-րդ հոդվածի համաձայն թույլտվության ստացման անհրաժեշտությունը.

Usinor/Sacilor-Normandie, D.Comm. April 2, 1982, 1982 OJ L 139/1, 3.

²¹ OJ [1991] L 28/32, [1992] 5 CMLR 154, paras 22-24.

²² ՀՀ օրենքը տնտեսական մրցակցության պաշտպանության մասին՝ ընդունված 2000 թվականի նոյեմբերի 6-ին. www.arlis.am

²³ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 2007 թվականի փետրվարի 22-ին, www.arlis.am

²⁴ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք՝ ընդունված 1998 թվականի մայիսի 5-ին, www.arlis.am

²⁵ Տե՛ս Բարսեղյան Ս., Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, առաջին մաս, երրորդ հրատարակություն, Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան 2006, էջ 390:

²⁶ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու» մասին ՀՀ օրենք՝ ընդունված 2011 թվականի ապրիլի 12-ին, www.arlis.am

²⁷ ՀՀ օրենքն արտոնագրային վճարների մասին՝ ընդունված 2010 թվականի դեկտեմբերի 22-ին, www.arlis.am

РЕЗЮМЕ

Субъекты конкурентного права в Европейском Союзе

В статье делается попытка представить субъекты вовлеченные в конкурентные правоотношения, выявить особенности определения и регулирования их деятельности. В работе особое внимание уделяется соотношению понятий «хозяйствующие субъекты», «юридическое лицо», «компания», а так же представляется круг лиц хозяйствующих субъектов с точки зрения законодательства ЕС о конкуренции и особенностях их участия в конкурентных правоотношениях. Кроме того, в работе представлены субъекты закона Республики Армении о конкуренции.

SUMMARY

The subjects of the competition Law in the European Union

The article is aimed at presenting the undertakings concerned in the competition relationships, study the peculiarities of their disclosure and the regulation of their conduct. The study pays special attention to the correlation of the concepts «undertaking», «legal person», «company», then presents the scope of the persons concerned undertakings in the view of EU competition legislation and the peculiarities of their participation in competition relations. In addition the work represents competition law subjects of the Republic of Armenia.